



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ	1
ԽՍԲԱԳՐԱԿԱՆ	2
5-րդ ԴԱՐՈՒ ՄՇՏԱՀՈՒՆՉ ՊԱՏԳԱՄԸ	2
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	4
Ինչպե՞ս վերադարձնել մեր ժողովրդին «Մոմի-Ռիմ ԶԱՅՆԸ»	4
ԿԻՊՐԱՀԱՅ	6
ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԿԻՊՐՈՍԻ ՄՕՏ ՀՀ ՆՈՐ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ	6
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԻՊՐՈՍԻ ՄՕՏ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ	7
ԿԻՊՐՈՍԻ ՀԱՄԱՐԵՆԻ Ս. ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔԸ ԽԻՍՏ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ	8
ՅՕԴՈՒԱԾՆԵՐ	9
Հայրենիքի ամենամեծ սպառնալիքը մենք Ինքնե՛րս ենք՝ մեր հայրենաքանդ անմիաբանությամբ	9
ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ	17
«ՀԱՅ ԸԼԼԱԼԸ ԻՆՔՆՈՒԹԵԱՆՍ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍՆ Է»	19
ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԱԲԱՆԱՆ ԻՐԵՆՑ ԴՈՒՆԵՐԸ – (3)	24
11/10/2025	24
ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՊԱՏՐԱՐՔԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ ԿԸ ՄԵՐԺԷ ԻՍՐԱՅԷԼԱՅԻ ՆԵՐԴՐՈՂԻՆ ՀԵՏ ԿՆՔՈՒԱԾ ՎԱՐՋԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ	27
ՏԵՍԱԿԷՏ	29
ՀՈՂԱԿՏՈՐ, ՀԱՅՐԵՆԻՔ	29
ՀԱՅՐԵՆԻՔԸ Ո՞ՐԻ ՎԱՐԴԱԳՈՅՆ Է ԵՒ Ո՞ՐԻ... ՍՈՒՐԱԳՈՅՆ	32
ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՆՋԸ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՀՈԳԵՄՏԱԽՈՐ ԴԱՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԸ	36
ՀՆԴԻԿՆԵՐԷՆ ՍՈՐՎԵԼԻՔ ՈՒՆԻ՞Ք... ..	38
ԳԵՈՐԳ ՄԱՆՃԻԿԵԱՆԻ «ՅՈՒՇԵՐ»Ը	41
ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ	43
ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ	43
ԱՐԱՄ ՄԵՓԵԹՃԵԱՆԻ ԱՆՍՈՒԱՅ ՅԻՇԱՏԱԿԻՆ	48
Մահուան 5-րդ տարելիցին արիթով	49
ՄԵԼԻՆԷ ԱՐԱՄ ՄԵՓԵԹՃԵԱՆ	49
ԲՈՅՐԸ	50
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ	51
ԱՆԾԱՆՕԹՈՒՀԻՆ	53
ԱԿՆԹԱՐԹՆԵՐ	55

ՔԱՌԵԱԿՆԵՐ..... 57

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

5-ԲԴ ԴԱՐՈՒ ՄՇՏԱՀՈՒՆՉ ՊԱՏԳԱՄԸ



405 թուականին, Մեսրոպ Մաշտոց ամբողջական աջակցութեամբը Վռամշապուհ արքայի եւ Սահակ կաթողիկոսի կատարեց հայոց գիրերու գիտը: Ան իրաւամբ դարձաւ «Հայ դարերու դիմաց կեցող աղամանդեայ ապառաժ», հայ ազգին պարգեւելով իր ինքնութեան անձնագիրը, ինքնաճանաչման բանալին, ինքնապաշտպանութեան հզօրագոյն

զէնքը բոլոր ժամանակներուն համար ալ:

Հայոց գիրերը հնարաւորեցին Աստուածաշունչի թարգմանութիւնը, որ կոչուեցաւ «Թարգմանի Թարգմանչաց» իր կատարելութեան հասնող որակով ու մակարդակով: Հայոց գիրերով ծնունդ առին հայ մատենագրութիւնն ու գրականութիւնը, հայ դպրոցներն ու գիրի օճախները... հոգիներն ու դարերը կամրջելով իրարու, ազգի շարունակական երթը ապահովելով գիրով հաստատագրուած շարունակականութեամբ:

Հայոց գիրերով թափ առաւ մշակութային հզօր շարժում, հոգեմտաւոր յեղափոխութիւն, 5-րդ դարու Ոսկեդարը, ազգային նոր ինքնագիտակցութիւն եւ զարգացում պարգեւելով հայութեան:

Հայոց գիրերով ստեղծագործեցին մեր Թարգմանիչ Հայրերը, որոնք աստենի համաշխարհային գրական գանձերը հայերէնի թարգմանելով ընդարձակեցին հայութեան մտահորիզոնը եւ տեսադաշտը:

Ռոպէր Հատտէճեան մեծ հայը կ'արձանագրէ. «...Այսօր աշխարհի իւրաքանչիւր կէտին վրայ, ուր հայկական դպրոց մը կայ, աշակերտ մը Մեսրոպեան տառերով մկրտուած կ'ըլլայ այն պահուն երբ իր մատը կը դնէ Այբուբենին վրայ եւ կ'ըսէ- ԱՄԻԿԱ ԱՅՔ Է...եւ ասիկա Հայ Քրիստոնեայ տղուն երկրորդ մկրտութիւնն է ... Ս. Մեսրոպ Մաշտոցին կողմէ օրհնուած Միւռնով»:

Լեզուն մեր լեզուամտածողութիւնն ու տեսակն է այս աշխարհիս խճանկարին մէջ, լեզուն մեր ժողովուրդն է, մեր ազգն է, մեր պետականութիւնը, հայոց անցեալը, ներկան ու ապագան:



Հայոց գիրերով ծնունդ առաւ ամբողջ փաղանգը հայոց Մեծերու, որոնք իրենց ստեղծած գրականութեամբ սերունդներ դաստիարակեցին, դառնալով հայ ազգի մտքի եւ հոգիի ջահերը: Թուենք անոնցմէ պատմիչներ՝ Ագաթանգեղոսը, Փաւստոս Բիւզանդը, Եղիշէն, Ղազար Փարպեցին, Մովսէս Խորենացին, Կորիւնը: Փիլիսոփաներէն՝ Դաւիթ Անյաղթը, գիտնականներէն՝ Անանիա Շիրակացին, Գրիգոր Տաթևացին, օրէնսդիր Մխիթար Գոշը եւ այսպէս շարունակ...: Քնարերգակներէն՝ Գրիգոր Նարեկացին մասնաւորաբար: Անոնց յաջորդեցին նորանոր Մեծերը մինչեւ մեր օրերը:

Հայոց Մեծերու ստեղծած գրական ժառանգութիւնը հոգեմտաւոր, իմաստութեան, աւանդութեանց ուղեցոյց փարոս եւ ոգեշնչման աղբիւր դարձաւ իրերայաջորդ սերունդներուն՝ հայոց պատմութեան մատախլապատ եւ փոթորկալից ժամանակներուն մասնաւորապէս, ազգային-ազատագրական ոգի ներշնչեց, պայքարի ու մաքառման գիտակցութիւն ու կորով, հայօրէն յարատեւելու անկոտրում կամք ու արժանապատւութիւն:

Ի զուր չէ որ հայերէնի թարգմանուած առաջին նախադասութիւնը եղաւ. «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, Իմանալ զբանն հանճարոյ»:

Ճանաչողութիւն եւ Իմաստութիւն:

Այսօր 21-րդ դարուն, տակնուվրայ է մեր «քաղաքակիրթ» աշխարհը: Շրջուած են դարերու քննութիւնը բռնած բարոյական, հոգեմտաւոր արժէքներն ու աւանդութիւնները: Բիրտ ոյժը մամոնայի ոյժին հետ միատեղ կը կազմաքանդեն քաղաքակրթութիւններ, հայրենիքներ, կը հրահրեն պատերազմներ, կը գործադրեն ցեղասպանութիւններ քիչ մը ամէն տեղ, ոտքի կոխան ընելով մարդկային տարրական իրաւունքներ ու արդարութիւն, ազատ ապրելու հնարաւորութիւն եւ կարելիութիւն, չինայելով ծեր ու մանուկ, կին ու երէխայ: Գազանը արթնցած է մարդուն մէջ եւ կը խժոէ ամէն սրբութիւն ու արժէք: Եւ այս բոլորը կը կատարուին օրը ցերեկով, աշխարհին ի տես: Տեղեկատւութեանց տեղատարափին եւ խառնաշփոթին մէջ, այնքան դժուար է յաճախ ճիշդ կողմնորոշուիլ, իրաւն ու ճիշդը՝ սուտէն ու կեղծէն զատորոշելը: Իսկ արագընթաց փոփոխուող աշխարհին մէջ, արհեստագիտական գլխապտոյտ պատճառող նորարարութիւնները կը հրամցուին որպէս կրթական բարձր յառաջընթաց...

Եւ տակաւ հոգեզուրկ կը դառնայ աշխարհը, մեծ միտքերու փայլատակումներու, մտքի լուսաստուններու ծարաւով տոչորուն:

Քառասային այս իրավիճակին մէջ, մենք դարձեալ պիտի դիմենք մեր ՄԵԾԵՐՈՒՆ, որոնք կը մնան մշտահոս աղբիւրը ԻՆՔՆԱՃԱՆԱԶՈՒՄԻ եւ ԻՄԱՍՏՈՒԹԵԱՆ, ինչպէս արտայայտուած է մեր Թարգմանիչներու թարգմանած առաջին նախադասութեան մէջ: Մենք պիտի չկորսնցնենք մեր ԿՈՂՄՆԱՅՈՅՑԸ, մեր ՏԵՍԼԱԿԱՆԸ: Վառ պիտի պահենք ու ապրեցնենք մեր լեզուն, հայ գիրն ու գրականութիւնը, հայ մշակոյթը, հայ հոգեմտաւոր արժէքները, հայոց սրբութիւններն ու խորհրդանիշերը, մեր պատմութիւնն ու ազգային արմատները: Բաղադրատարրերը՝ ազգի ու հայրենիքի անկախութեան:



Ազգը նախ եւ առաջ ոգի է, դարերէն եկած եւ դէպի դարերը գացող ոգի, լինելութեան կերպ, ինքնատիպ աշխարհագրացողութիւն, մշակոյթ ու արուեստ, մայրենի լեզու եւ գիր, հոգեւոր-բարոյական որակ...Տնտեսական, ռազմական, ֆինանսական ուժը, որքան ալ յոյժ կարեւոր, կրնայ պահել ազգի ու երկրի մարմինը միայն, որ առանց ոգիի կը վերածուի անշունչ ու անկենդան գոյութեան...Ազգը էապէս կ'ապրի, կը մաքառի, կը պայքարի, կ'արարէ ոգիով, ոգիի նոր որակ ձեռքբերելու համար...

Այդ ոգին՝ ազգային խորունկ ինքնաճանաչման, բարձր գիտակցութեան, արժանապատուութեան, պայքարի ոգի է գերազանցօրէն:

Այդ ոգին պիտի վերարթնցնել այսօր եւ ընդմիշտ: Սա չէ՞ բուն իմաստը հայերէնի թարգմանուած առաջին նախադասութեան՝

«ՃԱՆԱԶԵԼ ԶԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ ԵՒ ԶԽՐԱՏ, ԻՄԱՆԱԼ ԶԲԱՆՍ ՀԱՆՃԱՐՈՅ»:

Այդպէս էր երէկ՝ 405 թուականին: Այդպէս է եւ այսօր՝ 2025 թուականին:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ԻՆՉՊԷՍ ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՑՆԵԼ ԱՐԵՒՄՏԱՀԱՅԵՐԷՆԸ. «ՍՓԻՒՌՔԻ ԶԱՅՆԸ»

Նայիրա Աղաբեկեան



Արեւմտահայերէնը միայն լեզու չէ. այն մեր ազգային ինքնութեան կենդանի յիշողութիւնն է, մեր նախնիների ձայնը, որ դարերի խորքից հասնում է մեզ: Այն մի ամբողջ ժողովրդի մշակութային ողիսականի խտացումն է: Կոստանդնուպոլսի, Զմիւռնիայի, Երուսաղէմի ու Սփիւռքի անհամար համայնքների մշակութային

հարստութիւնը կրող այս լեզուն այսօր կանգնած է իրական վտանգի առաջ՝ ԻԻՆԵՄԿՕ-ի կողմից պաշտօնապէս դասուելով վտանգուած լեզուների շարքին:

Այս բարդ ու բազմաշերտ խնդրի շուրջ զրուցել ենք ընկերալեզուաբան, դասախօս, գրքերի հեղինակ և խմբագիր Արտա Ճեպեճեանի հետ՝ բացայայտելով ոչ միայն արտաքին մարտահրաւերներն, այլեւ համայնքի ներսում առկայ հոգեբանական ու մեթոդական խոչընդոտները:

«Ինչո՞ւ հայերէն պէտք է սորվիմ». Սփիւռքի նոր սերնդի հարցը



Մփիւռքում ծնուած ու մեծացող հայ երեխան ապրում է մի միջավայրում, որտեղ անգլերէնը, ֆրանսերէնը կամ իսպաներէնը ոչ միայն հաղորդակցութեան, այլեւ յաջողութեան հասնելու գործիք են: Այս իրականութեան մէջ, ինչպէս նշում է տիկին Ճեպեճեանը, հայերէնի ուսուցումը յաճախ բախուում է երեխաների անկեղծ հարցին՝ «ինչո՞ւ»: Երբ դպրոցից դուրս ամենուր օտար լեզու է հնչում, մայրենին պահպանելը դառնում է ոչ թէ բնական գործընթաց, այլ գիտակցուած ջանք ու պայքար:

Մարտահրաւերը խորանում է, երբ համայնքը՝ լեզուն պահելու անկեղծ մղումով, դիմում է չափազանց կոշտ մեթոդների: «Մենք կառչած ենք մեր լեզուին, եւ ամէն ինչ մեզի համար շատ կարեւոր է, մանաւանդ՝ քերականութիւնը», – ասում է Արտա Ճեպեճեանը՝ պատմելով, թէ ինչպէս են իրեն «դաւաճան» անուանել՝ լեզուի ուսուցման աւելի ճկուն մօտեցումներ առաջարկելու համար: Այնինչ ժամանակակից լեզուաբանութիւնն ու մանկավարժութիւնը վաղուց են հրաժարուել չոր քերականութեան վրայ հիմնուած ուսուցումից՝ գերադասելով լեզուն սովորեցնել կենդանի շփման՝ գրելու, կարդալու և խօսելու միջոցով: Երեխային սխալի համար կշտամբելու փոխարէն պէտք է նրան քաջալերել խօսել՝ անգամ սխալներով, աւելացնում է նա:

Երկլեզուութեան ուժը. գիտական փաստարկ՝ յանուն հայերէնի

Ի պատասխան մանուկների «ինչուի»՝ Արտա Ճեպեճեանը բերում է հզօր գիտական փաստարկներ: Երկլեզու կամ բազմալեզու երեխաները ոչ միայն մշակութային առաւելութիւն ունեն, այլեւ մտաւոր: «Արդէն ֆիզիքսպէս երկլեզու երեխայի մը ուղեղը աւելի մեծ է, աւելի արագ կը զարգանայ», – բացատրում է նա: Լեզուական երկու համակարգերի միջեւ անընդհատ անցումներ կատարելը մարզում է ուղեղը, զարգացնում ճկունութիւնը, խնդիրներ լուծելու կարողութիւնը և ստեղծագործական միտքը: Սա նշանակում է, որ հայերէնի ուսուցումը ոչ միայն ազգային պարտք է, այլեւ ներդրում երեխայի ինտելեկտուալ ապագայի մէջ: Ծնողի համար, որն ապրում է մրցակցային աշխարհում, սա կարող է լինել ամենահամոզիչ փաստարկը:

Նոր և դասական Մփիւռք. միասնութեան, ոչ թէ բաժանման խնդիր

Վերջին տասնամեակներում Մփիւռքի պատկերը փոխուել է: Հայաստանից արտագաղթի նոր ալիքի հետեւանքով արեւմտահայախօս համայնքներում յայտնուել է արեւելահայերէնը կրող նոր Մփիւռք: Սա, ցաւօք, երբեմն յանգեցնում է բաժանման՝ անգամ դպրոցական դասարաններում: Արտա Ճեպեճեանը սա համարում է մեծ վտանգ: «Երանի՛ կարենանք խուսափիլ պիտակներ տալէ, որովհետեւ ատիկա մեզ կը բաժնէ», – յորդորում է նա:

Փոխանակ երկու ճիւղերը հակադրելու՝ պէտք է դրանք դիտարկել որպէս միմեանց հարստացնող ուժ: Արեւելահայերէնի ներկայութիւնը կարող է նոր շունչ և կենդանութիւն հաղորդել դասական Մփիւռքի համայնքներին, իսկ արեւմտահայերէնի պահպանումը պէտք է դառնայ համազգային խնդիր: Ի վերջոյ, ինչպէս ընդգծում է ընկերալեզուաբանը, երբ լեզուն անհետանում է, կորչում է ոչ միայն բառապաշարը, այլեւ «մշակոյթը, ինքնութիւնը, պատմութիւնը, մեր յուշերը»:

Յոյսի ճանապարհը՝ եբրայերէնի օրինակը

Արդեօ՞ք արեւմտահայերէնը դատապարտուած է: Պատմութիւնը ցոյց է տալիս, որ՝ ոչ: Արտա Ճեպեճեանը բերում է եբրայերէնի ապշեցուցիչ օրինակը, որը հազարաւոր տարիներ լինելով մեռած լեզու՝ վերածնունդ պետական կամքի, լեզուաբանների նուիրում աշխատանքի և ժողովրդի համախմբման շնորհիւ: Սա նշանակում է, որ վտանգուած լինելը դեռեւս դատաւճիռ չէ: Դա գործողութեան կոչ է:

«Աստուած մեզի հետ է, մինչեւ հոս հասցուց մեզի, բայց մենք ալ մեր բաժինը պէտք է ընենք», – ամփոփում է նա: Այդ «բաժինը» բազմաբնույթ է. ծնողի համար՝ տանը երեխայի հետ յամառօրէն հայերէն խօսելը, ուսուցչի համար՝ ուսուցման ժամանակակից ու գրաւիչ մեթոդներ կիրառելը, իսկ համայնքի համար՝ երկու ճիւղերի միջեւ կամուրջներ ստեղծելն ու լեզուի պահպանումը ռազմավարական նպատակ դարձնելը:

Արեւմտահայերէնի պահպանումը պայքար է ոչ միայն բառերի, այլեւ մեր հաւաքական յիշողութեան և ինքնութեան բազմազանութեան համար: Եւ այդ պայքարում յաղթելու համար անհրաժեշտ է ոչ թէ յուսահատուել, այլ միաւորել ջանքերն ու գործել:

14/10/2025

ԿԻՊՐԱՀԱՅ

ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԾԻՍԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ ԿԻՊՐՈՍԻ ՍՕՏ ՀՀ ՆՈՐ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ



Ուրբաթ 3 հոկտեմբեր 2025-ին, առօրեան ժամը 11:00ին, կատարուեցաւ օրհնութեան ծիսակատարութիւնը Կիպրոսի մօտ ՀՀ նր դեսպանատան ձեռամբ՝ Կաթ. Փոխ. Գերաշնորհ Տէր Կոմիտաս Արք. Օհանեանի, աւագ քահանաներ Տէր Մաշտոց Աշգարեանի եւ Տէր Մովսիկ Հապէշեանի եւ ի ներկայութեան ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Վսեմաշուք Տիկ Իննա Թորգոմեանի, Դեսպանատան առաջին քարտուղար Տիկ. Անուշ Յարութիւնեանի, Տէր Մարտիրոս Սրբազան Մինասեանի եւ կիպրահայ համայնքի Պետ. Ներկայացուցիչ Տիար Վարդգէս Մահտեսեանի:

«ԱԶԱՏ ԽՕՒՔ»ը կը շնորհաւորէ ՀՀ նոր դեսպանատան հիմնադրութիւնը Կիպրոսի ասպնջական հողին վրայ եւ կը մաղթէ Հայաստան-Կիպրոս փոխադարձ կապերու առաւել սերտացում եւ արդիւնաւետութիւն ի շահ երկու երկիրներու բարգաւաճման եւ բարօրութեան:

ՀԱՅԱՍՏԱՆԻ

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ

ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆԸ ԿԻՊՐՈՍԻ ՍՕՏ ՀՀ ԴԵՍՊԱՆԱՏԱՆ ՄԷՋ



Չորեքշաբթի 15 Հոկտեմբեր 2025-ին, շքեղ ընդունելութեամբ մը նշուեցաւ ՀՀ անկախութեան տօնը՝ Կիպրոսի մօտ ՀՀ նորաբաց դեսպանատան մէջ: Միջոցառման մասնակցեցան Կիպրոսի կրթութեան, սպորտի և երիտասարդութեան նախարար Աթենա Միխալիտուն, Կիպրոսի ԱԳՆ մշտական քարտուղարը, պատգամաւորներ, հոգեւոր առաջնորդներ, դեսպաններ, Կիպրոսի Հանրապետութեան տարբեր պետական կառոյցներու բարձրաստիճան պաշտօնեաներ, հայկական համայնքի ներկայացուցիչներ եւ այլ նշանաւոր հիւրեր:

Կիպրոսի մօտ ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան Ն.Վ. Տիկ. Իննա Թորգոմեան իր բարեգալուստի խօսքին մէջ անդրադարձաւ Հայաստանի՝ 1991թ. անկախութեան վերականգնումէն ետք

անցած ճանապարհին, «Խաղաղութեան խաչմերուկ» ծրագրին, Հայաստանի և Ատրպէյճանի միջեւ խաղաղութեան համաձայնագրի նախաստորագրմանը՝ յոյս յայտնելով, որ այդ գործընթացը կը բանայ խաղաղութեան, կայունութեան և տարածաշրջանային համագործակցութեան նոր ժամանակաշրջան: Դեսպան Թորգոմեանը վերահաստատեց Հայաստանի ու Կիպրոսի միջեւ ամուր ու երկարամեայ բարեկամութիւնը, որ հիմնուած է փոխադարձ յարգանքի, վստահութեան եւ ընդհանուր արժէքներու վրայ՝ երախտագիտութիւն յայտնելով Կիպրոսին՝ Հայաստանին աներկբայ քաղաքական և մարդասիրական աջակցութեան համար եւ ընդգծելով Երեւանի եւ Նիկոսիոյ նստավայր դեսպանութիւններու բացման կարեւորութիւնը: Դեսպան Թորգոմեանը նաեւ շնորհաւորեց Կիպրոսին՝ ԵՄ Խորհրդի յառաջիկայ նախագահութիւնը ստանձնելու կապակցութեամբ՝ վստահութիւն յայտնելով երկրի առաջնորդութեանը համաշխարհային և տարածաշրջանային մարտահրաւերներու ներկայ պայմաններուն տակ:


Կիպրոսի կրթութեան, սպորտի և երիտասարդութեան նախարար Աթենա Միխալիտուն իր ելոյթին մէջ վերահաստատեց Կիպրոսի անսասան աջակցութիւնը Հայաստանի Հանրապետութեան ինքնիշխանութեան, անկախութեան եւ տարածքային

ամբողջականութեան՝ իր միջազգային ճանաչուած սահմաններու մէջ: Ան անդրադարձաւ Հայաստանի և Կիպրոսի միջեւ գոյութիւն ունեցող խոր արմատներով բարեկամութեան, որ հիմնուած է ընդհանուր արժէքներու, փոխադարձ յարգանքի և պատմական կապերու վրայ, եւ կարեւորեց Նիկոսիոյ եւ Երեւանի մօտ դիւանագիտական ներկայացուցչութիւններու հիմնումը: Նախարարը բարձր գնահատեց Հայաստանի կառուցողական ջանքերը՝ ուղղուած Հարաւային Կովկասի մէջ համապարփակ և տեւական խաղաղութեան հաստատման, և վերահաստատեց Կիպրոսի պատրաստակամութիւնը՝ աջակցելու Հայաստանի աւելի սերտ համագործակցութեանը ԵՄ-իութեան հետ:


Տօնակատարութեան յաւելեալ փայլ պարգեւեց Ս. Աստուածածին Մայր եկեղեցւոյ Երգչախումբը որ կատարեց Հայաստանի եւ Կիպրոսի քայլերգերը, ինչպէս նաեւ Երեւան-Էրեբունի սիրուած երգը՝ Երեւանի 2807-ամեակին առիթով:

Կեցցե՛ Հայաստանի Հանրապետութիւնը, Կեցցե՛ Կիպրոսի Հանրապետութիւնը, Կեցցե՛ն Հայաստան-Կիպրոս բարեկամական, դիւանագիտական ջերմ կապերը: Ե.Գ.

ԿԻՊՐՈՍԻ ՀՆԱՄԵՆԻ Ս. ՄԱԿԱՐԱՅ ՎԱՆՔԸ ԽԻՍՏ ԿԱՐԻՔԸ ՈՒՆԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ



Կիպրոսի բռնագրաւեալ Հալէֆքա շրջանին մէջ գտնուող Ս. Մակարայ վանքը որուն պատմութիւնը սկիզբ կ'առնէ դեռեւս Ք.Ա.1000 թուականէն, այժմ կը գտնուի բնութեան եւ վանտալներու քմայքին ենթակայ: 1974 թուականի թրքական ներխուժումէն ետք, ահա արդէն 51 տարիէ հայկական միակ վանքը վերանորոգման խստագոյն



անհրաժեշտութեան տակ է: «Ան լուռ, անտէր, սրբապղծուած եւ լքուած համբերութեամբ կը սպասէ իր իրաւ տէրերուն եւ ուխտաւորներու խաղաղ վերադարձին», ինչպէս կը գրէ կիպրայոյն բանասէր եւ հայագէտ Ալեքսանդր Հաճիլիրան: Վերջինը կոչ կ'ընէ Կիպրոսի Միացեալ Ազգերու պատկան կազմակերպութեան UNDP-ին, ինչպէս նաեւ Կիպրոսի Մշակութային Ժառանգութեան պահպանման Թեքնիք Կոմիտէին (Committee on Cultural Heritage in Cyprus) որ անյապաղ գործի ձեռնարկեն, նախքան որ շատ ուշ ըլլայ արդէն:

ՅՕԴՈՒԱԾՆԵՐ

Հայրենիքի ամենամեծ սպառնալիքը մենք ԻՆՔՆԵՐՍ ենք՝ մեր հայրենաքանդ անմիաբանութեամբ

Դոկտ. Արեւ քինյ. Մանուկեան



Ազգովին կանգնած այսօրուան աշխարհաքաղաքական պայթիւնավտանգ մարտահրաւերներուն առջեւ, երբ Հայաստան բոլոր կողմերէն կը գտնուի տարատեսակ սպառնալիքներու տակ՝ քաղաքական, տնտեսական եւ ընդհանրապէս սահմանային անվտանգութեան առումով, ատենէ մը ի վեր կը պարզուի աւելի խոր, գուցէ նոյնիսկ

աւելի կործանարար վտանգ մը՝ հայ ժողովուրդին անմիաբանութիւնը: Ան կը դրսեւորուի ոչ միայն Հայաստանի ներքաղաքական ու ընկերային-հասարակական կեանքին մէջ, այլեւ համազգային մակարդակով՝ սփիւռքի ողջ տարածքին՝ իբրեւ միմեանց հանդէպ անվստահութեան, դժգոհութեան, բազմաբնոյթ մեղադրանքներու, նոյնիսկ ինքնակործան ատելութեան հասնող հիւանդագին երեւոյթով:

Պատմութենէն դասեր քաղելու եւ մեր գոյութեան բազմաթիւ սպառնալիքներու դէմ միասնական պայքար մղելու փոխարէն, մենք զմեզ յանձնած ենք իշխանատենչ կոիւնքերու, գաղափարախօսական պառակտումներու եւ ազգային յոռետեսութեան: Այս ներքին պառակտումը միայն բարոյախօսական խնդիր չէ, այլ ռազմավարական արկածախնդրութիւն եւ վտանգաւոր ռիսկ: Կ'ապրինք տարածաշրջանի մը մէջ, ուր շրջապատուած ենք մեզի հանդէպ յարձակողական քաղաքականութիւն վարող թշնամի, այլապէս անտարբեր հարեւաններով, եւ մեր մէջ նկարագրային նստուածք տուած անմիաբանութեամբ կը քայքայենք ոչ միայն մեր ազգային ուխտն ու հայկական պետականութիւնը, այլեւ կը վտանգենք մեր պատմական հայրենիքին վերջին մնացորդացը՝ այսօրուան Հայաստանը իր 29.743 ք.մ. տարածքով:

Ժամանակի հրամայականը մեզի կը թելադրէ, որ ըլլանք յանձնառու մենք մեզի՝ մեր գոյութիւնն ու գործունէութիւնը ենթարկելու ինքնաքննարկման, լուրջ վերլուծութեան, յաշտ միջազգային հանրութեան ներկայացնել կարենալու համար ազգային միահամուռ կեցուածք այն բոլոր մարտահրաւերներուն դէմ, որոնք ուղղուած են մեզի, այլ ոչ թէ կամայ թէ ակամայ յանձնուիլ նոր պառակտումներու յառաջացման: Առանց ազգային ծրագրի, առանց տեսլականի եւ համազգային բարձրագոյն նպատակներ իրականացնելու կամքի ձեւաւորման, մեր հայրենիքի, պետութեան եւ ընդհանրապէս հայ ժողովուրդի գոյութեան ապագան վտանգուած է:



Ներքին պառակտուածութիւն եւ արտաքին սպառնալիք

Հայաստան ոչ միայն փոքր պետութիւն մըն է անբարեացակամ դրացիներու միջավայրին մէջ, այլեւ այսօրուան վիճակով ան կը ներկայացնէ հասարակական ներքին բաժանումներով լեցուն հանրային կեանքի մը պատկերը: Քաղաքական ճակատները այնուհետեւ չեն գոյանար միայն իշխանութեան եւ ընդդիմութեան, այլ ընտանիքներու, բարեկամներու, ընկերական շրջանակներու եւ սերունդներու միջեւ: Ներքաղաքական խօսույթը թունաւորուած է, հանրային տարածքը՝ ներծծուած անվստահութեամբ, փոխադարձ մեղադրանքներով եւ արհամարհանքով:

Մէկդի թողելով Դիմատետրի, ընկերային հարթակներու եւ համացանցային կայքէջերու մէջ յաճախ երեւցող ամենատգեղ գրառումները, որոնք զարշառոտ աղբակոյտի մը տպաւորութիւնը կու տան արդի հաղորդակցութեանց միջոցներուն, վերջերս վերահասու դարձանք իրադարձութեան մը, որ կը հատեր թէկուզ ստորին մակարդակի եւ բարոյականութեան բոլոր կարմիր գիծերը:

Սփիւռքահայ լրագրող եւ թերթի խմբագիր մը համացանցային շրջաբերական մը յղած էր արեւմտահայերէն լեզուի մասնագէտ անձի մը դէմ. նամակ մը, որ ան հասցէագրած էր բարեկամներու, ծանօթ եւ անծանօթ բազմաթիւ անձերու: Ի՛նչ ալ ըլլար այդ գրութեան շարժառիթը, վայել չէր, որ հայ սփիւռքի որոշ շրջանակներու մէջ պատկառանք վայելող այդ քաջանուն թերթին խմբագրապետը ինքն իրեն թոյլ տար այդ աստիճան ու անխնայ նսեմացնել իր հակառակորդը: Այս բոլորը՝ իր կարգին: Սակայն ամենավիրաւորական բաժինը այդ շրջաբերական նամակին յետագրութիւնն է, ուր հեղինակը կը նշէ. «Գրութեանս մէջ ուղղագրական, կէտադրական, քերականական եւ հայերէնի սխալները յատուկ են, եւ կը միտին թանսիոնդ [ճնշում] բարձրացնելու: Գուցէ այդ կ'օգնէ քեզ շուտ չուելու այս աշխարհէն»: Փաստօրէն, այս ծանր վիրաւորանքը դիտաւորեալ ուղղուած է իր հակառակորդին, բայց միաժամանակ, գուցէ եւ առանց անդրադառնալու, անուղղակի՝ մայրենիին, Մեսրոպ Մաշտոցին եւ հայերէնի հանդէպ բժախնդրութիւն ցուցաբերող բազմաթիւ մարդոց դէմ՝ ոտնակոխելով խոհեմութեան բոլոր սահմանները:

Հարեւանցի դիտարկում մը անգամ բաւարար է հաստատելու, որ իրենց միջեւ տարակարծութեան հիմնահարցը ՀՀ վարչապետին թեր ու դէմ եղող խօսույթն է, որ, ինչպէս վերոգրեալ նշուեցաւ, ներթափանցած է ազգային բոլոր կառոյցներէն եւ մարդկային յարաբերութեանց ծիրէն ներս: Այս առթիւ ցաւալին այն է, որ կա՛մ կողմ եւ եւ կա՛մ դէմ, կա՛մ համախոհ եւ եւ կա՛մ հակառակորդ: Երկսայրի ծայրայեղութիւն մը, որ չունի միջին ու վնասաբեր է բոլոր կողմերով: Ի՞նչ խօսք այլախոհութեան եւ կառուցողական երկկողմանի վիճաբանութիւն ձեռք բերելու մշակոյթի մասին, արժէք, որ պարզապէս անգոյ է այսօրուան մեր իրականութեան մէջ:

Հայաստանի քաղաքական կեանքին մէջ իւրաքանչիւր նահանջ, ձախողութիւն եւ պարտութիւն դարձած է պատրուակ վիուկորսութեան, մեղաւորներ փնտռելու եւ դաւաճաններ անուանելու՝ ոչ թէ առերեսուելու սխալներուն հետ, զանոնք վերլուծելու, անոնց բուն պատճառները ճանչնալու եւ դասեր քաղելու իմաստով, այլ ջղուտ հաշուեյարդար



տեսնելու՝ յագուրդ տալու համար անձնական վրիժառութեան: Քաղաքական մթնոլորտը կը բնութագրուի ոչ թէ լուծումներու վրայ կեդրոնացած բանավեճով, այլ կործանարար հակամարտութեամբ: Ստեղծուած ճգնաժամէն դուրս գալու համատեղ ուղիներ որոնելու քաղաքականութեան փոխարէն՝ մենք կորստուած ենք պալատական ներքին խաղերու, անձնական թշնամանքի եւ գաղափարախօսական հակազդեցութիւններու իրարայաջորդ ալիքներ ստեղծելու *էջորհայի* մէջ: Արցախի ողբերգութիւնը, մեր ինքնութեան եւ պատմութեան մէկ մասի կորուստը մեզ չմիաւորեց, այլ իրարմէ աւելի՝ հեռացուց:

Մեր հայրենիքը պարզապէս չի կրնար ինքն իրեն թոյլ տալ ժամանակ եւ ներուժ սպառելու ներքին պառակտումներու վրայ: Մենք չունինք ռազմավարական հզօր փորձ, խորութիւն, առատ պաշարներ կամ երկրորդ պետութիւն մը, որուն ապաւինինք: Մեր ամենամեծ թուլութիւնը մեր անմիաբանութիւնն է, իսկ այդ դուրսէն կը դիտուի արթուն աչքերով: Այսպիսի փխրուն եւ նոյնիսկ պայթիւնավտանգ պահուն իւրաքանչիւր ներքին պառակտում կը վերածուի ինքնապաշտպանական խոցելիութեան: Եթէ մենք չկարենանք գէթ այս ճակատագրական պահուն ստեղծել ներքին կայունութիւն մը, ապա մեզի ոչ ոք պիտի չնորհէ ապագայ մը կամ այլընտրանքային որեւէ մէկ ուրիշ դրական տարբերակ:

Սփիւռքահայութիւնը հայրենաքաղձութեան եւ օտարացման միջեւ

Հայկական սփիւռքը թուային առումով գուցէ երեք անգամ աւելի մեծ է հայաստանաբնակ հայ քաղաքացիներու թիւէն: Հայ սփիւռքը համեմատաբար բարեկեցիկ է եւ ունի ահագին ներուժ: Ան սերունդներ շարունակ սնուցած, պահպանած եւ տարածած է հայկական մշակութային ժառանգութիւնը ամբողջ աշխարհով: Այնուամենայնիւ, հակառակ իր ունեցած պատմական եւ տակաւին այսօր դրսեւորած նշանակութեան, հետզհետէ սկանաւորուել կը դառնանք սփիւռքի եւ հայրենի բնակչութեան միջեւ ցաւոտ օտարացման:

Այս օտարացումը առաւել եւս զգալի դարձաւ 2020 թուականին բռնկած Արցախեան 44-օրեայ պատերազմէն ետք, երբ հայկական բանակը ծանր պարտութիւն կրեց՝ զոհ տալով բիրատոր քաջամարտիկներ, իսկ 9 նոյեմբերին հայկական կողմը ստիպուած եղաւ Ռուսիոյ միջնորդութեամբ Ատրպէյճանի հետ ստորագրելու Հայաստանի եւ հայ ժողովուրդին համար անբարենպաստ պայմանագիր մը: Տակաւին ասոնց հետեւեցաւ յոռեգոյնը, երբ 2023 թուականին ատրպէյճանական ուժերը զինու զօրութեամբ ամբողջութեամբ հայաթափեցին Արցախը՝ բանալով տխուր էջ մը հայոց նորագոյն պատմութեան մէջ՝ աղէտալի իրադարձութիւններով եւ անդառնալի կորուստներով լեցուն:

Հայ կեանքին մէջ յառաջ եկած իրավիճակը եւ պահու հրամայականը կը թելադրէին, որ համահայկական ոգիին եւ հայկական պետականութեան միջեւ ստեղծուէր փոխադարձ հասկացողութեան եւ զօրակցութեան առնուազն բարոյական դաշինք կամ համակամութեան դրսեւորում: Սակայն Հայաստանի պետական կառոյցներուն մէջ սփիւռքէն հնչող ձայնը գնահատուեցաւ իբրեւ ամբարտաւան ելոյթ եւ իրատեսութեան տուեալներով թերի: Միւս կողմէ, սփիւռքի մէջ ալ շատեր, իրենց կարգին, հայկական քաղաքականութեան մէջ տեսան միայն ձախողութիւն, թուլութիւն եւ անձնատուութիւն: Հետեւաբար, նպատակային



համագործակցութեան եւ փոխադարձ հասկացողութեան բացակայութեան պայմաններու բերումով՝ համահայկական իրականութեան մէջ առկայ ներուժը վատնուեցաւ՝ նպաստելով բեւեռացումներու ստեղծման եւ ուժաբեկութեան:

Հայաստան կարիքը ունի սփիւռքին, իսկ սփիւռքը՝ Հայաստանի: Հայաստան ոչ թէ իբրեւ զգացական իտեալ կամ բարոյական խորհրդանիշ մըն է, այլ որպէս իրական եւ թէկուզ սեփական կեանքի գնով պաշտպանելու միասնական հայրենիք: Միայն միասին, փոխադարձ յարգանքի եւ յստակ ռազմավարական նպատակի պայմաններու մէջ կարելի է տեսնել կառուցողական յարաբերութիւններու, զօրակցութեան եւ համահայկական ուժերու վերականգնում: Ներկայ իրավիճակը յղի է անկանխատեսելի վտանգներով: Եթէ մենք ի վիճակի չենք զիրար հասկնալու, ապա դժուար է ակնկալել, որ դուրսէն որեւէ մէկը, որեւէ մէկ այլ ազգ կամ պետութիւն մեզ հասկնայ:

Միայնակ՝ բաց հորիզոններու առջեւ – աշխարհաքաղաքական մեկուսացման վտանգը

Վերոգրեալ նշուեցաւ, որ Հայաստան կը գտնուի աշխարհաքաղաքական արգիլուած տարածաշրջանի (no man's land) մը մէջ՝ շրջապատուած պետութիւններով, որոնք իրեն հանդէպ կը վերաբերին կա՛մ բացայայտ թշնամանքով, կա՛մ, լուազոյն պարագային, անտարբերութեամբ: Թուրք-ատրպէյճանական դաշինքը կը գործէ համակարգուած, միասնական եւ ծաւալապաշտական գործելաձով: Միւսիքի երկնակամարին կախումն է Դամոկլեան սուրի մը պէս փանթուրանական «դըլըճ»-ը, իսկ Հայաստանի շրջափակումը, դիւանագիտական յարաբերութիւններու, նաեւ առեւտուրի ու երթեւեկութեան հարցերով անոր մեկուսացումը՝ այս ամէնը պատահականութիւն չէ, այլ ռազմավարութիւն: Իսկ մեր պատասխա՞նք. անմիաբանութիւն՝ «խորհրդով, բանիւ եւ գործով, կամայ եւ ակամայ, գիտութեամբ եւ անգիտութեամբ»: Յոյն իմաստասէրը՝ Պղատոն, այսօրուան թուականէն 2372 տարիներ առաջ բնութագրած է հետեւեալ բացարձակ իրողութիւնը. «Անմիաբանութիւնը սկիզբն է կործանումին»:

Ինքնաճանաչումի նպատակով յանձնարարելի է կարդալ հայրենի գրող Դերենիկ Դեմիրճեանի գողտրիկ մէկ խոհագրութիւնը «Հայը» խորագրով: Գրական հայելի մըն է, որ կ'արտացոլացնէ հայուն նկարագիրը իր արժանիքներով եւ թերութիւններով: Կ'արժէ մէջբերել այս մասին գրողին դիտարկումները.

«Ամէն հայ մի հայ ունի, որի հետ թշնամի է մինչեւ մահ: Սա նրա անհրաժեշտութիւնն է: Անկարգ է եւ անիշխանական թէ՛ հասարակութեան, թէ՛ պետութեան եւ թէ՛ գաղափարների մէջ: Իբրեւ ժողովրդական՝ անմիաբան է, անտանելի, խռովարար:

Թաթա՞րն էր մօտը՝ սպասեց ռուսին, ռու՞սը եկաւ՝ աչքը եւրոպացուն էր: Եկա՞ւ անգլիացին՝ դարձեալ ռուսին էր սպասում: Ռո՞ւսն է գալիս՝ չի ընդունում... Ուրեմն իր պետութի՞ւնն է ուզում ստեղծել, չի՞ ուզում ստեղծել, ի՞նչ իմանաս... Մի ձեռը ճանկոտելով հիմնում է այդ պետութիւնը, միւս ձեռը ճիգ է անում հիմքից քանդելու:



Ինչո՞ւ է այսպէս, ինչի՞ց է դժգոհ, ի՞նչ է կամենում... Ինչո՞ւ է այսպէս անհաւասար, ներհակ, մաղձոտ, անհաւատալի՝ իր ստորութեան մէջ, անչափելի՝ իր վեհ թռիչքներում: [...]: Հայի ամենամեծ առաքինութի՞ւնն էս ուզում՝ ամենաներողամիտ ցեղը աշխարհիս մէջ [...] Նա մեկուսի է, խստակեաց, բարի եւ ազատասէր»¹:

Սակայն ի վերջոյ ի՞նչ է կեանքէն հայուն ուզածը. արդարեւ հեղինակը կ'եզրակացնէ՝ «կեանքից աւելի թանկ բանը՝ Ազատութիւնը»²: Բայց հիմնախնդիրն այն է, որ անհատական ազատութիւնը առնչուած է հաւաքական ազատութիւն ձեռք բերելուն հետ: Ազատութիւն, որ պէտք է նուաճես, թէկուզ կեանքիդ գնով պէտք է պաշտպանես, իսկ այդ կարելի է իրականացնել միայն հաւաքաբար, ազգով ու պետութեամբ: Այլապէս միշտ ենթակայ ես մէկ ուրիշին, աւելի ուժեղին, իսկ աւելի զօրեղը միշտ ալ կայ՝ ինքնիշխանութեանդ վրայ բռնացողը, քեզ ազատագրկողն ու ստրկացնողը: Այնուհետեւ դուն բռնակալէդ ազատութիւնդ չէ, որ կը խնդրես, այլ միայն կեանքդ, թէկուզ անասունի մը պէս ապրելու կարգավիճակով:

Ահա այս էական տարբերութիւնն է, որ յստակ պէտք է ըլլար մեր ազգային-հաւաքական գիտակցութեան մէջ՝ ազատութեան միանշանակ հաւաքական ձեռքբերում մը ըլլալու իրողութիւնը:

Ռուսիա, որ երբեմն կ'ընկալուէր իբրեւ Հայաստանի պաշտպան տէրութիւն, վաղուց կը հետապնդէ առանձնապէս իր սեփական շահերը՝ յաճախ մեր հաշուոյն: Իսկ Արեւմուտքը, հակառակ այն փաստին, որ որոշակի հետաքրքրութիւն կը ցուցաբերէ մեր ժողովրդավարական բարեփոխումներուն նկատմամբ, գործնական գետնի վրայ կը մնայ վերապահ եւ յաճախ հեռու Հայաստանի իրական անվտանգութեան յանձնառութիւնը ստանձնելէ: Միւս կողմէ՝ Իրան եւ Վրաստան կը խաղան իրենց սեփական խաղը՝ թէպէտ ոչ ուղղակի մեր դէմ, այլապէս նաեւ ոչ անպայման մեզի հետ ըլլալու գործելաձգ դրսեւորելով:

Քաղաքական լարուածութեան այս դաշտին մէջ Հայաստան կը մնայ միայնակ այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, ուր սխալելու տեղ ամենեւին չկայ: Իւրաքանչիւր ներքաղաքական վեճ, ամէն մէկ ցոյց, կառուցումաձեւային ամէն մէկ ճգնաժամ կը տկարացնեն մեր դիրքերը՝ խաղալու մեր խաղը միջազգային ճատրակի տախտակին վրայ: Իւրաքանչիւր ոք, որ ռազմավարական մտածելակերպով կ'առաջնորդուի՝ քաջ գիտէ, որ սեփական թուլութիւնը իր դէմ յարձակողական եւ ծաւալապաշտական տրամադրութիւն կը ստեղծէ: Զօրեղն է, որ յարգանք կը թելադրէ: Ուժն է, որ կը ծնի իրաւունքը: Բոլոր անոնք, որոնք իրենք զիրենք պաշտպանել չեն գիտեր, միեւնոյն է, ուրիշը զիրենք չի պաշտպաներ: Երբ ինքզինքդ կը բզկտես, ուժերդ ցմրուր կը սպառես՝ այնուհետեւ պէտք չունիս արտաքին թշնամիներու, քանզի անկումդ ձեռքովդ իսկ նախապատրաստած ես:

Հետեւաբար, մեր աշխարհաքաղաքական իրավիճակը մեզի ամենեւին թոյլ չի տար անվճռականութեան, ազգային պառակտումութեան, կեղծ ռոմանթիզմի եւ, իհարկէ, ներքին քառս մը ստեղծելու շոայլութիւն:



Կոչ միասնութեան եւ պատասխանատւութեան

Վաղուց ժամանակն է վերատեսութեան ենթարկելու մեր կեանքը, գործը, խօսքն ու ընթացքը: Ժամանակն է էական շրջադարձի մը՝ մեր կեանքին տալու նոր բովանդակութիւն եւ որակ: Եւ սոյնը ոչ թէ դատարկ կարգախօսերու տեսքով, այլ իբրեւ խորապէս զգացուած անհրաժեշտութիւն:

Հայաստան այլեւս չի կրնար ինքն իրեն թոյլ տալ յումպէտս վատնուած տարիներ: Անդառնալի ժամանակաշրջան մը, երբ հազարաւոր ազատամարտիկներու թափած արիւնով ձեռք բերուած փառապանծ յաղթանակը ուղղակի մսխուեցաւ, այսօր ունենալով ահաւասիկ այն, ինչ ունինք: Այսուհետեւ արտօնելի է ո՛չ մէկ քաղաքական խաղ, ո՛չ մէկ թշնամութիւն սեփական ճամբարէն ներս՝ ի՛նչ պիտակի տակ ալ ան թաքնուած ըլլայ՝ յատկապէս եկեղեցական:

Ազգային միասնութիւնը՝ «մէ՛կ հայրենիք, մէ՛կ եկեղեցի, մէ՛կ ժողովուրդ», որ յաճախ խորաններէ իբրեւ հռետորաբանութիւն կամ հաւաքներու առթիւ իբրեւ ամբոխավարական կարգախօս կը հնչէ, պէտք է դառնայ գործնական առաջնահերթութիւն՝ կրանիտայ հիմք քաղաքական եւ քաղաքացիական հասարակութեան իւրաքանչիւր գործողութեան մէջ:

Միասնութիւն չի նշանակեր միաձեւութիւն: Ան կը նշանակէ ճանչնալ եւ հետապնդել համահայկական ընդհանուր նպատակ,– հակառակ անկախ բոլոր տարբերութիւններուն,– պահպանել հայոց հայրենիքը, հզօրացնել պետականութիւնը եւ պաշտպանել հայ ժողովուրդին խաղաղութիւնն ու զարգացնել անոր բարեկեցութիւնը: Պէտք է ապահովել հնարաւոր չափով այն բոլոր կարելիութիւնները, որ հայ մարդը Հայաստանի մէջ ապրիլ կարենայ մարդավայել կեանքով: Ապրիլ Հայաստանի մէջ ոչ թէ ստիպողաբար, այլ յօժարակամ: Երկիր, ուր արժէ ապրիլ, վայելել ու իմաստաւորել սեփական կեանքը՝ աշխատանքով, նուիրումով, արարումներով: Հետեւաբար, իւրաքանչիւր անձ, որ կը սիրէ Հայաստանը, պէտք է պատրաստ ըլլայ խօսելու նաեւ այլախոհներու հետ՝ գտնելով տրամաբանական փոխզիջումներու միջոցներ մարդկային յարաբերութեանց մէջ եւ մարդոց միջեւ կամուրջներ կառուցելու, այլ ոչ՝ հաստաբեւտ պարիսպներ ստեղծելու նպատակով:

Սփիւռքը նոյնպէս ունի իր պատասխանատւութեան բաժինը: Արտասահմանեան բարեկեցիկ երկիրներու մէջ մետաքսեայ բարձերու վրայ նստած թերացումները մատնացոյց ընելու փոխարէն, հարկաւոր է նպատակային զօրակցութիւն ցուցաբերել՝ ներդրումներ իրականացնել Հայաստանի կրթութեան, ենթակառոցներու եւ ռազմավարական հաղորդակցութեան մարզերէն ներս: Ոչ թէ անցեալի նկատմամբ պատրանքներով, հայոց պատմութեան եւ հայրենիքի վերաբերեալ զգացական մօտեցումով, այլ ներկայի մասին իրատեսութեամբ եւ ապագայի համար յստակատեսութեամբ:

Քաղաքական ղեկավարութիւնը, մտաւորական վերնախաւը, երիտասարդութիւնը, Եկեղեցւոյ նուիրապետական աթոռները, լրատուամիջոցները՝ բոլորը անխտիր ունին պարտականութեան իրենց լրջագոյն բաժինը: Հայաստան կը փրկուի ոչ թէ մուրացածոյ



արտաքին օգնութեամբ, այլ ինքնահաստատուելու ներքին կամքով: Եթէ մենք դրսեւորել չկարենանք այս կամքը, ներկան մեզի չի ներեր, իսկ ապագան կը յիշէ լոկ մեր անունը արդէն հեռաւոր պատմութիւն դարձած իր էջերուն մէջ: Մինչդեռ հայը արժանի է ազգերու ընտանիքին մէջ յարատեւելու որպէս գոյատեւման հրաշք՝ ներհակ այն բոլոր ուժերուն, արհաւիրքներուն, որոնք ի գուր փորձեցին հատել կենաց ծառին այն դալար ոստը, որ դարէ ի դար սնուցած, աւիւն եւ կենդանութիւն՝ կեանք եւ առաւել կեանք տուած է իրեն:

Պատմութեան պահանջը հայ ժողովուրդին հանդէպ յաճախ անողոք եղած է. պետականութեան կորուստ, օտարի տիրապետութիւն, իրարայաջորդ ասպատակումներ, տարագրութիւն, ցեղասպանութիւն, հայրենագրկում եւ սփիւռքացում: Բայց այնուամենայնիւ մենք կանք մեր փոքրիկ Հայաստանով, հարենաբնակ ժողովուրդով, հայ սփիւռքով եւ մեր երկիրն ու գոյութիւնը խորհրդանշող Եռագոյնով: Մենք գոյատեւեր ենք, վերափոխուելու ու բարեկարգուելու ենք, այլեւ պահպանելու ենք մեր մշակոյթը, հայեցի ինքնութիւնը՝ թէկուզ սփիւռքացած պայմաններու տակ: Այս տոկունութիւնը կարելի չէ ընկալել իբրեւ սովորական երեւոյթ մը. ան միշտ եղած է գերագոյն գոհաբերութեան, վերապրելու սիրոյն քաջ գոյապայքար մղելու ոգիի դրսեւորման եւ իմաստուն ինքնահաստատման արդիւնք:

Այսօր, սակայն, մենք կը գտնուինք խիստ վտանգաւոր հանգրուանի մը եզրին. մեզ կը վտանգեն ոչ միայն մեզի դէմ ուղղուած արտաքին սպառնալիքները, այլեւ մեր սեփական եւ ներքին տրոհումները, պառակտումները, մեր անմիաբանութիւնը, ինքնավստահութեան պակասը, մեր եսասիրութեան եւ ունայնութեան վրայ յամառութիւնը: Եթէ մենք հիմա քաջութիւն չդրսեւորենք վերագտնելու մեզ որպէս ազգ՝ ոչ թէ որպէս շահագրգիռ ցեղախումբ մը, այլ որպէս պատմականօրէն վիրաւոր, բայց արժանիքներով հարուստ, ընդունակ եւ գործունէ ժողովուրդ, ապա մենք կը կորսնցնենք այն ամէնը, ինչ կրնայինք ունենալ մեր նուիրական հայրենիքին մէջ՝ ապահով ապագայ մը կերտելու մեր վերջին հնարաւորութիւնը:

Բաւարար չէ խօսիլ հայրենիքի մասին. հայրենիքը ո՛չ խօսք է, ո՛չ ալ լոկ սիրերգութիւն: Հայրենիքը համակ յանձնառութիւն է, անձնական կեանքիդ հետ առնչուած գոյութենական արժէք, կարօտ մշտական ներդրումներու՝ քաղաքականապէս, տնտեսապէս եւ մշակութային առումով: Բաւարար չէ ողբալ Ցեղասպանութեան մասին, այլ պէտք է ի գին ամէն ինչի կանխարգիլել կարենալ նոր ցեղասպանութիւններու սպառնալիքը: Հարկ է, ընդհակառակը, պատմական իրադարձութիւններէն սորվիլ՝ պատմութեան գոհը չմնալ, այլ որպէս փինիկ հուրի եւ մոխիրներու ընդմէջէն վերածնիլ, դառնալ հզօր ու բարգաւաճ ազգ եւ ժողովուրդ: Զիրար մեղադրելը ոչինչ կը բերէ, իսկ յաջողութիւն կը բերեն զիրար լսելը, կառուցողական երկխօսութիւն մշակելը, նպատակային գործելը, իսկ ի պահանջել հարկին՝ միասին հարուածելը:

Հայաստան առասպել մը չէ: Այսօր ան ո՛չ հզօր, ո՛չ հարուստ եւ գուցէ խոցելի պետութիւն մըն է, որ ստոյգ պէտք ունի մեր միասնութեան, մեր խելամտութեան եւ վճռակամութեան: Եթէ մենք մեր երբեմնի հզօր հայրենիքէն մեզի բաժին մնացած այս փոքր երկիրը չպահենք, ապա ուրիշը պիտի չպահէ զայն մեզի համար: Բայց եթէ մենք լուրջ ենք՝ իսկապէ՛ս լուրջ,



իրապէ՛ս սիրելու մեր հայրենիքը, ոչ լոկ խօսքով, այլ միանալով, բռնցքուելով ու արիութեան գործեր իրականացնելով, ապա գուցէ ուշ ենք, բայց տակաւին ոչ-ուշացած:

Յաւարտ բանիս պիտի ուզէի մէջբերում մը ընել լիբանանցի գրող եւ փիլիսոփայ Ժըպրան Խալիլ Ժըպրանի մէկ նշանակալից «Pity the Nation» («Խղճա՛ ազգին») խորագրով քերթուածէն.

Խղճա՛ այն ազգին, որ լեցուն է հաւատալիքներով, բայց սնանկ է կրօնով:

Խղճա՛ այն ազգին, որ իր վրայ կը կրէ տարագ մը՝ զոր ինք չի մաներ,

Կը սնանի հացահատիկով՝ զոր ինք չի քաղեր,

Կ'ըմպէ գինի մը, որ չի հոսիր իր սեփական հնձանէն:

Խղճա՛ այն ազգին, որ կը ծափահարէ յոխորտացողին որպէս հերոս,

Իսկ շողշողուն բռնակալը կը պատուէ որպէս բարեգործ:

Խղճա՛ այն ազգին, որ կ'արհամարհէ կիրքը իր երագներուն մէջ,

Բայց կը յանձնուի անոր, երբ արթուն է:

Խղճա՛ այն ազգին, որ իր ձայնը չի բարձրացներ,

Բացի երբ կը քալէ յուղարկաւորութեան ետեւէն:

Կը պարծենայ կեցած իր աւերակներուն վրայ, եւ կ'ըմբոստանայ միայն,

Երբ իր վիզը դրուած է սուրին ու կառափնատին միջեւ:

Խղճա՛ այն ազգին, որուն պետական գործիչը աղուէս մըն է,

Փիլիսոփան՝ խեղկատակ մը,

Իսկ մշակոյթը կարկատելու եւ միմոսութեան արուեստն է:

Խղճա՛ այն ազգին, որ իր նոր դեկավարը կ'ողջունէ շեփորահարումներով,

Բայց զայն շուտով կը ճամբէ նուաստացուցիչ սուլոցով՝

Գէթ կրկին շեփորահարումներով դիմաւորել կարենալու համար մէկ ուրիշը:

Խղճա՛ այն ազգին, որուն իմաստունները տարիներու ընթացքին համրացած են,

Իսկ զօրեղները տակաւին կը քնանան օրօրոցներու մէջ:

Խղճա՛ այն ազգին, որ տրոհուած է բեկորներու,

Բայց ամէն մէկ բեկոր ինքն իրեն կը համարէ ազգ մը³:

Ժընեւ, 23 յուլիս 2025

Գ. օր պայծառակերպութեան պահոց

ԻՐԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՑ



Հայկական Գանձակ քաղաքը (հայերէն գանձ բառից, պարսկա-թուրքական անուանմամբ՝ Գեանջա, ապա՝ Կիրովաբադ) գտնուում է Մեծ Հայքի Ուտիք նահանգում:

Քաղաքը հիմնադրուել է 846 թուականին և շրջապատուած է եղել հայկական բազում գիւղերով ու վանքերով: Յատկապէս նշանաւոր է եղել աւելի վաղ (751 թ.) կառուցուած Դասնոյ վանքը, որտեղ հայ մեծանուն վարդապետ Միսիթար Գոշը գրել է իր «Դատաստանագիրքը»...

Հայ ստեղծարար շինարարների, հմուտ առեւտրականների և բազմաշնորհ կրթական-մշակութային գործիչների շնորհիւ Գանձակն արագօրէն զարգացել է ու դարձել տարածաշրջանի վարչա-

տնտեսական և հոգեւոր կենտրոնը, որը մեր պատմիչները (Վարդան Արեւելցի, Կիրակոս Գանձակեցի) կոչել են «Գանձակ Հայոց» կամ «Գանձակ Առանի»:

9-րդ դարի վերջից մինչեւ 12-րդ դարը Գանձակում է հաստատուել Աղուանից Հայոց կաթողիկոսութեան գահը: Քաղաքը նախապէս ընդգրկուել է Բագրատունեաց թագաւորութեան կազմում, ապա Հայաստանի միւս գաւառների ու քաղաքների նման ենթարկուել է արաբների, այնուհետեւ՝ սելջուկ թուրքերի ասպատակութիւններին ու գերիշխանութեանը:

12-րդ դարի վերջին և յաջորդ հարիւրամեակի սկզբներին Գանձակն իր շրջակայքով ազատագրուել է սելջուկներից ու ընդգրկուել Զաքարեան իշխանապետութեան մեջ՝ դառնալով, ըստ սկզբնաղբիւրների, հայաեռոյտ, հարուստ և ամուր բերդաքաղաք:

1236 թուականին քաղաքն աւերել են թաթար-մոնղոլները: Այդուհանդերձ, շրջակայ վանքերում շարունակուել է հայ կրթական-մշակութային կեանքը: Յայտնի են բազում ձեռագիր մատեաններ, որոնք ընդօրինակուել են 14-15-րդ դարերում «ի յերկիրս Գանձակայ»:

16-րդ դարում Գանձակը վերակառուցուել է և մինչեւ 19-րդ դարի սկիզբը անցել Սեֆեան Պարսկաստանին՝ որպէս առանձին խանութեան կենտրոն:

Այս ժամանակաշրջանում հայ և օտար աղբիւրների վկայութեամբ Գանձակի ու նրա շրջակայքի բնակչութիւնը հիմնականում (եթէ ոչ ամբողջապէս) կազմել են հայերը: Նրանք շարունակել են շենացնել իրենց հայրենի երկիրը, կառուցել բազում քաղաքացիական ու հոգեւոր շինութիւններ:

Այսպէս, 1633 թուականին է կառուցուել Գանձակի հայոց Սուրբ Յովհաննէս Մկրտիչ մայր եկեղեցին (լուսանկարում պատկերուածը): 18-րդ դարի կառուցներից են քաղաքի Սուրբ Ամենափրկիչ, Սուրբ Աստուածածին, Սուրբ Սարգիս, Սուրբ Թադէոս եկեղեցիները...

1804 թուականից Գանձակն ընդգրկուել է Ռուսական կայսրութեան կազմում, վերանուանուել Ելիզավետպոլ և որոշ ժամանակ անց դարձել համանուն նահանգի կենտրոնը: Այս ժամանակաշրջանում ևս Գանձակում ու շրջակայքում հայութեան թիւը գերակշիռ է եղել:



Ըստ որոշ վիճակագրությունների՝ Ելիզավետպոլ-Գանձակի նահանգում ապրել են շուրջ 400.000 հայեր: Գանձակի հայությունը շարունակել է իր բեղուն ազգային կրթամշակութային կեանքը. գործել են հայկական դպրոցներ, թատերախմբեր, տպագրուել են գրքեր, մամուլ, վերաշինուել են որոշ եկեղեցիներ, կառուցուել է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին...

Աստիճանաբար, յատկապես բազմաթիւ մարդկային կեանքեր իլւած 1905-1906 թուականների հայ-թաթարական ընդհարումներից յետոյ, հայերի թիւը Ելիզավետպոլ-Գանձակի նահանգում բաւական նուազել է, և բազմացել են սելջուկների հետ բուն Ադուանքի ու Հայոց Արեւելեան կողմերի (Կողմանք Արեւելեան) տարածքները թափանցած օղուզ թուրքերը, որոնք կոչուում էին կովկասեան թաթարներ...

Այսրկովկաս ներխուժած օսման թուրքերի աջակցութեամբ թուրքական նոր պետութիւն ստեղծելու համար այդ շինծու երկիրը յանձնուեց նրանց ցեղակից կովկասեան թաթարներին, որոնք աւելի ուշ կոչուեցին ադրբեջանցիներ...

1918 թուականին, երբ արհեստականօրէն կազմաւորուեց կովկասեան թաթարների հռչակած Արեւելեան Անդրկովկասի Մահմեդականների Հանրապետութիւնը, որին քիչ անց տրուեց «Ադրբեջանի Մուսաֆաթական Հանրապետութիւն» անուանումը, նրանում ընդգրկուեցին Պատմական Հայաստանի մի շարք բնակավայրեր, այդ թւում նաև՝ Գանձակը:

Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետութիւնն արդէն ոչ միայն իր կազմում հաստատագրեց Գանձակը՝ ողջ Հիւսիսային Արցախով հանդերձ, այլեւ իւրացրեց Լեռնային Ղարաբաղն ու Նախիջեւանը...

Ելիզավետպոլ-Գանձակը վերանուանուեց Գեանջա, ապա Կիրովաբադ (1935), որ դարձաւ հանրապետութեան երկրորդ քաղաքը: Խորհրդային տարիներին այն դեռեւս հայաշատ էր. ուներ շուրջ 40.000 հայ բնակչութիւն, որը, չնայած ազգային իրաւական սահմանափակումներին ու ճնշումներին, շարունակում էր իր կենսագործունէութիւնը:

Յատկանշական է, որ քաղաքի մի շարք կառոյցներ ստեղծուել են հայ ճարտարապետների նախագծերով: Գանձակն ունեցել է հայկական դպրոցներ, մամուլ, իսկ 1935-1949 թուականներին գործել է հայկական թատրոն...

1988 թուականին, երբ սկսուեց Արցախեան ազատագրական շարժումը, Սումգայիթից յետոյ զանգուածային յարձակումների ենթարկուեցին նաեւ Կիրովաբադ-Գանձակի հայաբնակ թաղամասերը. սկսուեցին ջարդեր ու աւերումներ: Միայն լաւ կազմակերպուած ինքնապաշտպանութեան շնորհիւ տեղի հայութեան մեծագոյն մասը խուսափեց ֆիզիկական ոչնչացումից և տեղափոխուեց Հայաստան ու Արցախ:

Հայկական Գանձակը լիովին հայաթափուեց: Յատկապես Լեռնային Ղարաբաղի ազատագրումից յետոյ, արդէն ըստ ամենայնի թուրքացած և կրկին Գեանջա վերակոչուած Գանձակում ու նրա շրջակայքում, ինչպէս առհասարակ Ադրբեջանի բոլոր բնակավայրերում, պետական ծրագրերով սկսեցին վերացնել նաեւ բոլոր հայկական հետքերը...

Մինչդեռ երբ Ադրբեջանը, անհամեմատելի չափերով, ոչ միայն գողանում, այլեւ անխնայ աւերում էր հայկական մշակութային արժեքները, քաղաքակիրթ աշխարհը մնում էր և շարունակում է մնալ լուռ ու անտարբեր...

ԱՐՄԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ

«ՀԱՅ ԸԼԼԱԼԸ ԻՆՔՆՈՒԹԵԱՆՍ ԱՆԲԱԺԱՆԵԼԻ ՄԱՍՆ Է»

ԴՈԿՏ. ՀՐԱՅՐ ԶԷՊԷՃԵԱՆ



«Հայաստան ծնած եմ եւ երբեք չեմ զգացած որ պէտք է պայքարիմ ինքնութիւնս պահելու համար: 2003 թուականին տեղափոխուեցայ Պարսելոնա եւ խումբ մը հայերով զգացինք հայկական ինքնութիւնը պահպանելու անհրաժեշտութիւնը: 2006 թուականին հիմնեցինք Պարսելոնիայի հայկական

մշակութային միութիւնը»: (Սիրանուշ Սահակեան)

Յունիս 15-20, 2025, Պարսելոնա, Սպանիա:

Մշակոյթի, ազգային ինքնութեան եւ մայրենի լեզուի պահպանման դասախօսութեանս ընթացքին՝ հայկական մշակութային միութեան կազմակերպութեամբ եւ «Հայ Տուն» կեդրոնին մէջ, տեսայ այն մեծ ուժը որ հայերը հոն կ'ուզէին դրսեւորել որպէսզի հայ մնան: Սիրանուշ Սահակեան՝ միութեան հիմնադիր անդամներէն, դուրս հանեց իր հպարտութիւնը երբ ըսաւ. «Հայ ըլլալը ինքնութեանս անբաժանելի մասն է»:

Բայց այդ անբաժանելի մասը պէտք է պահուի:

Պարսելոնայի հայկական գաղութը, որ այսօր կը հաշուէ մօտաւորապէս 4000 անդամ, մեծ համեմատութեամբ կազմուած է Հայաստանէն դուրս եկած հայորդիներով: Փորձեցի տեսնել հայաստանեան սփիւռքի իրայատկութիւնները, որպէսզի աւելի լաւ ձեւով կարենամ համեմատել հայկական դասական սփիւռքին հետ:

Արթիւր Մխիթարեանը ծնած է Երեւան: 2007 թուականին ան իր տիկնոջ հետ եկած է Պարսելոնա: Անոնք ունին երկու զաւակներ, որոնք ծնած են Պարսելոնա: «Հայութիւնը ինծի եւ ընտանիքիս համար առաջին տեղ է», ըսաւ Արթիւր: «Տունը արգիլած եմ սպաներէն խօսիլը: Տիկինս եւ ես ամէն ինչ կ'ընենք, որպէսզի պզտիկները իրենց ինքնութիւնը պահեն»:



Արթիւրը իր ազատ կամքով դուրս եկած է Հայաստանէն: «Վատ չեմ զգար որ Հայաստանը ձգեցի», ըսաւ ան: «Բայց կարօտը հայրենիքին շատցաւ: Օտարութեան մէջ ըլլալով աւելի լաւ կրնամ արժեւորել իմ հայրենիքը»:

Արթիւր ունի իր սեփական աշխատանքը՝ ծաղիկի վաճառականութիւն: Կը զրուցէի հայու մը հետ որ ունի բաւարարուածութիւն եւ ապահովութիւն՝ ընտանիքին կենսամակարդակը պահելու համար: Արթիւր այն հայն է, որու սրտին ու հոգիին մէջ անդադար կը տրոփէ հայկականութիւնը: «Ես Սպանիոյ մէջ աւելի լաւ ճանչցայ թէ ի՞նչ է հայութիւնը», ըսաւ ան:

Ճիշդ է Արթիւրը: Սփիւռքի մէջ կեանքը պայքար է եւ՝ դպրոց: Եթէ մէկ կողմէ կը սորվեցնէ բայց նոյնքան նաեւ քեզ զգաստ կը պահէ:

Պարսելոնայի հայկական մշակութային միութիւնը կազմակերպած է շաբաթօրեայ դպրոց մը, որ ունի աւելի քան 90 աշակերտներ, ուր կը սորվին լեզու, պատմութիւն, մշակոյթ եւ պար: Անոնք ունին ճատրակի դպրոց եւ պատանիները առաջին դիրք գրաւած են Պարսելոնայի պատանեկան մրցաշարքին:

Մարիէթա Յակոբեանը ծնած է Երեւան: 2023 թուականին ան եկած է Պարսելոնա: «Ճարտարապետութիւնը շատ կը սիրեմ եւ այդ գլխաւոր պատճառներէն մէկն էր որ եկայ այս քաղաքը», ըսաւ ան: Մարիէթայի «սէրը» զիս չզարմացուց: Պարսելոնայի գեղեցիկ ճարտարապետութիւնը կը զգլխէ ու կ'անցնի ամէն գեղեցկութիւն:

«Կը հաւատամ որ ազգային եւ մշակութային ժառանգը որ ունիմ միշտ ալ կ'ապրի իմ մէջս», ըսաւ Մարիէթա: «Բայց նոր մօտեցումներ կը փնտռէի, որպէսզի նորը ստեղծեմ»: Մարիէթա երիտասարդ տնտեսագէտ աղջիկն է, որ ունի քննական միտք: «Յեղասպանութիւնը ցաւի յատուկ տեսակ է, որուն մէջէն կը ծնի պայքար եւ այս ցաւ-պայքարը կը մղէ քեզ յառաջանալու կեանքի մէջ, ուր կը ճանչնաս եւ կը յիշես ազգդ եւ կրօնքդ: Յեղասպանութեան ցաւը երբ վերածես պայքարի, անպայմանօրէն կը յաղթես», շարունակեց Մարիէթա:

Մարիէթա հայրենասէր երիտասարդուհին է: «Հայրենիքը հաւատք եւ արժէք է»: Ան կը հաւատայ որ հայրենիքի այս հաւատքը եւ արժէքը կը պահուի ու կը զարգանայ կրթութեամբ: Մարիէթա համոզուած է, որ ներկայ օրերու ճարտարարուեստի յառաջնադասքը կը ստեղծէ բոլոր հնարաւորութիւնները, որ անձ մը կարենայ տարբեր երկիրներու փորձը, փորձառութիւնը եւ դաստիարակութիւնը ներմուծել հայրենի կեանքին



մէջ եւ յառաջխաղացք արձանագրել: Այս ալ սփիւռքի հայկական ուժն է, երբ իւրաքանչիւր սփիւռքահայ իր հետ կը բերէ իր ծնած-ապրած երկրի փորձը եւ կը տրամադրէ հայրենիքի վերելքին: Սփիւռքը «դրամագլուխ» է, որուն լաւապէս տնօրինումը կրնայ մեծ արդիւնքներ նուաճել համահայկական տարբեր օրակարգերու համար:

Անի Սահակեանը ծնած է Հայաստան եւ 2021 թուականին եկած է Պարսելոնա: Անին շատ լաւ կը գիտակցի, թէ ինչքան առանձնաշնորհումներ ունէր հայրենիքի մէջ եւ թէ սփիւռքեան իրականութիւնը ինչքան տարբեր է: «Հայրենիքի մէջ կ'ապրիս կեանք մը եւ չես գիտակցիր, թէ այդ բոլորը ինչ զինով կը պահուի քեզի համար: Երբ Սպանիա եկայ, այդ բոլորը չկային: Չկար նոյնիսկ աւանդական հայկական համայնք, որ զիս կապէր հայրենիքին», ըսաւ Անին:

Անին իր աշխուժ մասնակցութիւնը կը բերէ գաղութին հոգեւոր դաստիարակութեան մէջ: «Սփիւռքի մէջ հայ ապրիլը մարտահրաւեր է, առաքելութիւն, խաչ որ պիտի կրես», շարունակեց Անին: «Այս խաչը պիտի կրենք, որպէսզի նոր սերունդը հայ մեծնայ: Ահա այս ամենէն մեծ տարբերութիւնն է Հայաստանի եւ սփիւռքի մէջ ապրող հայուն պայմաններուն»:

Անին հայուհին է որ չէր բաւարարուէր միայն խօսելով: Ան աշխուժ մասնակցութիւն կը բերէ որպէսզի եկեղեցական կեանքը կազմակերպէ եւ հայկական գաղութը կարնայ ունենալ պատարագ եւ հոգեւոր դաստիարակութիւն:

Անին մօրենական կողմը Արցախէն է: Իր մօրենական ընտանիքը ապրած է Արցախի պատերազմները: Այս իմաստով ան գիտէ արժէքի գիտակցութիւնը եւ անոր պահպանումը: «Կուգեմ որ իմ հայրենակիցները որ Հայաստան կ'ապրին, պինդ պահեն մեր արժէքները՝ մանաւանդ ներկայ օրերուն», եզրափակեց Անին:

Սփիւռքը ինչքան բարդ է: Շատ են սփիւռքի մէջ ապրող իւրաքանչիւր հայուն զգացումները, մարտահրաւերները ու պայքարը:

Անի Բայաթեանը ծնած է Երեւան եւ Պարսելոնա եկած է 2015 տարին: «Տան մէջ միայն հայերէն կը խօսինք», ըսաւ Անին:

Անին գործունէայ անդամ է Պարսելոնայի մշակութային միութեան եւ անոր Հայ Տան մէջ: «Ամէն միջոցառում կը կազմակերպենք որպէսզի հայ նոր սերունդը հայ պահենք», ըսաւ Անի:



Երբ կը խօսէի Անիին հետ, կը տեսնէի թէ ինչքան սէր եւ յարգանք ունի Հայաստանի եւ հայկական արժեքներու նկատմամբ: Երբ հարցուցի, թէ Հայաստանը իրեն համար ի՞նչ կը նշանակէ, ան ըսաւ. «Հայաստանը տունն է, մանկութիւնն եւ կարօտ»:

Հապա՞ Հայաստանի ապագան: «Բան չեմ կրնար ըսել», ըսաւ Անի:

Հայաստանը հայրենիք է, որ կու տայ ինքնութիւն, պատկանելիութիւն եւ հպարտութիւն, սակայն ներկայ օրերու իրավիճակը յուսահատութեան եւ յուսախաբութեան մթնոլորտ կը ստեղծեն:

Միջին արեւելեան ժողովրդային առածը կ'ըսէ. «Լեռներ իրար չեն հանդիպիր բայց մարդիկ իրար կը հանդիպին»: Այս իմաստով շատ հաճելի եւ հետաքրքրական էր դարձեալ հանդիպիլ Տաթևի Սուլեանի: Ան վեց տարիներ վարած էր Շարժայի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիի գործավարի պաշտօնը: Տաթև ծնած է Քէսապ, ուսանած է Կիլիկիոյ կաթողիկոսարանի դպրեվանքին մէջ, աւարտած է Համազգայինի հայագիտական հիմնարկը, եւ մագիստրոս վկայական ստացած է՝ պատմութեան մէջ, Երեւանի պետական համալսարանէն: 2012-ին ան հասած է Պարսելոնա: «Այլեւս հոս եմ եւ հոս պիտի ապրիմ», ըսաւ Տաթև:

Եւ հոս ապրելու գիտակցութեամբ՝ Տաթև կը կերտէ իր անձնական, ընտանեկան եւ հաւաքական-ազգային կեանքը: Եւ ինչպէս չկերտել ազգային կեանքեր երբ Տաթևի ակունքները կուգան ուժեղ Քէսապէն եւ աշխուժ Պէյրութէն: «Ես շատ բան կը պարտիմ միջին արեւելքի եւ անոր դաստիարակութեան», ըսաւ Տաթև: Ան ստանձնած է մշակութային միութեան ատենապետութեան պատասխանատուութիւնը եւ ոչ մէկ ճիգ կը խնայէ հայապահպանումի առաքելութեան մէջ: Ան իր ազգային ծառայութիւնը կ'որակէ որպէս «կամաւոր բանակ եւ ազգային պարտք»:

«Հայուն ազգային ինքնութեան կերտումը եւ ապահովութիւնը միայն դպրոցով չըլլար», ըսաւ Տաթև: «Կարելոր է, որ հայեր իրար հետ ունենան կապ եւ հաղորդակցութիւն: Շատ մեծ գոհողութիւններով ստեղծեցինք Հայ Տունը, որպէսզի հայեր Պարսելոնայի մէջ համախմբուին»: Ես տեսայ թէ ինչպէս Հայ Տունը կը համախմբէ հայութիւնը:

Հայապահպանումի մեր սփիւռքեան «պատերազմի»ն մէջ, մենք պէտք ունինք Տաթևի նման նուիրեալներու՝ որոնք կը գիտակցին կամաւոր բանակի եւ ազգային պարտքի կարեւորութեան:



Լեւոն Գրիգորեանը փաստաբան է եւ միջազգային օրէնսգիտութիւններու մասնագէտ: Լեւոնը Հայկական Բարեգործական Միութեան Սպանիոյ մասնաճիւղի ատենապետն է եւ ազգային-եկեղեցական լայնածաւալ գործունէութիւն կը ծաւալէ: Անոր հայրը Հալէպէն է եւ մայրը Պաքուէն: Լեւոն ամուր կապուածութիւն ունի Արցախի եւ անոր հիմնախնդրին: 44 օրերու պատերազմի ընթացքին Լեւոն ունեցած է բեղուն գործունէութիւն, երբ իր բոլոր իրաւական լծակները ի սպաս դրած է արցախեան հիմնահարցին քարոզչութեան՝ Սպանիոյ պետական եւ քաղաքական լայն շրջանակներու մէջ: «Արցախը հայ ժողովուրդի սիրտն է ու Հայաստանի փրկութիւնը», ըսաւ Լեւոն: «Արցախը տալով մենք մեր մարմնէն մաս մը տուինք»:

Եւ դարձեալ Սիրանուշը՝ «Հայոց ցեղասպանութիւնը վերք է, աւելի ճիշդ ծննդեան նշան որ ժառանգած եմ ծնողքէս եւ կը փոխանցեմ իմ զաւակներուս: Իսկ Արցախը բաց վերք է, որ երբեք չսպիանար»: Սիրանուշ ամուսնացած է Տաթև Սուլեանի հետ: «Դասական սփիւռքի համար հայ ինքնութիւնը եւ մշակոյթը պահելը եղած է անհրաժեշտութիւն եւ փոքր տարիքէն սկսած: Հայաստանցիները, որոնք ներգաղթած են Հայաստանէն, իրենց համար անհրաժեշտութիւն եղած է գոյատեւել եւ պահել ընտանիքները: Շատերը նոյնիսկ չեն մտածեր հայ ինքնութիւնը պահելու մասին»:

Դասական թէ հայաստանեան սփիւռք, կայ ու կը մնայ մէկ հիմնական իրականութիւն, թէ հայ ըլլալը ինքնութեան անբաժանելի մաս ընելն է:

Լեւոնը շեշտեց այս հայու ինքնութեան անբաժանելի մաս ըլլալու իրողականութիւնը:

Սպանիոյ զօրավար Ֆրանքոն եւ Սուրիոյ նախագահ Հաֆէզ էլ Ասատը ունեցած են բարեկամական ջերմ կապ: Այս երկու երկիրները՝ փոխադարձ համաձայնութեամբ, բաւական թիւով քրիստոնէայ սուրիացի ընտանիքներ տեղափոխած են Սպանիա՝ ներառեալ հայեր: Այս ընտանիքները ժամանակի ընթացքին ձուլուած են տեղական հաւաքականութիւններուն մէջ: «Այսօր այդ հայ ընտանիքներուն նոր սերունդը մէջտեղ եկած է եւ կը գիտակցի իր հայկական ինքնութեան», բացատրեց Լեւոն: «Արդէն իսկ 25 հայ ընտանիքներ հաւաքած ենք, որոնք կուզեն վերագտնել իրենց ինքնութիւնը»:

Մեր հայկական օրակարգերը ինչքան շատ են եւ բարդ: Բայց կայ մէկ մեծ առաքելութիւն-պարտականութիւն՝ հայկական ինքնութիւնը անբաժանելի մասը ընել իւրաքանչիւր հայու համար: Այս ընելու համար հայը պէտք ունի զգաստութեան: Զգաստութիւնը որ մեր կարողականութիւնները պիտի համախմբէ:



Այս իմաստով...

Հայաստանը պետք է վերագտնէ իր ներքին համերաշխութիւնը եւ համակեցութիւնը՝ վերջ դնելով իր բոլոր անհասկացողութիւններուն:

Հայաստան եւ Սփիւռք պետք է վերստեղծեն իրենց կապը եւ համագործակցութիւնը՝ որպէս գործակից եւ զիրար ամբողջացնող օղակներ:

Արցախի հիմնահարցը պիտի պահել մեր օրակարգի հիմնական եւ իրականացնելիք մարտահրաւեր:

Այս եռամիասնութիւնը ապահովելով պիտի ստեղծենք ուժ՝ հայուն ուժը: Այս ուժը հայուն ինքնութիւնը պիտի դարձնէ իր անբաժանելի մասը: Այս հայուն ինքնութիւնը հայուն կեանքը պիտի դնէ պատմութեան շարունակականութեան գործընթացին մէջ:

Նիկոսիա, 1 Յուլիսի, 2025

ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ ԿԸ ՎԵՐԱԲԱՆԱՆ ԻՐԵՆՑ ԴՌՆԵՐԸ – (3)

11/10/2025



Ըսինք, որ հայագիտական հիմնարկներէ շրջանաւարտներուն մայր պարտականութիւնն է **հայերէն դասաւանդել** մեր վարժարաններէն ներս: Դասաւանդել

նաեւ **կրօնագիտութիւն** եւ **հայոց պատմութիւն**:

Այսօր, մեր դպրոցներու հայերէնաւանդ դասատուները, լայն համեմատութեամբ, արդէն կը պատկանին սփիւռքածին Գ. սերունդին:

Որքան ալ անոնց մէջ գտնուին նորընծայ ուսուցչուհիներ, որոնք մեկնող հիներուն տեղը կը բռնեն պատուով ու արժանաւորապէս, գաղտնիք չէ այնուամենայնիւ, որ հայերէնի որակեալ դասատուներ գտնելը մղձաւանջ դարձած է ամէնուրեք: Պաշտօնին թեկնածուները յաճախ չունին իրենց դասանիւթին ենթադրած բաւարար գիտելիքն ու հմտութիւնը. կը դասաւանդեն կաղն ի կաղ...: Ընդհանրապէս չունին նաեւ իրենք զիրենք ինքնամշակումի ենթարկելու, կատարելագործուելու մղումն ու ցանկութիւնը, որ բանալին է իսկակա՛ն յաջողութեան (կը ճանչնանք ուսուցչուհիներ, որոնք քսան ու աւելի տարիներ պաշտօնավարելով հանդերձ՝ տեղքայլի մէջ են, չե՛ն զարգացուցած իրենք զիրենք): Իսկ



դպրոցները, անճար ու անգոր, ստիպուած են կամայ-ակամայ գոհանալ առկայ ուժերով, առ ի չգոյէ լաւագոյնին...:

Այս տխուր իրավիճակը խոցած է մեր դպրոցները իրենց ամենէն զգայուն կէտէն: Եթէ մեր դպրոցներուն հիմնադրութեան բո՛ւն նպատակը մայրենի լեզուի ուսուցումն էր, ու այդ նպատակին իրագործումը հիմա գոհացուցիչ չէ ու չի գտնուիր ցանկալի մակարդակի վրայ, ուրեմն՝... «փտած բան մը կայ Դանիոյ թագաւորութեան մէջ»: Չենք խորհիր, թէ մեր դպրոցներէն ներս գիտական ու գրական միւս առարկաներուն ուսուցումը եւս կը խարխափի, կը կաղայ, իր ընդհանրութեան մէջ: Ո՛չ: Բո՛ւն խոցելին հայոց լեզուն է, աւա՛ղ:

Այժմ հարց տանք. **ինչե՞ր կրնանք ընել կացութիւնը բարոքելու համար:**

Կը նշեմ քանի մը հիմնական կէտեր, առաջադրութիւններ, համոզուած ըլլալով որ անոնց իրագործումը անիրականանալի չէ: Կը բաւէ որ մեր ազգային վերին մարմինները **տեսլական** ունենան:

ա) Հայերէնաւանդ ուսուցիչներու վերապատրաստութիւն. ուսուցիչները մի՛շտ ալ կը կարօտին վերաթարմացումի, որովհետեւ դարաշրջանը **մասնագիտութեան դարն է:** Հարկ է ուղղել ու վերապատրաստել ուսուցիչները՝ ոչ միայն մանկավարժական նորանոր գիտելիքներով զինելով զանոնք, այլեւ դասաւանդութեան եղանակի ու ձեւի արդիաշունչ մեթոտներու ծանօթացնելով զիրենք: Դպրոցները, զոնէ 3-4 տարին անգամ մը, սերտուած ծրագրով մը պարտին ամառնային վերաորակաւորման լսարաններ սարքել հայ ուսուցիչներուն համար: Զորօրինակ, պէտք է փարատել կարգ մը բառերու ուղղագրութեան երկձեւութիւնը (յետագա՞յ, թե՞ հետագայ, ամբան ու ձմբա՞ն, թե՞ ամռան ու ձմռան...), գլխագիրի գործածութեան, կէտադրութեան եւ մա՛նաւանդ տողադարձի կալուածի համատարած շփոթութիւնները: Ասիկա օգտակար պիտի ըլլայ բոլորին՝ դպրոցին, ուսուցիչին ու աշակերտին հաւասարապէս:

բ) Ուսուցչանոց. ուսուցչական պաշտօնի թեկնածուներուն համար բացառիկ կարեւորութիւն պիտի ներկայացնէ երկամեայ դասընթացքով հայկական ուսուցչանոց մը: Այսպիսի հիմնարկ մը պիտի զինէ ու նախապատրաստէ թեկնածուները՝ ինքնավստահօրէն ստանձնելու իրենց վսեմ պաշտօնը: Մեր գաղութներէն ոմանք, անցեալին, յաջողապէս կատարած են նման փորձեր եւ մեծապէս օգտուած: Յիշենք Կիպրոսի Մելգոնեան վարժարանի երբեմնի նշանաւոր ուսուցչանոցը (գործած՝ 1934-68) կամ նոյնիսկ՝ Արժանթինի մայրաքաղաք Պուէնոս Այրէսի մէջ 90-ականներուն իրագործուած յանդուգն փորձը («Վահէ Չննոգեան ուսուցչանոց», գոյատեւած՝ հինգ տարի), որմէ այնքա՛ն օգտուեցան տեղւոյն հայկական վարժարանները եւ որուն պտուղները կը քաղեն առ այսօր...:



Աչքի առջեւ ունենալով սփիւռքեան ամենօրեայ վարժարաններու տեղաբաշխումի մօտաւոր քարտէսը, հայկական ուսուցչանոցի մը անյապաղ կարիքը ունին ամենէն առաջ **Փարիզը, Լոս Անճելըսն ու Պոլիսը:**

Փարիզը կը պահէ հայկական ամենօրեայ 4 վարժարան, իսկ Լոս Անճելըսը՝ 12: Ֆրանսահայ ու ամերիկահայ մեր գաղութները, – փա՛ռք Աստուծոյ, – իրենց ծոցին մէջ ունի՛ն անհրաժեշտ տարրերն ու հարկաւոր նիւթականը՝ գլուխ հանելու համար նման կենսական ծրագիր մը: Անոնք պէտք չէ տնտնան: Իսկ Պոլիսը, որ առ այսօր իր ծոցին մէջ կը պահէ 15 հայկական վարժարաններ՝ մօտ 2660 աշակերտներով (կրթական նոր տարեշրջանի թիւն է այս), կ'ապրի հայերէնի ու կրօնի ուսուցիչներ ապահովելու սուր տագնապ մը: Ազգ. Պատրիարքարան, Ուսուցչաց Հիմնարկ եւ Ուսուցչաց Միութիւն երրորդութիւնը գործակցաբար կրնա՛յ իրագործել բաղձալին:

Մեր առաջարկած ուսուցչանոցը կրնայ փոխարինուիլ անշուշտ հայագիտական հիմնարկներով ալ: Պէտք չէ խուսափիլ նիւթական ներդրումներ կատարելէ: Լիբանան պատուաբեր փորձ ունեցած է այս մարզին մէջ՝ իր մէկէ աւելի հաստատութիւններով (Հայկազեան գոլէճ, Հիւսիսեան եւ Համազգայինի հիմնարկներ, որոնք փակուած են դժբախտաբար): Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը, վերջին 12 տարիներուն, կը ջանայ վերարծարծել այդ մարած ջահը՝ իր կողմէ հաստատուած «Հայագիտական դասընթացք»-ներով: Նոյնը կ'ընէ, ինչպէս ըսինք, Հալէպի Համազգայինը: Պէտք է օրինակ առնել անոնցմէ: Իսկ արդէն իսկ գոյութիւն ունեցող ձեռնարկները պէտք է ամրապնդուին, տեւականանան:

գ) Նիւթական խայծեր՝ ուսուցչական թեկնածուներու. մեր երկրորդական վարժարաններու կարգերուն մէջ անպայման ունինք կամ կ'ունենանք ուսանողներ, որոնք հայոց լեզուի դասերուն նկատմամբ հոգածութիւն ու ջանասիրութիւն կը ցուցաբերեն զգալի խանդավառութեամբ: Պէտք է միշտ ենթադրել, թէ մեր ապագայ հայերէնաւանդ ուսուցիչները անո՛նց մէջ թաքնուած են...: Եւ ուրեմն, պէտք է դրամական պարգեւներով, նախանձելի մրցանակներով ու տնտեսապէս գոհացուցիչ գործի հեռանկարով զանոնք մղե՛լ դէպի հայագիտական ուսում: Յումպէտս պիտի չկորսուին այդ դրամաշնորհները:

Եւ հոս, այս կէտին վրայ, կը բանանք փակագիծ մը: Ատենէ մը իվեր քուէյթաբնակ գործարար մը, ամէն տարի դրամական կարելոր պարգեւներ կը յատկացնէ Հալէպի (որքան որ գիտենք՝ նաեւ Լիբանանի) պետական պաքալորիայի քննութեանց բարձրագոյն երեք նիշերը հաւաքող երեք աշակերտներու, «Ներսէս Շնորհալի մրցանակ» անունով: Շա՛տ բարի: Բայց կ'ենթադրենք որ **աւելի հայանպաստ դեր ու ներդրում կ'ունենայ այդ մրցանակը՝** եթէ շնորհուի հայերէնի քննութեանց (երկրորդականի երեք կարգերուն մէջ՝ հետեւողաբար) բարձրագոյն նիշ հաւաքողներուն: Նուիրատուն ու կրթական վարիչները ինչո՞ւ չեն խորհած այս մասին:

ԵՐՈՒՍԱՂԵՍԻ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՐ ԿՐ ՄԵՐԺԷ ԻՍՐԱՅԷԼԱՑԻ ՆԵՐԴՐՈՂԻՆ ՀԵՏ ԿՆՔՈՒԱԾ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Յարութ Սասունեան

www.TheCaliforniaCourier.com



Այս վերջին դրուագն է վեճին մէջ «Կովերու պարտեզ»-ը, որ կը կազմէ Երուսաղէմի պատրիարքարանի Հայկական թաղամասին գրեթէ 25 տոկոսը, իսրայէլացի ներդրողին վարձու տալու:

2021-ին հայոց պատրիարք Նուրհան արք. Մանուկեան պայմանագիր կնքած է իսրայէլացի գործարարին հետ՝ 98 տարիով վարձակալութեան յանձնելու պատրիարքարանի 11.500 քառակուսի մետր տարածքը՝ շքեղ պանդոկ մը կառուցելու նպատակով:

Հակառակ բազմաթիւ խնդրանքներուն՝ ո՛չ եւ, ո՛չ ալ հայ հասարակութիւնը կրցանք տեսնել

պայմանագիրին պատճէնը: Չենք տեսած նաեւ պատրիարքարանին եւ Երուսաղէմի հայ համայնքին կողմէ վարձակալութեան վաւերականութիւնը վիճարկող երկու դատական դիմումներուն պատճէնները: Աւելի՛ն. հայ համայնքի փաստաբանները պատրաստած են 184 էջերէ բաղկացած փաստահաւաք գեկոյց մը, որ նոյնպէս գաղտնի պահուած է: Չունինք նաեւ իսրայէլացի ներդրողին կողմէ տեղւոյն հայ համայնքին դէմ ներկայացուած հակընդդէմ հայցին պատճէնը:

Կարելոր է գիտնալ պայմանագիրին պայմանները: Պատրիարքը ճիշդ ի՞նչ համաձայնած է տալ իսրայէլացի ներդրողին: Ի՞նչ փոխհատուցում խոստացած է իսրայէլացի ներդրողը պատրիարքարանին վարձակալութեան դիմաց: Արդեօք պայմանագիրը կ'արտօնէ՞ միակողմանի չեղարկում, թէ՞ դադրեցումը կը պահանջէ երկուստեք համաձայնութիւն: Ի՞նչ խախտումներու մէջ կը մեղադրուէին իսրայէլացի ներդրողն ու հայոց պատրիարքարանը բարձրացուած դատերուն մէջ:

Այս կարելոր փաստաթուղթերը գաղտնի պահելու առումով ամենէն մտահոգիչը այն է, որ կողմերը այս վեճը կը նկատեն անձնական հարց: Բայց եւ այնպէս, պատրիարքարանին ունեցուածքը կը հետաքրքրէ ամբողջ հայ ժողովուրդը, եւ ոչ թէ՛ միայն պատրիարքարանը կամ տեղւոյն համայնքը: Դարեր շարունակ աշխարհի տարբեր ծագերէն հայ ուխտաւորներ կատարած են առատաձեռն նուիրատուութիւններ, որոնք կարելիութիւն տուած են պատրիարքարանին ձեռք ձգել այդ ունեցուածքներէն շատեր:

Դատերուն բովանդակութիւնը գաղտնի պահելը անիմաստ է: Որեւէ դիմում դատարան ներկայացնելով՝ պաշտպանողը կը ստանայ անոր պատճէնը: Հետեւաբար թէ՛ հայ



մեղադրողները, եւ թէ՛ իսրայէլացի պաշտպանեալ կողմը գիտեն դատական հայցերուն բովանդակութեան մասին: Անտեղեակ են միայն աշխարհասփիւռ հայերը:

Աւելի՛ն. նկատի ունենալով Արեւելեան Երուսաղէմի վիճարկուող քաղաքական կարգավիճակը՝ այս վարձակալութիւնը կարելոր է միջազգային հանրութեան, որուն մէջ՝ պաղեստինցիներուն, արաբական կառավարութիւններուն, Իսրայէլի պետութեան եւ բոլոր հայերուն, մասնաւորաբար՝ Երուսաղէմի նօսրացող հայ համայնքին համար: Չարմանալի չէ, որ Պաղեստինի իշխանութիւնը բողոքի խիստ նամակ յղած էր հայոց պատրիարքարանին՝ պատրիարքարանի սեփականութեան մէկ հսկայ հատուածը իսրայէլացի ներդրողի վերահսկողութեան տակ դնելու որոշման վերաբերեալ:

Երուսաղէմի պատմական պահպան Յորդանանի թագաւորը եւ Պաղեստինի ազգային ինքնավարութեան ղեկավար Մահմուտ Ապպարը հրապարակեցին միացեալ յայտարարութիւն՝ մեղադրելով պատրիարքը, միաժամանակ կասեցնելով արքեպիսկոպոս Մանուկեանի ճանաչումը՝ իբրեւ Երուսաղէմի, Սուրբ Երկրի եւ Յորդանանի Հայ եկեղեցւոյ պատրիարք: Պաղեստինի ինքնավարութեան ներկայացուցիչը նոյնիսկ խոստացած էր վճարել վարձակալութեան պայմանագիրը չեղարկելու պարագային նախատեսուած տուգանքը:

2021 թուականի պայմանագիրը ստորագրած են՝ պատրիարքը, պատրիարքարանի գլխաւոր լուսարարապետ Մեւան արք. Ղարիբեանը եւ պատրիարքարանի կալուածքներու տեսուչ Պարետ Ծ. վրդ. Երեցեանը: Վէճի բռնկումէն ետք պատրիարքը Պարետ Ծ. վարդապետը դարձուց քաւութեան նոխազ եւ կարգալոյծ ըրաւ զայն՝ մեղադրելով խաբէութեան մէջ: Անհաւատալի է՝ պատրիարքը կը պնդէր, որ պայմանագիրը ստորագրած է առանց զայն կարդալու: Եթէ ան չստորագրէր, միւս երկու ստորագրութիւնները ոչ մէկ իմաստ պիտի ունենային: Պատրիարքը ինչպէ՞ս կրնայ 98 տարուան վարձակալութեան պայմանագիր կնքել պատրիարքարանի տարածքին 25 տոկոսին վերաբերեալ՝ առանց նախապէս զայն կարդալու կամ առնելու իրաւական կարծիքը իր փաստաբաններուն, որոնք, ըստ լուրերուն, ներկայ եղած են: Աւելի՛ն. նման երկարաժամկետ վարձակալութեան պայմանագիրի կնքումը՝ առանց Ընդհանուր ժողովի հաստատման, խախտում է պատրիարքարանի կանոնադրութեան: 2021 թուականին պատրիարքարանի միաբանութեան 17 անդամները, որոնք կը կազմեն անոր գերագոյն մարմինին մեծամասնութիւնը, երկու յայտարարութիւն հրապարակեցին վարձակալութեան դէմ՝ պնդելով, որ պատրիարքը լիազօրութիւններ չունէր զայն ստորագրելու:

Վերջին ամիսներուն իսրայէլացի ներդրողը եւ հայոց պատրիարքարանը քանի մը անգամ հանդիպած են 2021 թուականի պայմանագիրը վերատեսութեան ենթարկելու համար՝ առաջարկելով կրճատել վարձակալութեան պայմանները, օրինակ՝ տարածքը 11.500 քառակուսի մէթրէն նուազեցնել մինչեւ 7200 քառակուսի մէթրի: Տեղւոյն համայնքը դէմ եղած է առաջարկուող վերատեսութեան՝ վախճալով, որ անոր համաձայն գտնուելով՝ պիտի վաւերացնէ 2021 թուականի սկզբնական վարձակալութեան պայմանագիրը:

Նախորդ շաբաթ 20 ականաւոր իսրայէլացի գիտնականներ, իրաւաբաններ եւ մշակութային գործիչներ հրատապ յայտարարութիւն տարածեցին՝ աջակցելով Երուսաղէմի Հայկական թաղամասին եւ մերժելով «Կովերու պարտեզ»-ի վարձակալութեան պայմանագիրը:

Վերջապէս, պատրիարքարանի Ընդհանուր ժողովի 28 անդամները՝ աշխարհի տարբեր ծագերէն, 24 սեպտեմբերին համախմբուեցան Երուսաղէմի մէջ՝ առաջարկուող



վերատեսութեան ենթարկուած վարձակալութեան պայմանագիրի վերաբերեալ պաշտօնական դիրքորոշում որդեգրելու նպատակով:

Երկար քննարկումներէ ետք Ընդհանուր ժողովի անդամներուն ճշող մեծամասնութիւնը որոշեց.

1) Եղբայրութեան անդամներուն կողմէ հոկտեմբեր 2021-ին եւ 15 նոյեմբեր 2021-ին գործարքը դատապարտող յայտարարութիւնները կը մնան ուժի մէջ եւ պարտաւորեցնող են:

2) 2021 թուականի յուլիս 8-ին ստորագրուած «Կովերու պարտէզ»-ի 2021 թուականի վարձակալութեան պայմանագիրը կը նկատուի անօրինական, հակականոնագրային եւ անվաւեր՝ Ընդհանուր ժողովի հաստատման բացակայութեան պատճառով:

3) Ընդհանուր ժողովը պաշտօնապէս կը մերժէ թէ՛ յաւելուածը, թէ՛ միջնորդութեամբ ձեռք բերուած հաշտութեան համաձայնագիրը:

4) Ստեղծուած է հինգ հոգեւորականներէ կազմուած յանձնաժողով, որ պատրիարքարանի իրաւաբանի հետ պիտի շարունակէ հետապնդել իսրայէլացի ներդրող «Xana Gardens» ընկերութեան դէմ ներկայացուած չեղարկման հայցը:

Կը մնայ տեսնել, թէ ի՞նչ որոշում պիտի տայ իսրայէլեան դատարանը պատրիարքին կողմէ 2021 թուականին ստորագրուած վարձակալութեան պայմանագիրի օրինականութեան վերաբերեալ:

ՏԵՍԱԿԷՏ

ՀՈՂԱԿՏՈՐ, ՀԱՅՐԵՆԻՔ

Patria, Fatherland...



Պատմութեան գիրքերը կ'ըսեն, թէ Արարատ լեռան շուրջ կար ազգ մը՝ իր Հայաստան-Armenia կոչուած հայրենիքով: Գիտունները եւ կապոյտ մոլորակի մեծ ու պզտիկ ղեկավարները, եթէ իրենց գովաբանած արդարութեան արեւի լոյսով փնտռէին ՀԱՅ կոչուած ազգը եւ անոր ՀԱՅԱՍՏԱՆ կոչուած հայրենիքը, այսօր ի՞նչ պիտի գտնէին եւ ի՞նչ ընէին:

Դեռ ՀԱՅՈՒԹԻՒՆ անորոշութիւն դարձած անուան տակ եղող համաշխարհայնացած մարդիկ, մեծեր եւ նուազ մեծեր, եթէ իրենք ալ փնտռէին այդ ԱԶԳը, ըսէին թէ ո՞ր է ան, թերեւս իրատեսական հաշուեկշիռներ կ'ընէին, կ'ընէինք, կը գիտնայինք թէ ո՞ր ենք, ո՞ր պէտք է երթալ, ինչո՞ւ եւ ինչպէ՞ս: ՀԱՅ եզրով բնորոշուած մարդիկ եւ հաւաքականութիւններ ի՞նչ են: Անոնք ԱԶԳ ըլլալու համար ընդունուած եւ սահմանուած ստորգելիները ունի՞ն: Իրենց «պատմութեան» ներկայ հանգրուանին ո՞ր



ստորագելիներով անոնք իրենք զիրենք կը ճանչնան, հեռուի կամ մօտի ուրիշներ զիրենք ո՞ր ստորագելիներով կը ճանչնան եւ կ'ընդունին:

Այդ ստորագելիները հայրենատիրութիւն եւ իրա՛ւ շարունակութիւն ըլլալու գիտակցութիւն եւ յանձնառութիւն են: Այսինքն լեզու, մշակոյթ, հայրենիք-տարածք:

Հայը ինք պէտք է գիտնայ եւ որոշէ թէ ի՞նչ է հայրենիքը եւ ո՞ւր է իր հայրենիքը, ի՞նչ ունի եւ ի՞նչ պահած է զինք ուրիշներէ տարբերող եւ ազգին ուրոյն դիմագիծ ստեղծող հոգեմտաւոր ժառանգութենէն, եւ փորձէ հասկնալ, թէ ինք իրապէս ի՞նչ է ընդունուած ազգ ըմբռնումին յարաբերաբար:

Հայրենիքը՝ հոռմէացիին patria-ն է, ֆրանսացիին patrie-ն, անկլօ-սաքսոն ժողովուրդներու fatherland-ը: Հասկնալ՝ նախահայրերու հող, ուր շարունակութիւն ըլլալու ընթացքը կը կենսագործուի եւ կ'իմաստաւորուի: Ո՞ւր է ՀԱՅՈՒԹԻՒՆ ԱԶԳԻՆ ԱՅԴ ՀՈՂԸ, patria-ն fatherland-ը:

Միշտ կը յիշեմ պայծառ դէմք Ռաֆայէլ Իշխանեանը, որ ներկայի Հայաստանի տարածքի համար կ'ըսէր՝ ՀՈՂԱԿՏՈՐ: Կը մտածեմ՝ Ո՞Ր ՏԱՐԱԾՔԻ: Պատասխանը մէկ է. Ան հողակտորն է հայու PATRIA-ի, FATHERLAND-ի, հայու ՀԱՅՐԵՆԻՔԻ: Հարցում. Հողակտորը կը փոխարինէ՞ «ամբողջ»ը, որուն տեղը եւ սահմանները պէտք է գիտնալ, հաստատելու համար, որ ան վերացական արտայայտութիւն մը չէ: Ան ժողովուրդի մը հայրենիքը ըլլալէ կը դադրի՞, եթէ հոն եկած են օտարներ եւ ներխուժողներ: Եթէ հոն եկած են ներխուժողներ, միթէ՞ նախահայրերու յետնորդները անոնց հայրենիքի օտարման մեղսակի՞ց պիտի ըլլան, վատութեամբ հրաժարի՞ն:

Բառերը չչարչարենք: Պետութիւն, կառավարութիւն, քաղաքականութիւն եւ կուսակցութիւն բազմաձեւ խաղերուն մէջ ջուր ճղփացնելէ առաջ, պէտք է ճշդել եւ գիտնալ, թէ հայրենիքը մոլորակի վրայ քանի մը հեքթար հողատարածք չէ, որուն սեփականատէր կ'ըլլայ անհատը: Ամերիկաներու, Ասիոյ կամ Ափրիկէի մէջ հեքթարներու տէր ըլլալ չի նշանակեր հայրենիք ունենալ: Հեքթարները հայրենիք կ'ըլլան նախահայրերու աննիւթականացած ներկայութեամբ եւ շնչառութեամբ, վայրեր՝ որոնք կը վկայեն անոնց կեանքի, աշխատանքի եւ աշխարհը ընկալելու եղանակի մասին, որ ՀԵՏՔ է, հողին եւ քարին վրայ, բառերու, խօսքի, ստեղծագործութիւններու մէջ, գորս կը կոչենք արհեստներ, արուեստներ, ընդհանուր բնութագրումով՝ մշակոյթ:

Այդ ՀԵՏՔը մարդը տէր կը դարձնէ հողին, որ դառնայ հայրենիք, որ մոլորակին վրայ կ'ունենայ անուն եւ հասցէ, անոր բնակիչները կը գոյանան որպէս ազգ:

Ներկայի հողակտոր-Հայաստանը հայրենիք է, բայց, ինչպէս կ'ըսէ իմաստուն առածը, «ծառը պէտք չէ ծածկէ անտառը»: Հայը, ուր որ ալ գտնուի, Կովկաս, Եւրոպա, Ամերիկաներ եւ այլուր, կրնայ՝ կամաւոր կոյր ըլլալ, եւ չնայիլ ԾԱՌԻ ԵՏԻՆ ԹԱՔՆՈՒԹ ՏԱՐԱԾՔԻն ուղղութեամբ եւ հարց չտալ, թէ Ռաֆայէլ Իշխանեանի «հողակտոր»ը ո՞ր ամբողջի մաս է: Այդ ամբողջը հայու ՀԱՅՐԵՆԻՔ է, PATRIA, FATHERLAND, թէ՞ ներկայի «ԻՐԱԿԱՆ»ին չառնչուող հեքիաթ կամ առասպել:

Հայու հայրենիք են այն տարածքները, ուր նախահայրեր ապրած են, հողը դարձուցած են պատմութիւն, սրբատեղի Խոր Վիրապ, եկեղեցիներ, ուր գրուած են, ծնած են առասպելներ, որոնք վկայութիւններ են: Վանը հայրենիք է, քանի որ հոն յուշարար է Աղթամարի Ս. Խաչ



եկեղեցին, Անին հայրենիք է, քանի որ հոն կան հայ թագաւորներու կառուցած պարիսպները, հաւատացեալներու կառուցած Մայր տաճարը, Հովիւի եկեղեցին, Կիլիկիան հայրենիք է, քանի որ հոն եղած են հայ թագաւորներ, իրենց միշտ տեւող կենդանի հետքը եւ դրոշմը ձգած են Ներսէս Շնորհալին եւ Թորոս Ռոսլինը:

Բացի աւերէ եւ կոտորածէ, ի՞նչ հետք ունին բռնագրաւողները, հայոց նախահայրերու Հայաստան աշխարհի նոր տէրերը: Աշխարհ՝ որ հայուն ԻՐԱԻ ՀԱՅՐԵՆԻՔն է, քանի որ հոն կը սաւառնին նախահայրերու ՀԵՏՔԸ ԵՒ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՂ ՄԻՏՔԸ: Բռնագրաւող նոր տէրերուն համար անոնք սոսկ պատերազմական աւար կամ հասութաբեր կալուածներ են, իրենց հայրենիքը չեն, սոսկ բնակավայր են: Ժամանակակից հայը այս սկզբունքով պէտք է ճանչնայ ի՞ր հայրենիքը, իրաւութեամբ ճշդէ անոր իրական տեղը եւ սահմանը, մերժելով անմիջականի հպատակող կրպակային քաղաքական ըմբռնում եւ ճապկում:

Անմիջականի խառնածինային ըմբռնումին ծնունդ է Սփիւռք(ներ)ը, որ եթէ հայրենադարձութեամբ ժամանակաւոր չլլայ, ժամանակաւոր պիտի ըլլայ ինքնութեան կորուստով, պիտի ըլլայ այլ երկինքներու տակ ապրողներով այլազան ժողովուրդներու թիւի լրացում, զանազան այլ եկուորներու շարքին: Այս իրողութիւնը պէտք է տեսնել, եւ յանդգնիլ անմիջական մասնակիէն անդին նայիլ:

Խօսիլ Իրական Հայաստանի մասին եւ մոռնալ Իրաւ Հայաստանը, կրպակի հաշիւով առաջնորդուող քաղաքական խարխափում է, արմատներու եւ նախահայրերու ուրացում, աւելի ճիշդ՝ ինքնաուրացում:

ԱԶԳ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ պահելու միտող առաջնորդութիւնը իրատեսութեամբ պէտք է գործէ ԻՐԱԻին համար, գիտակցելով, որ տրուած-ստացուած ԻՐԱԿԱՆ ՀԱՄԱՐՈՒՈՂ ՀԱՅՐԵՆԻՔը անվաղորդայն ըլլալու դատապարտուած ՀՈՂԱԿՏՈՐ է, մեր անմիջականի կորստական իրադարձութիւնները այդ դատապարտութեան ցուցանիշ են, եւ հայ ազգը կը խզեն իր անցեալէն եւ ինքնութենէն: Այս պայմաններուն մէջ, ինքնուրոյն ԱԶԳ ըլլալու յաւակնութիւն եւ իրարանցում անտեղի պերճանք են, կամ՝ ինքնախաբէութիւն եւ կեղծիք:

Որպէս իրաւ ազգ, հայ ժողովուրդը պէտք է ըսէ եւ գիտնայ, թէ ո՞ր է իր հայրենիքը, «patria-fatherland-ը, ըստ այնմ ինքզինք սահմանէ եւ գործէ, աւելի ճիշդ՝ ապրի: Սփիւռք կոչուած պատմաքաղաքական անհերթելիութիւնը, հակառակ ազգային համարուած ինքնապաշտպանութեան եւ յուշամատենական թափահարումներու, առանց անհայրենիք ըլլալով, պիտի չտեսնէ որպէս ազգի հատուած, առանց իր patria-fatherland-ին տիրութեան գաղափարականին հանդէպ հաւատարմութեան, ժամանակ մըն ալ ան պիտի մնայ տարաշխարհիկ-exotique բոյսի կամ ծաղիկի պէս, թերեւս բազմանայ վարձու սենեակներու մէջ: Յետո՞յ...

Սովորութիւն չունինք մեր տեսիլք ունեցող մտաւորականները լսելու, անոնց պատգամները անհատական եւ հաւաքական կենսական օրակարգ դարձնելու: Յաճախ ինքզինքիս եւ ուրիշներու կը յիշեցնեմ եւ կը կրկնեմ Ի դարու գրող Վիգէն Խեչումեանի, «Գիրք Լինելութեան» մէջ ըսուած ահաւոր խօսքը, ուղղուած հայրենագուրկին եւ ինքզինք հայրենագրկողին, որոնք արմատ կորսնցնելու դատապարտուած գաղթականութիւն են: «Գիրք Լինելութեան»ը կ'ըսէ. «Ուրիշի դրանը քեզ կը կոչեն հիւր, որպէսզի չասեն ծառայ»: Կացութիւն՝ որուն մեզ դատապարտած են «ցեղասպանութիւն-հայրենահանում»ը եւ այսօր այդ կը շարունակենք մենք մեզ դատապարտելով «հայրենալքման»:



«Հողակտոր» Հայաստանի Հանրապետութեան վերանկախացումը տօնուեցաւ, կրկին գրուեցաւ այդ մասին: Բայց ոչ որ խօսեցաւ նախահայրերու հող հայրենիքի մասին, patria-fatherland-ի, որ «հողակտոր»ը չէ միայն, որուն մոռացումը ազգը կը զրկէ նոյնիսկ երագէ եւ ան կը հարթուի սպառողական քաղաքակրթութեան գլանին տակ, որուն դէմ կանգնելու հեռանկարային քաղաքականութիւն չունի ո՛չ հողակտորի եւ ոչ ալ պատմաքաղաքական զարտուղութիւն Սփիւռքի հայութիւնը:

Եթէ միայն իրապէս անդրադառնայինք կացութեան, որոշէինք չհարթուիլ եւ ըլլալ տէր մեր patria-fatherland հայրենիքին, կ'ըլլայինք ազգի անխարդախ շարունակութիւն, ethnic groups ընկեցիկի հեքթարներով կամ քաղաքական կեղծ իրականով չէինք փոխարիներ ՀԱՅՐԵՆԻՔԻ ՀԱՅՐԵՆԻՔԸ: Կրկնեմ՝ patria-fatherland-ը:

Հուսկ բանք. ռուսական առած մը կ'ըսէ. «Առանց հայրենիքի մարդը առանց երգի սոխակ է»: Ընդունելով Սփիւռք կացութիւնը եւ հաշտուելով հայրենալքման հետ, պիտի ըլլանք անհայրենիք, կանոն պիտի դարձնենք լիբանանեան առածի այն միտքը, որ, «աքսորեալին համար հարստութիւնը հայրենիք է»: Այս առածը համահունչ է «լաւ ապրելու իրաւունք»ի թելադրած ընտրանքներուն:

Ներսի եւ դուրսի հայեր, հաւասարապէս եւ միաժամանակ, անկեղծութեան հրաշք պահու մը պէտք է ըսեն, թէ ռուսական առածի սոխակ էն, կամ լիբանանցիի առածի «անհող եւ անհողի հարստութիւն» հայրենիքի՞ն կը սպասարկեն: Եթէ այս ըսենք եւ ընդունինք, այլեւս պառակտուելու պատճառներ չենք ունենար:

Պէտք չէ հարցնել, թէ յետոյ ԱԶԳ ԵՒ ՀԱՅՐԵՆԻՔ ո՞ր կը մնան: Ի՞նչ կ'ըլլանք... Մտածել եւ փորձել պատասխանել առանց «տերվիշ»ներու պէս կլոր կլոր դառնալու:

Յակոբ Պալեան
1 Հոկտեմբեր 2025
Փարիզ

ՀԱՅՐԵՆԻՔԸ Ո՞Ր ՎԱՐԴԱԳՈՅՆ Է ԵՒ Ո՞Ր... ՄՈՒՐԱԳՈՅՆ

ՊԱՐՈՅՐ Յ. ԱՂՊԱՇԵԱՆ



Ամէն անգամ կամ առիթով, երբ կը յիշուի կամ կը խօսուի հայրենի իրականութեան մասին, հոն ծաւալած եւ ապրուած կեանքը վկայակոչելով կամ համեմատելով, տարբեր ժամանակաշրջաններու լոյսին տակ, պահ մը կանգնիլ, խորհրդածել եւ անդրադառնալ, կը դառնան անխուսփելի հրամայականներ, անմիջական հարցադրումներ: Ինչո՞ւն կամ ինչո՞ւները պատասխաններ ունին եւ՝ չունին:

Ունին՝ որովհետեւ, բնական է, որ տարբերութիւններ տեսնելը, ընդգծելը կամ բնորոշելը, մէկ գոյավիճակէն միւսին անցումը էական կը դարձնեն նման կարգավիճակով չափորոշութիւններու, զանազանութիւններու ու համադրութիւններու մէկտեղումը, կեդրոնացումը եւ յստակացումը:



Չունի՛ն՝ որովհետեւ, ամէն ինչ ու հարթակ արագահոս ընթացքով կը խոյանայ, ուր արգելակում փնտռելը անիմաստութիւն է, իսկ զգաստացութիւնը՝ բնաւ ալ փայփայելի չէ, հետեւաբար, ամէն ոք կամ շրջանակ, հաւաքականութիւն կամ հասարակութիւն, իր գոյատեւման արժեչափերով կը փորձէ իր ինքնութեան ու պատկանելիութեան ելեւէջներուն հետեւիլ, այն յոյսով եւ ակնկալութեամբ, որ հոն կը գտնէ իր տեղն ու դիրքը:

Անոնք կը համապատասխանեն չոր կամ դառն իրականութեան մը, երբ երկիրներ ու ժողովուրդներ, ինտելեկտուալ եւ ամբողջական վազքի մէջ են, իրենց հանգստաւտութիւնը ու համակեցութիւնը որոնելու հետքով ու մղումով:

Ասոնք, որոնք ապրած են զգացականօրէն, հոգեբանօրէն, պատմականօրէն, ժառանգականօրէն, այս «երկուութիւն»ը, մերթ խորհրդային շրջանէն ու մինչեւ անկախութեան անցում, ամենէն աւելի կրնան հասկնալ, թէ՛ ինչո՞ւ «բան մը» կայ, որ այդ երկու գոտեշրջանները, չեն կրնար զիրար կապել, ամբողջացնել ու համալրել, որովհետեւ՝

- Այն ինչ որ երէկ էր, ուրիշ էր, իր բազմակողմանի հիմքերով ու հետքերով, իր տարատեսակ մտայնութիւններով ու գործելաձեւերով, կառոյցներով ու սլացքներով:

- Պայծառ անցեալը մշուշուած էր, թանձրախիտ ամպերով ու հոսանքներով, ուր կարելի չէր տեսնել մէկուն լուսաւորութիւնը, բայց, կարելի է զգալ միւսին խաւարամտութիւնը, իր ահագնութեամբ ու մթագնութեամբ:

- Երէկուան մարգարէաշունչ մտաւորականութիւնը, իր տեսիլքներով ու կառուցողականութեամբ, իր տեղը զիջած էր, առնուազն, այնպիսի միջակութիւններով եւ անհրապարտութիւններով, որոնք հազի՛ւ կը յիշեցնեն փառքի օրերու հրաշագեղութիւնները ու հաւատարմագրութիւնները:

- Անցեալի մեծութիւնները, իրենց հեղինակութեամբ եւ անհատականութեամբ մէկական գերագոյն սիւներ էին, որոնք կ'առաջնորդէին Հայաստանը ու կը խթանէին իրենց ժողովուրդն ու զանգուածները:

- Հայ միտքի ու գրիչի անփոխարինելիները, կը կազմէին ամբողջական հզօրախումբ մը, որ ոչ միայն պատիւ կը բերէր, այլեւ՝ հպարտութեան դափնեպսակ կը դառնար հայրենիքին ու ժողովուրդին:

Այս մատնանշումները, ակնարկութիւնները կամ գրառումները, իրենց խորհրդածութիւններով ու քննութիւններով, ի՞նչ կը յուշեն կամ ի՞նչ կ'ապացուցանեն, այնքան ատեն որ, հոն նշմարելի կը դառնան բազմաթիւ ու բազմազոյն սայթաքումներ ու կաղացումներ, հիւանդկախութիւններ եւ ախտավարակութիւններ:

Եթէ կը կարծուի, թէ այդ «սպի»ները աներեւելի կամ անցողակի են, փորձը ու կեանքը ցոյց կու տան, ճիշդ հակառակը, որովհետեւ ամէն ինչ յեղաշրջած վիճակ մը կը ներկայացնէ ու կը պարզէ, իսկ շրջապատը կամ միջավայրը (իմա՝ երկիրը), թաւալազլոր ըլլալու վիճակի մը մէջ կը տապալակի, կը խեղդուի:

Անկախութիւնը, հակառակ իր երբեմնի բարեհնչունութեան, բարեկարգութեան ու բարեփոխութեան, ո՞վ ըսաւ, որ կրցաւ ծառայել իր իտեալական ինքնութեան առողջացման կամ՝ միթէ՞ ան կրցաւ դառնալ ոգեշնչող ու ներշնչող աղբիւր մը, վերածուելով յոյսի ու լոյսի ջերմագոյն կոռուաններու պատուանդանի մը:

Անշուշտ, երբ այս տողերը կը գրուին սեւով-ձերմակի վրայ, ծանօթ-անծանօթի ուրուականներու դեգերումներով, ատոնք բնաւ չեն նշանակեր, որ հայրենի իրականութիւնը չունեցաւ իր լուսաւոր հանգրուանները եւ յառաջընթացները, սակայն, իշխող վարչախումբեր եւ անոնց իւրայիններ այնպիսի գորշ ու մոռյալ մթնոլորտներ ստեղծեցին, խմորեցին ու կազմեցին, որ հայրենիքը մշուշապատեցին իրենց թանձր շուքերով, բիծերով եւ արարքներով:



Այս տեսանկյունէն պէտք է դիտել ու խորաչափել այն արհաւիրքը, որ փաթթուեցաւ ժողովուրդի վզին, մինչ զայն ցանող ու տարածող վոհմակները, ոչ միայն առաջը չառին կամ չգսպեցին իրենց անմարդկային եւ անասնական ախորժակները, այլեւ՝ աւելի հզօրացուցին իրենց «ցունամի»ական կիրքերն ու տենդերը:

Միթէ այս բոլոր այլանդակութիւնները եւ այլամերժութիւնները, այսօր եւս, «օրակարգ»ի վրայ չէ՞ն, երբ, նոյն թափով կը շարունակուին, քիչ մը ձեւափոխուած շղարշով, բայց, շատ աւելի վարագուրուած ոճով:

Ոչ միայն դժուար է, այլեւ՝ անկարելի, տիրող կացութիւնը մեկնաբանել կամ արդարացնել այնպիսի փխրուն ու դիւրաբեկ մօտեցումներով եւ արժեչափերով, երբ անոնք խախտու են, անիրականալի եւ անհամոզիչ, վկայ, այն հակադիր, հակաթեւ ու հակադէմ ճակատներն ու բեւեռները, որոնք կը վիստան չորսդին:

Այս օրերուն, չընդդիմութիւն կոչուածը դարձեալ հրապարակ նետուած է, իր զգալի փոքրամասնութեամբ, նոյն խժալուր լոգունգներով, որոնք ոչ անցեալին, ոչ ալ ներկայիս որեւէ հետք չձգեցին, ոչ ալ արժանացան լուրջ արձագանգներուն:

Այս անգամ պահանջուածը (՝), թէւ նորութիւն մը չէ, բայց, նոր տարագումով ու բովանդակութեամբ, վարչապետ Նիկոլ Փաշինեանի նկատմամբ անվստահութեան արտայայտութիւնն է:

Աւելի քան ծիծաղելի է այս բաղաձայն տարբերակը, որովհետեւ ներկայ հանգրուանին ոչ միայն անիմաստ եւ անհիմն է, այլեւ՝ մեկնելով երկրին մէջ գրանցուած ու զարգացած հիմնահարցերէն, ներքին եւ արտաքին յարաբերութիւններէն, քաղաքական ու միջպետական դիւանագիտական կամուրջներէն, ընդդիմութեան անհեթեթ եւ անարդիւնաբեր քայլերը ոչ մէկ դրականութեան կրնան յանգիլ:

Ասիկա չի նշանակեր, թէ ամէն ինչ նորմալ եւ առողջ է, սակայն, նկատի ունենալով, որ «դժգոհ»ացած կողմեր, հաշտ աչքով չեն ընդունիր որեւէ «նորութիւն» կամ «բարեկարգում», միշտ պատրաստ են հանդէս գալու փողոցային ցուցարարութիւններով կամ՝ խորհրդարանական ծեծուրտութիւններով:

Այս մարդուկները ոչ հասկցան, ոչ ալ ըմբռնեցին, թէ նման խաչմերուկներով ու զարտուղորութիւններով կարելի չէ այլեւս գործել, ընդունելի չեն այս ապակողմնորոշիչ խափանարարութիւնները, արտօնելի չեն սանձարձակութիւնները:

Աւելին՝ մինչեւ ե՞րբ չընդդիմադիրները պիտի մնան բթամիտ եւ անլուրջ, ստահակային եւ ալեկոծային իրենց վերաբերմունքներով, փորձելով գրգռել ու հրահրել ժողովուրդը, ընդդէմ իշխանութիւնները, մոռնալով կամ չտեսնելով որ գուրկ են իրենց ճիգերը, որովհետեւ կողմնակիցներու արժանի հետեւորդներ չունին, յարգուած չեն, բայց, կը յամառին «էլը կառքին ետեւ զետեղել», չգիտակցելով որ, այդ չէ ու չի կրնար ըլլալ ընդդիմութեան ժողովրդավարական ու կրթեալ ճանապարհը:

Արդեօք նման մտածողութեան ու մտայնութեան տէր... երագատեսներ, չէ՞ն անդրադառնար, որ իրենց այս խոչընդոտային ընթացքով, շատ աւելի կը զօրացնեն ու կը խրախուսեն գործող իշխանութիւնները եւ անոնց վարկն ու դերակատարութիւնը կը բարձրացնեն (թէեւ, ըստ ոմանց, ցնորք է ատիկա):

Եթէ չունին այս գիտակցութիւնը ու տրամաբանութիւնը, ապա, ինչպէս տեսանելի է, յումպէտս կը գործեն, ժամանակ կը վատնեն, աւերներ կուտակելով, իսկ «յոգնած» հայրենի ժողովուրդը աւելի հիասթափեցնելով եւ յուսահատեցնելով:

Ի գուր տեղ չէ, որ ոչ-արհամարելի շրջանակներ, որոնք ատեն մը իշխանութիւններուն դէմ էին, դժգոհ, ինչո՞ւ, յանկարծ սկսան իրենց դիրքորոշումները ի նպաստ անոնց արձանագրել: Ասիկա բան մը կը նշանակէ՞ թէ ոչ, պարոնայք չընդդիմադիրներ, թէ՞ ձեր հետապնդածը ուրիշ, աւելի աղիտաբեր ընտրանք է, բայց, կը փորձուի կարկտան կամ



շերտուած կտրօններով զանոնք ներկայացնել (թէ՛ խաբել) այլոց, ինչ որ այլեւս ժամանցուած խաբկանք է:

Եթէ այսքա՛ն «նրբութիւններ» չէ կրցուած իրազեկուիլ կամ յստակացուիլ բոլոր անոնց, որոնք կը յաւակնին ըլլալ «Բարեկարգիչ, սրբագրիչ եւ յեղափոխիչ», ալ ի՞նչ կը սպասուի կամ կ'ակնկալուի, իրենք զիրենք իշխանափոխութեան... կտրիճներ նկատելով:

Այստեղ, կ'ուզեմ կարեւորութեամբ ու հրատապութեամբ յիշեցնել, որ Նիկոլ Փաշինեան եւ իր կառավարութիւնը, իրենց իշխանութեան շրջանին, բազմաթիւ իրագործումներու ու ներգործումներու կողքին, ունեցան նաեւ վրիպումներ կամ սխալագործունէութիւններ, որոնց մասին, ոչ Ազգային Ժողովի պատգամաւորները, ոչ ալ (չ)ընդդիմադիրները կրցան ազդու միջամտութիւններ ունենալ, այլապէս՝ խստանալ եւ արգիլել այն չարիքներէն, որոնք կրնան ծագիլ իշխանութիւններուն կողմէ:

Ի՞նչ ըրիք դուք եւ ինչո՞վ կանխեցիք կամ յեղաշրջեցիք բոլոր այն գործողութիւնները, որոնք կը կարծէիք խորթ էին, անընդունելի եւ անհամակերպելի հայ ժողովուրդին համար, բացի, ձեր «փարագիթ»ութեամբ ու «վանտալիզմ»ութեամբ ձեր տգեղ մտութիւնները ցուցադրել ու ձեր ատամները ցուցաբերել:

Այլեւս հայելիի եւ արեւու նման յստակ է, որ դուք ոչ միայն անգոր եւ անկար չընդդիմախօսներ էիք (եւ՝ էք), այլեւ՝ մերկացուած դերասաններ ու դերակատարներ եւ ձեր վարագոյրը վար առնուած է...:

Այսօր, յաւելեալ վառ օրինակ մը, Հայաստանի պետական զինանշանին վրայէն, (կ'ըսուի թէ) վար կ'առնուի «Արարատ»ի, մեր սրբութիւն-սրբոց խորհրդանիշներէն մէկը, ասիկա ի՞նչ կը ցուցանէ, եթէ ոչ ՉԱԽԱԻԵՐ ու ՉԱՐԱԳՈՐԾ քաղաքականութեան մը տխրահռչակ վարքագիծը, որ սկսած է անկախութեան առաջին օրերէն ու հետզհետէ հասունցած յետագայ տարիներուն, նոյն թալանողներուն ու խանգարողներուն կողմէ:

Իսկ այսօր «Արարատ» լեռն է որ կը դառնայ թիրախ եւ որս, ոչ միայն անոր համար, որ գործող իշխանութիւններու օրով (եւ դատապարտութեամբ) կը կատարուի, այլ, շրջանային ու միջազգային պայմանները հոն հասցուցած են քաղաքական-դիւանագիտական-զինուորական-աշխարհագրական պայմանները, իսկ տեղայնական կողմեր, ուղղակի թէ անուղղակի եղանակներով, թէ՛ դիւրացուցած, թէ՛ ալ նպաստած են անոնց... յաջողութիւններուն:

(Պէյրութ)

4/10/2025

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՆԱՀԱՆՁԸ ԵՒ ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ՀՈԳԵՄՏԱԽՈՐ ԴԱՏԱՐԿՈՒԹԵԱՆ ՎՏԱՆԳԸ



Հայ գրականությունը կը շարունակէ նահանջել հայ կեանքին մէջ: Հայ գրողներու տեղը եւ դերը աստիճանաբար կը նուազին հայկական մշակութային կեանքին մէջ. գրական շրջանակէն եկող անձեր աւելի քիչ կը ներառուին ազգային, հասարակական եւ քաղաքական միջավայրին մէջ: Այլեւս չունինք այնպիսի դէմքեր, որոնցմով ամբողջ հայութիւնը պիտի հպարտանար կամ որոնք միջազգային բեմի վրայ ճանչցուած ու ընդունուած պիտի ըլլային: Ի հարկէ, այսօր մենք աւելի շատ գրողներ ունինք, քան երեսուն-քառասուն տարի առաջ: Այսօր գրել եւ գիրք հրատարակելը անհամեմատ աւելի դիւրին է, եւ այսօր անհամեմատ աւելի շատ հայերէն բառեր կը տպուին, քան առաջ:

Բայց ի՞նչ որակով ու ըսելիքով, ի՞նչ բովանդակութեամբ ու պատգամով:

Որակով աղէտալի, պատգամները՝ թերի եւ ծամծամած են, երբեմն ալ ամբողջովին բացակայ: Հիմնականօրէն հմայքէ զուրկ ու իւրայատկութիւն չունեցող: Այս երեւոյթին գլխաւոր պատճառներէն մէկը այն է, որ այսօրուան հայ գրականությունը կը ներկայանայ իբրեւ վերաբրտադրող, այլ ոչ ստեղծող, իբրեւ արձագանգող, այլ ոչ հիմնադրող, եւ այն ալ՝ ոչ թէ սեփական օրակարգի խնդիրներէն մեկնելով: Այս տրամաբանութեամբ, հայ գրականութեան մէջ արծարծուած թեմաներուն մեծամասնութիւնը արուեստական է եւ կը հետեւի նորաձեւութեան՝ ամերիկեան, եւրոպական, ռուսական, ճափոնական եւ այլն: Յատկապէս տխուր է, որ սեփական իրականութենէն կտրուած գրական դէմքերը իսկապէս չեն խորանար այն պատճառներուն մէջ, որոնց հետեւանքով գրական որոշ ժանր մը, փիլիսոփայութիւն մը եւ այլն ստեղծուած է այս կամ այն շրջանին մէջ: Անոնք չեն գիտեր կամ չեն խորշիւր ըմբռնել այն իրողութիւնը, որ ամէն դար եւ ամէն շրջան ունի իր սեփական, յատուկ խորքային խնդիրները, որոնք կ'ամբողջացնեն դարաշրջանը, կ'արծարծեն հարցեր եւ կը փորձեն լուծումներ գտնել անոնց:

Որպէս օրինակ նշենք, որ նոյն գերմանական կամ ֆրանսական փիլիսոփայութիւնը պատահականօրէն չէ ծնած, այլ ուղղակի հետեւանքն էր ընկերատնտեսական եւ արդիւնաբերական յեղափոխութիւններուն ու նոր իրականութեան բախումին՝ հին վարդապետութիւններուն հետ: Աւելին, այն իրականութիւնը, ուր այդ գրականութիւնը ծնունդ առած է, եղած է իրենցը՝ սեփականը: Գրողները այդ իրականութիւնը խորքով զգացած են, ապրած, եւ կարողացած ստեղծել իսկական գրականութիւն:

Համեմատութեան համար՝ հայ գրականութեան ոսկիէ սերնուղի ներկայացուցիչները, երբ կը գրէին արեւմտահայ կամ արեւելահայ հատուածներու զգացումներուն եւ ցաւերուն, խնդիրներուն ու մարտահրաւերներուն մասին, անոնք իրական էին, որովհետեւ իրենք իրաւամբ այդ բոլորին ականատես էին, կը զգային անոնց ազդեցութիւնը, կամ առնուազն փիլիսոփայական մակարդակի վրայ կ'ապրէին այդ բոլորը: Անոնք նաեւ փայլուն կրթութիւն ունէին, կամ եթէ համալսարանական չէին, ապա այն աստիճանի կարդացած ու գործնականօրէն հմտացած էին կեանքի մէջ, որ անոնց գրածը իրօք իրական էր: Ինչու՞



Շիրվանզադէի «Նամուսը», «Պատուի համարը», «Քառսը» կը նկատուէին հայկական իրապաշտութեան գլուխգործոցներ: Այն պարզ պատճառով, որ Շիրվանզադէն անձամբ ապրած է Պաքուի ու Թիֆլիսի մէջ, անձամբ ծանօթ եղած է ժողովուրդին, ապրած անոր ամենօրեայ հոգերով, անգիր ճանչցած է այն միջավայրը, զոր նկարագրած է, եղած է անոր մէկ մասն ու կրողը: Ուստի եւ Շիրվանզադէն իրաւամբ մտաւորական էր: Շիրվանզադէն ոչ միայն գեղարուեստական գրող էր, այլեւ հասարակական-քաղաքական կեանքի գործուն մասնակից, վիճաբանող կողմ, ան հայ կեանքի մասնակիցն էր, ձեւաւորողը: Նոյնը կը վերաբերի արեւելահայ ու արեւմտահայ միւս նշանաւոր, իսկ յետոյ նաեւ խորհրդահայ ու սփիւռքի նշանաւոր դէմքերուն: Անշուշտ անոնց կողքին քիչ չէին նաեւ անտաղանդ ժամավաճառները, որոնց նկատմամբ կար ծաղրական «մրոտող» կամ «սեւցնող» ածականը: Բաֆֆին նոյնիսկ յօդուած մը ունի «գրականութեան մէջ պարկապզուկ ածողներու» մասին՝ նշելով անոնց իրականութենէն ամբողջապէս կտրուած ըլլալը եւ այլն:

Արդէն հասկնալի կը դառնայ, որ գրական նման դէմքերը պարզապէս ի վիճակի չեն հասարակութիւն կամ սերունդ կրթելու, անոնք ներգրաւուած չեն հասարակական-քաղաքական կեանքին մէջ, գրեթէ հեղինակութիւն չունին, բայց կը գրեն ու կը ստեղծագործեն: Արդիւնքը՝ զերոյ:

Այս բոլորը ոչ միայն կ'իջեցնեն հայ գրականութեան մակարդակը, այլեւ բացասաբար կ'անդրադառնան հայ խօսքին: Երիտասարդներն ու պատանիները իրենց առջեւ հարուստ ու գրագէտ խօսք չեն տեսներ, ընդօրինակման արժանի կերպարների չեն տեսներ: Ամէն ինչ կը կատարուի արագ ու անհետեւանք: Շքեղ շնորհանդէսները մոռցուած են, զիրքերը արագ կը վաճառուին՝ անարդիւնք ու անարձագանգ:

Այս որակի գրականութիւնը կը հեղինակագրկէ հայ բանաւոր ու գրաւոր խօսքը, հասարակութեան կեանքի ամենէն կարելոր հատուածներէն մէկը պարապ կը մնայ, եւ այս պարապը կը լեցուի համաշխարհային նորաձեւական երեւոյթներով, որոնց կրթական բաղադրիչը շատ փոքր տեղ կը գրաւէ, չունի որեւէ յստակ ու շարժիչ ուժ:

Մարդոց խօսքը երթալով կը դառնայ աւելի հասարակ, պարզունակ: Գիրքեր չկարդացող պատանիներուն խօսքը աղքատ է, անկապ: Անոնցմէ շատերը չեն կարենար բարդ ստորադասական նախադասութիւններ կազմել, երեւակայութիւն չունին: Աւելի աղէտալի է դպրոցականներու մօտ նկատուող՝ արեւմտահայերէնի նկատմամբ բացասական վերաբերմունքը: Հայաստանի մէջ, արեւմտահայերէնը գրեթէ օտար լեզուի ընկալում ունի:

Քանի որ չկայ այդ կիրթ ու գործունէայ խաւը, ուրեմն չկայ նաեւ «հաւաքական մտաւորականութիւն», որուն հետեւանքով հայ մամուլը եւ հասարակական կեանքը եւս սկսած են լեցուիլ դատարկութեամբ, անբովանդակ օրակարգով, մանր մեքենայութիւններով, փոխադարձ մեղադրանքներով: Կը նահանջէ հայ մամուլը, հայերու լեզուամտածողութիւնը կը փոխուի տխուր կերպով: Հասարակութեան ընդհանուր կրթական մակարդակն կ'իջնէ, անոր առօրեայ խօսքն ու պահուածքը կը գոեհկանան, նոյնիսկ անոր ձգտումները կը փոքրանան, աշխարհայեացքը՝ կը նեղնայ:

Աղքատացած է նաեւ գրական ժանրը, թէւ հիմա, արտաքուստ կարելի է կարծել, թէ ընդլայնած է: Գրական հոսանքներ չկան, փիլիսոփայական մօտեցումներու տարբերութիւններ չկան, գրական բանավեճեր չկան: Ամէն մէկը իր փոքր խումբով ինքը կը գրէ, ինքը կը կարդայ: Ինքզինք կը պարզեւատրէ:

Բանաստեղծություններ ու վեպեր կը գրուին ու կը տպագրուին՝ ոչինչ ըսող, զուտ անձնական ցանկություն, ոչ թէ գրական կայծ: Մելանը չորցած գրիչներ, ոչինչ աւելի:

Միայն մէկ ընդգծուած առաւելութիւն կայ մեր օրերուն՝ թարգմանությունները: Կան թարգմանուած թէ՛ փիլիսոփայական, թէ՛ գեղարուեստական գրականութեան որոշ նմուշներ, թէեւ, իմ գնահատումով՝ շատ քիչ: Այստեղ ալ վաճառքը կը խանգարէ, որովհետեւ Քանթի ու Սփինոզայի բողոքատած, խրախուսական յիմարությունները աւելի արագ կը վաճառուին ու դրամին համը տեսած գրախանութն ու հրատարակիչը շատ անգամ անվերջ կը թարգմանեն, կը տպագրեն ու կը վաճառեն այդ բոլորը՝ փողի համար: Որովհետեւ, արդէն նշուած պատճառներով հաշմուած հասարակությունը արդէն պատուէր ու պահանջարկ չի ներկայացներ գրական միջավայրին, ան պարզապէս կը վերցնէ այն, ինչ կու տան իրեն, իսկ հայաստանեան գորշ ու նեխած միջավայրին մէջ, միայն պարզունակ կրկնություններ են, միայն «արտագրուած» միտքեր:

Աւելին, ժամանակակից արհեստագիտությունները դիւրացուցած են գրականութեան կեանքը: Հիմա աւելի շատ հնարաւորութիւն կայ խօսքն ու միտքը տեղ հասցնելու, բայց անոր փոխարէն, մենք կը կարենանք միայն մէկ բան ընել՝ լեցնել զայն ոչինչով: Ինչու՞ հայ պատանին կը խելագարի գոեհիկ խօսքերով լեցուն անբովանդակ երգերու եւ գիրքերի համար. անոր ներքին համոզմունքը՝ ոչ պարզապէս սովը, այլընտրանքի բացակայությունը: Եւ ինչպէս, որ մարմինը կը դառնայ այն, ինչով կը սնանի, ապա հոգին եւ միտքն ալ նոյն ձեւով հաշմանդամ կը դառնան հոգեւոր դատարկութենէն:

Վարուժան Թենպէլեան

Տարբերակ21

19 Սեպտեմբեր 2025

ՀՆԴԻԿՆԵՐԷՆ ՍՈՐՎԵԼԻՔ ՈՒՆԻՆՔ...

Լիւսի Տօքմէճեան, Երևան, 26 սեպտեմբեր 2025, ԳԵՂԱՐԴ



Լիբանանի մէջ ապրած սփիւռքահայերուս համար սովորական երեւոյթ էր տեսնել երկրին մէջ աշխատող օտարերկրացի գործաւորներ, որոնք պատրաստակամ էին իրենց տրուած ամէն տեսակ գործ աշխատելու, նոյնիսկ ամէնէն բարդ ու լիբանանցիներու «անյարմար» կամ «անմակարդակ» համարածները: Ոչ միայն գործին տեսակն է խնդիրը, այլ նաեւ անոր դիմաց ստացուած աշխատավարձը, որ անբաւարար, նոյնիսկ նուաստացուցիչ չափի կրնայ ըլլալ: Սա

ցոյց կու տայ երկրի բնիկ ժողովուրդին ցուցաբերած արհամարհական կեցուածքն ու վիրաւորական վերաբերմունքը հանդէպ այս օտարազգի գործաւորներուն, որոնք չնչին օրապահիկ վաստակելու համար թողած են իրենց ամենաթանկը՝ ծննդավայրը, ընտանիքը, ընկերներն ու հայրենիքը:



Այսօր պատկերը նոյնանման է նաեւ Հայաստանի մէջ: Վերջին քանի մը տարիներուն երկրին մէջ նկատելիօրէն շատցած է թիւը օտարազգիներուն, մանաւանդ հնդիկներուն: Անոնց մէկ մասը Հայաստան եկած է ուսանելու համար, իսկ ուրիշներ ընտրած են մեր երկիրը որպէս աշխատելու եւ եկամուտի վայր: Հնդիկ աշխատաւորները կը տեսնենք բազմատեսակ գործերու մէջ. անոնք կ'աւլեն այգիները, կը կատարեն բեռնակրութիւն, կը դասաւորեն մթերքի վաճառատուներու դարակները եւ անոնց վրայ տեղաւորուելիք սպորանքները, կ'աշխատին առաքիչ, նոյնիսկ կը վարեն թաքսի սպասարկութեանց ինքնաշարժներ:

Հարկ է յատուկ ուշադրութիւն դարձնել այն իրողութեան, որ նշեալ աշխատանքներուն ընթացքին հնդիկներուն հետ հաղորդակցողներու մեծ մասին լեզուն անոնց չիմացած՝ հայերէնն է եւ ոչ թէ միջազգային լեզու մը, որուն կը տիրապետեն իրենք, ինչպէս՝ անգլերէնը: Նոյնը հազուադէպ կարելի է գտնել ռուս քաղաքացիներու շրջանակին մէջ, որոնք 2022 թուականի փետրուարին բռնկած ռուս-ուքրաինական պատերազմի մանաւանդ սկզբնաւորութեան, Հայաստան ապաստանած էին ու անոցմէ ոմանք կ'աշխատէին որպէս սպասեակ կամ առաքիչ: Ռուսերէնն ըլլալով Հայաստանի Հանրապետութեան մէջ գործածուող երկրորդ լեզուն, որ հայաստանցիներու մեծամասնութեան համար հասկնալի է ու հարազատ, դժբախտաբար երբեմն նոյնիսկ նախընտրելի, այդ աշխատողները դոյզն ջանք չէին թափեր հայերէնով հաղորդակցելու՝ դժուարութիւն պատճառելով ռուսերէն չհասկցող ու չխօսող հայրենադարձներու:

Հնդիկներն ունին իրենց բնորոշ լաւ յատկութիւններ, յատկապէս՝ աշխատասիրութիւնը եւ երկրի լեզուն, այս պարագային՝ հայերէնը, արագօրէն սորվելու ունակութիւնը: Հնդիկներուն հետ փորձառութիւնս առնչուած է մանաւանդ առաքման եւ թաքսի ծառայութիւններու ոլորտներուն: Հնդիկ առաքիչները հեռախօսագանգին պատասխանելով կամ դէմ առ դէմ յայտնուելով քաղաքավարօրէն կ'ողջունեն հայաստանեան ոճով «բարեւ ձեզ» ըսելով ու կը փորձեն իրենց սորված հայերէնով հասկցուիլ: Անոնք չեն զլանար իրենցմէ խնդրուածը բծախնդրօրէն կատարելու՝ առանց դժկամութեան: Մինչ հայ կամ ռուս առաքիչները շատ յաճախ կը բողոքեն յաճախորդին հաւանական ուշացումներէն, տան կամ աշխատավայրին հասցէն գտնելու դժուարութիւններէն, երբեմն նոյնիսկ՝ արեւմտահայերէնը չհասկնալու երեւոյթէն. հնդիկ առաքիչները ժպտադէմ կը դիմակալեն այս բոլոր դժուարութիւնները եւ կը փորձեն գոհ պահել իրենց պատուիրատուները:

Հիանալի՝ է այս ժողովուրդին աշխատասիրութիւնը: Այս առումով ուշագրաւ է հետեւեալ դրուագը. հնդկուհի առաքիչ մը, որուն պատուիրուած էր տոպրակ մը տեղափոխել 2,6 քմ հեռաւորութեամբ ճանապարհահատուած մը՝ Սարեան փողոցէն մինչեւ Երուանդ Քոչարի փողոց, 45 վայրկեան ՔԱԼԵԼՈՎ բերած ու հասցուցած էր սպորանքը, փոխարէնը վարձատրուելու համար միայն 500 դրամով (մօտաւորապէս 1,3 ամերիկեան տոլարին համարժէք), որուն ոչ-ամբողջը պիտի տրամադրուէր անոր:

Հոս կը ծագի գլխաւոր հարցումը. հայրենաբնակ հայը ի՞նչ պատճառ կամ արդարացում ունի չկատարելու գործերը օտարազգի աշխատողին, որ սկզբունքով ամէն ինչ ետին թողելով գաղթած է իր երկրէն ու կը ճաշակէ պանդխտութեան բոլոր դառնութիւնները՝ շահելու համար պարգապէս երկու լումայ, որով թէ՛ պիտի ապրի ու թէ՛ պետք է խնայողութիւն ընէ



Հնդկաստան գտնուող իր հարազատներուն դրկելու կամ հետագային, երկիր վերադարձած ժամանակ, իրեն հետ կոկիկ գումար մը տանելու:

Ժողովրդային ասացուածքը կ'ըսէ՝ աշխատիլ ուզողին համար միշտ ալ գործ կայ: Մինչ հայերս կը դժգոհինք Հայաստանի մէջ աշխատելու հնարաւորութեան սակաւութենէն, չափազանցողներու պարագային՝ չգոյութենէն, ներկայիս հնդիկներն են որ կը յայտնուին մարդուծ պահանջող այն բոլոր գործերուն մէջ, ուր հեշտութեամբ կարելի է մեր տեղացի հայրենակիցները տեսնել: Ճիշդ է, որ Հայաստանի մէջ աշխատողներուն գլխաւոր մարտահրաւերը ցած աշխատավարձն է, մանաւանդ եթէ համեմատենք ապրելակերպի սղութեան հետ, սակայն աշխատիլը միշտ ալ աւելի լաւ է քան չաշխատիլը: Զէ՛ որ այդ պարագային ոչ միայն աշխատուծը կը մնայ երկրին մէջ, այլեւ արտասահման օտարագրիներու դրկած կամ հետերին տարած հսկայական գումարները, որոնք երկրին մէջ շրջանառուելով՝ կը նպաստեն երկրի տնտեսութեան բարելաւման:


Ուրեմն, հնդիկներէն սորվելիք ունինք: Պահ մը մոռնալով անոնց ջերմ ու հաղորդական մօտեցումը եւ քաղաքավար պահուածքը, անոնց աշխատասիրութիւնը վարակիչ պէտք է դառնայ մեր հայրենաբնակ ազգակիցներուն: Անընդունելի է անընդհատ բողոքել ու դժգոհիլ «գործ չկայ» կաղապարուած խօսքով, պատրուակելով քիչ աշխատավարձը, եւ այլանել գործատւերը, որ աշխատանքի նախապատուութիւնը չեն տար տեղացիին: Մա աշխատիլ չուզողի, ծոյլի, մեծամիտի հոգեբանութիւն է:

Հնդիկներէն սորվինք աշխատասիրութիւնը: Այո՛, բայց բացարձակապէս ԱՌԱՄՅ ցեղային խտրականութեան եւ ԱՌԱՄՅ անոնց նկատմամբ բացասական պահուածքի, Հայաստանէն ներս անոնց ներկայութիւնն ու աշխատունակութիւնը խթան դարձնենք հաւատալու «մեր աշխատուծը մե՛նք ենք» սկզբունքին ու հրամայականին: Այս կարգախօսին գործնականացումը օգտակար պիտի ըլլայ թէ՛ ՀՀ-ի քաղաքացիին եւ թէ՛ երկրին. ան միայն շահ պիտի բերէ Հայաստանի Հանրապետութեան, անոր ժողովուրդին ու տնտեսութեան:

Պետական գաղտնիք բացայայտած չենք ըլլար յայտարարելով, թէ աշխատասիրութիւնն է մեր երկրի դժուարութիւններու յաղթահարման ու մեր հայրենի պետութեան հզօրացման բանալիներէն մէկը:

ԳԷՈՐԳ ՄԱՆՃԻԿԵԱՆԻ «ՅՈՒՇԵՐ»Ը

Յարութիւն Իսկահատեան



«Այս յուշագրութիւնը բացի հեղինակին՝ Գեորգ Մանճիկեանի անմիջական գերդաստանի Մեծ Եղեռնի տարիներու պատմութիւնը ըլլալէն, ունի ընդհանրական արժէքներ մասնաւորաբար Հայոց մեծ Եղեռնէն վերապրող հատուածներու ճամբով, որոնք քով-քովի դրուած՝ կը հանդիսանան կարեւոր վկայութիւններ մեր պատմութեան համար», կ'ըսէ Յակոբ Կարապետ Մանճիկեան՝ յուշագիրքին «Յառաջաբան»ին հեղինակը: Գիրքը հրատարակուած է Գանատայի Համազգային Մշակութային Միութեան կողմէ, Մոնրէալ, 2008,

փոքր չափի 150 էջ:

Յակոբ Կարապետ Մանճիկեան յուշագիրքին «Յառաջաբան»ին մէջ կ'ըսէ. «Յուշեր»ուն մէջ չկան Հայոց Մեծ Եղեռնէն յատուկ ջարդերու, ողջակիզման նախճիրներու արիւնոտ տեսարաններ: Չկան սոսկում, արհաւիրք պատճառող պատկերներ: Այսուհանդերձ գիրքը ստոյգ մէկ վկայութիւնն է տարագրութեամբ, սովամահութեամբ, համաճարակներով մարդկային զանգուած մը եղեռնի ենթարկելու թուրք պետութեան նենգ հնարքներուն» (էջ 10):

Յուշագիրքին առաջին երեք գլուխներուն մէջ հեղինակը կը խօսի Քեսապի շրջանի շուրջ քսան հոգինոց Մանճիկեան գերդաստանի, նահապետական սովորութիւններու եւ զբաղումներու, ինչպէս նաեւ ծովեզերեայ Գարատուրան գիւղի կենցաղին մասին:

Գեորգ Մանճիկեան ծնած է 1905-ին Քեսապի շրջանի Գարատուրան գիւղը: Չորս տարեկանին՝ 1909-ին ականատես կը դառնայ Կիլիկիոյ Ադէտի օրերուն իրենց գիւղին ցաւալի անցուդարձերուն: Անոնք ընտանեօք կը փախչին Գարատուրանէն եւ մօտակա լեռները կ'ապաստանին: Երբ զինուած թուրք խուժանը անոնց գիւղին վրայ կը յարձակի, Մանճիկեան ընտանիքը եւ դրացիները Տիւնիկիւն կոչուած քարայրը կը մտնեն: Գիշերը երբ Գեորգի ծնկեր եղբայրը՝ Նշանը կը սկսի լալ ու ճչալ, քիչ կը մնայ որ անոնց թաքստոցը մատնուի. «Թրքական եաթաղանի վախը այնքան սաստիկ էր, որ մեզ հետ եղող դրացիները խորհուրդ տուին մօրս խեղդել եղբայրս, քան թոյլ տալ որ իր լացով մատնէ մեր թաքստոցը եւ պատճառ դառնայ բոլորիս կոտորման: Բնական է որ մօր մը համար այդ անկարելի էր: Բարեբախտաբար եղբօրս ճվոցը չլսած թուրք հրոսակները հեռացան եւ գիւղ մտան, կողոպուտի եւ տուները այրելու համար (էջ 13), կ'ըսէ հեղինակը: Այդ նպաստաւոր առիթէն օգտուելով Մանճիկեաններն ու դրացիները պարտէզներուն մէջէն անցնելով կը հեռանան ու կը հասնին Լաթաքիա, ուր 15-20 օր ապաստան կը գտնեն, մինչեւ որ թրքական պետութիւնը անոնց կ'արտօնէ իրենց գիւղերն ու տուները վերադառնալ:

Երբ կը պայթի Ա. Համաշխարհային պատերազմը, թրքական իշխանութիւնները երիտասարդները բանակ կը տանին: Գեորգ Մանճիկեան կ'ըսէ. «Մթնոլորտը մթագնած էր, մինչեւ այդ ժամանակ չտեսնուած թիւով ժանտարմներ երեւցան Քեսապի շրջակայքը: Մեր գիւղի՝ Գարատուրանի ծովահայեաց պահակատունը, ուր ընդհանրապէս հազիւ քանի մը ոստիկաններ կը գտնուէին, անոնց թիւը բարձրացաւ 25-30ի: Ժողովուրդը տեսակ մը բնագոյական սարսափի մէջ էր շարունակ եւ կուտակուած ամպեր կը տեսնէր իր շուրջը: Շշուկներ սկսան տարածուիլ 1915-ի գարնան թէ ժողովուրդին մէկ մասը պիտի հեռացնեն ծովեզերեայ շրջանէն (էջ 28):



1915-ի Յուլիսի վերջերուն Գարատուրանէն չորս հարիւր հոգիոց առաջին կարաւանը ճամբայ կը հանուի: Յաջորդող օրերուն Գարատուրանէն Ղազարեան, Մանճիկեան, Գալեմտերեան եւ Գազաեան թաղերու բնակիչները՝ աւելի քան 500 հոգի բռնի կերպով կ'աքսորուին: Գէորգ Մանճիկեանի գտնուած կարաւանը քանի մը թուրք ոստիկաններու հսկողութեան տակ «երկա՛ր շարքով կ'անցնի լեռներէն ու ձորերով» (էջ 29): Բռնագաղթի ճանապարհին վրայ երբ կարաւանը կ'անցնէր դրացի թրքական Օրտու գիւղէն, անոր բնակիչները կը ծաղրէին հայերը ըսելով. «Յուսանք շուտ կը վերադառնաք» (էջ 30):

Գէորգի մեծ հայրը իր բազմահարիւր այծերու հօտը, նաեւ եզներն ու կովերը իրենց հետ կը տանէր կարաւանով: Ճամբուն վրայ անոնք յանկարծ կը նկատեն Գէորգի հօրեղբոր՝ Կարապետի բացակայութիւնը: Պրպրտութիւններէ ետք կը պարզուի թէ ան չէր ուզած բռնագաղթուիլ եւ փախած էր դէպի Քեսապ:

Կարաւանը երբ Համա կը հասնի, հոն Գէորգի մեծ հայրը իր բոլոր կենդանիները կը վաճառէ եւ փոխարէնը ուղտեր կը գնէ, անոնց վրայ բեռնելու համար գերդաստանին բոլոր ապրանքները: Անցնելով Հոմսէն, անոնք կը հասնին Դամասկոս:

Գարատուրանի բռնագաղթուած հայերը Դամասկոսի մօտ պարտէզները կ'իջեւանին կարճատեւ մը, որմէ ետք կը փոխադրուին Ամման, Յորդանան, ուր կեանքը ահաւոր էր: Գէորգ Մանճիկեան կ'ըսէ. «Աներեւակայելի էր տեսարանը Մօտ քսան հոգի ծառի մը շուքին տակ կը հաստատեն իրենց ժամանակաւոր բնակութիւնը, աշնան եղանակին» (էջ 32):

Գէորգին հայրը ժանտատենդէ կը վարակուի եւ քանի մը շաբաթ անկողին կը պառկի: Կեանքի պայմանները տարագրութեան մէջ անտանելի էին: Գէորգի ընտանիքը հազիւ օրական չոր հաց մը կը գտնէր սնանելու համար: Հայրը անկողնին մէջ կը զառանցէր: Առաւօտ մը երբ Գէորգին հայրը քիչ մը ինքզինք լաւ կը զգայ, կ'ելլէ անկողինէն եւ փոքր տղուն կ'ըսէ որ Աստուածաշունչը բանալով կարդայ: «Ինչպէս որ երկինքի թռչունները չեն մտահոգուիր իրենց ապրուստին համար, նոյնպէս դուք ալ պէտք չէ մտահոգուիք», կ'ըսէ Յիսուս (էջ 34): Այս խօսքը լսելով Գէորգին մայրը կը սկսի արտասուիլ: Նոյն օրը Գէորգի հայրը իր հոգին կ'աւանդէ:

Հօրը մահէն ետք, Գէորգ Մանճիկեան քանի մը այլ որբերու հետ Երուսաղէմ կը տարուի Շնէլլէր կոչուած որբանոցը: Անգլիացիները կը գրաւեն Երուսաղէմը եւ յառաջանալով կը մտնեն Ամման: Սակայն անոնք Ամմանէն շուտով կը նահանջէն եւ այնտեղի հայ գաղթականները անոնց հետ Երուսաղէմ կու գան: Գէորգ իր ընտանիքին կը միանայ: Ան այս Ամմանէն եկող հայ աքսորեալներու մասին կ'ըսէ. «Հայ բռնագաղթուածները, որ ազատեցան թրքական լուծէն, հակառակ իրենց թշուառութեան, երջանիկ դարձան Երուսաղէմի մէջ եւ յուսադրուեցան որ ասկէ ետք պիտի ապրին ազատ...» (էջ 43):

Գաղթականներուն մեծ մասը Երուսաղէմէն կը փոխադրուին Փոր Սաիտ, Եգիպտոս: Անոնց հետ նաեւ Գէորգի ընտանիքը: Փոր Սաիտի վրանաքաղաքը արդէն լեցուն է Սուէտիոյ Մուսա Լերան հայերով:

Գէորգի մայրը անոր կը պատմէ թէ Ամմանի մէջ տեղացի արաբները եւ մանաւանդ տանտէրը շատ բարիացակամ ու մարդկային վերաբերմունք ցոյց տուած էին իրենց:

Ա. Համաշխարհային պատերազմը վերջ կը գտնէ դաշնակիցներու յաղթանակով: 1918-ի Նոյեմբեր 11-ին Փոր Սաիտի մէջ տողանցքներով կը նշուի դաշնակիցներու յաղթանակը: Թուրքիա պարտուած էր: 1919-ի գարնան հայ բռնագաղթուածները, որոնք արաբական երկիրներու մէջ ապաստան գտած էին, կը սկսին իրենց հայրենի քաղաքներն ու գիւղերը վերադառնալ: Գէորգի եղբայրը՝ Յովսէփ, Փոր Սաիտէն նաւով կը մեկնի Գարատուրան երթալու, ընտանեկան իրենց տունը եւ պարտէզները կարգի բերելու համար: Գէորգ ընտանեօք Հայֆա կը մեկնի եւ հոնկէ իր եղբոր Նշանի հետ Հալէպ եւ երկուքը միասին կը մտնեն Ահարոն Շիրաճեանի որբանոցը, ուր կային երկու հազար հայ որբեր:



Կարճ ժամանակ ետք Գեորգ Նշանի հետ փախուստ կու տայ որբանոցէն եւ երկուքը միասին կը մեկնին Գարատուրան: Հեղինակը՝ Գեորգ Մանճիկեան կը պատմէ վրիժառուական միջադէպ մը, երբ Քեսապի հայ երիտասարդութիւնը Քեսապի Տայի Ովսիա Մաղտըճեանի առաջնորդութեամբ կը հաւաքուի ու կը յարձակի հայոց վրայ 1909-ին եւ 1915-ին յարձակած թրքական զիւղերուն վրայ:

1920-ի սկիզբը Գեորգ եւ Նշան ընդամենը տասը հոգինոց քեսապցի երիտասարդներով Պէյրութ կը մեկնին: Հոն քանի մը շաբաթ մնալէ ետք Գեորգ Հայֆա կ'անցնի ու անկէ Երուսաղէմ, ուր կը մտնէ Ժառանգաւորաց Վարժարանը ուսումը շարունակելու: Վարժարանը աւարտելէ ետք Գեորգ կեանքի ասպարէզ կը մտնէ եւ կ'ամուսնանայ: Ան Երուսաղէմի իր տան մէջ երեք տարի կը հիւրասիրէ Ռուբէն Տէր Մինասեանն ու տիկինը: Գեորգ այդ երեք տարիներուն համար կ'ըսէ թէ անոնք իր կեանքի ամենէն երջանիկ տարիները եղած են, երբ Տէր Մինասեան անոնց կը պատմէր իր կեանքի դրուագներէն:

1948-ին Պաղեստինի տխուր դէպքերուն պատճառով արաբ-իսրայէլեան պատերազմէն ետք, հայկական գաղութի իննսուն առ հարիւրը դէպի շրջակայ արաբական երկիւններն ու այլուր կը գաղթէ: Գեորգ Մանճիկեան 1954-ին կը հաստատուի Պէյրութ, ուր լաւ գործ կ'ունենայ: Լիբանանի քաղաքացիական պատերազմին պատճառով ալ ընտանեօք կը գաղթեն Լոս Անճելոս- ԱՄՆ, ուր կը մահանայ 1985-ին:

Այս յուշագրութիւնը ունի երկու յատկանշական բացառութիւններ, որոնցմէ առաջինը այն է թէ ան Քեսապէն բռնագաղթուածներու շատ քիչ յուշագրութիւններէն մէկն է: Երկրորդ կէտը այն է թէ յուշագրութեան մէջ կը հանդիպինք Երուսաղէմ եւ ապա Փոքր Սաիտ ապաստան գտած հայ բեկորներու պատմութեան, Երուսաղէմի եւ Փոքր Սաիտի վրանաքաղաքի անցուղարձերուն եւ կենցաղային մանրամասնութիւններուն:

Աղբիւր՝ ՊԱՅՔԱՐ

ԳՐԱԿԱՆ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ

ՓՈԻՆՋ ՍԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷ



Այբ-բեն-գիմ,
Տեսիլքն ես դուն սուրբ Մեսրոպի
Որ կը շողաս մեր աչքերուն
Որպէս հայուն խորին խորհուրդ
Ու ճանապարհի մեր գոյերթին...



Այբ-բեն-գիւմ,
Տեսիլքն ես դուն հայ մամիկին
Որ ոսկրացած իր մատներով
Քեզ դրոշմեց գորշ, տաք աւազին՝
Փրկութեան լաստ ամրակոորով...

Այբ-բեն-գիւմ,
Մենք քեզ տարինք հոն ուր գացինք,
Դուն հոգեղէն հաց, մանանա,
Մեր գոյութեան թուր կեծակին,
Ոգեղէն հող հայրենական...

Այբ-բեն-գիւմ,
Ու պիտ' երդնունք քեզ պահպանել
Ինչպէս աչքի լոյսը անգին,
Քանզի դուն ես հայու հոգին,
Քեզմով ենք ա՛զգ, հո՛ղ հայրենի...
20/9/2019

.....

Բառե՛ր, բառե՛ր,
Դուք կ'անձրեւէք առատայորդ
Մտքիս, հոգւոյս պարտէզին մէջ,
Կը ոռոգէք հերկերն անոնց,
Զերթ ջուրը՝ դաշտն արեւակէզ...

Զեր տեղումէն տողեր ծնին,
Ինչպէս ծիլեր՝ չորցած ճիւղէն,
Յետոյ դառնաք գունեղ ծաղիկ,
Մեր հին լեզուն բարեզարդէք...

Եւ ես ուրախ կը թռչկոտիմ
Ծաղկե-ծաղիկ թիթեռին պէս,
Միրոյ նեկտար կը հաւաքեմ
Բաժակներէն բացուած լոյսին...

Բառե՛ր, բառե՛ր,
Տեղացէք լո՛յս, տեղացէք յո՛յս,
Բաշխէք նոր կեա՛նք եւ օրհնութի՛ւն,
Թախ՝ծի ամպը իմ երկնքին
Դառնայ այլոց բերք ու բարիք:
14/7/2021

.....

ԵՐԿԻՐ, ՀԱՅՐԵՆԻՔ

Երկի՛ր, հայրենի՛ք, դուն կանգուն մնայ,



Առանց քեզ անդէմ մուրիկ կը դառնանք,
Կոյր թափառական, անտուն, անօճախ,
Աներդիք քոչուոր այս արեւի տակ:

Երկի՛ր, հայրենի՛ք, դուն պիտի տոկաս,
Որ խօսքը հայոց հնչէ դարէ դար,
Հայ երգն ու տաղը անտէր չդառնան,
Խաչքար ու վանքեր դառն արցունք չլան:

Քեզմո՛վ միմիայն բառը Մեսրոպեան
Բերանէ բերան սաղմոս կը դառնայ,
Հոգիէ հոգի՝ ծիածան երփներանգ,
Պարտէզը հայուն՝ շքեղ անդաստան:

Քեզմո՛վ միմիայն քարը ոգի է,
Երկնապլաց տաճար Մասիսագմբէթ,
Ուր աղօթքն ունի այն գաղտնի ճամբան
Որ կրնայ տանիլ Բարձրեալին անհաս:

Քեզմով Մասիսը՝ լոկ լերկ քար ու ժայռ,
Կը դառնայ անհաս փառքերու ճամբայ,
Անցեալ դարերու պերճախօս վկան,
Երդում ու խոստում մեր գալիքին վառ:

Երկի՛ր, հայրենի՛ք, մեր գոյութեան սին,
Աստղեր հաւաքէ երկինքներէդ լուրթ,
Լոյսեր ճառագէ մթամածին՝ յոյս,
Բաշխէ աշխարհին սէր, հաւատք, խրախոյս: Ե.Գ.
6/5/2024

.....

ԲԱՌԸ ՀՐԱՇԱԳՈՐԾ

Բառը կրնայ թել ու թռիչք տալ,
Բառը կրնայ ամոքել ցաւ,
Բառը կրնայ ազատագրել,
Բառը կրնայ թելաւորել...

Բառը կրնայ վիրաւորել,
Ահ ու սարսափ լոկ տարածել,
Ցեխարձակել, թունաւորել,
Հրահրել կիրքեր, պատերազմներ...

Բառը կրնայ գործիք դառնալ
Մուտի, ոխի, ատելութեան,
Բառը կրնայ աղմուկ դառնալ
Ուղեղներու յար լուացման...



Բառը կրնայ աղօթք դառնալ
Լուսահամբոյր, քաղցրածորան,
Ծիածանեւ սիրտերն իրար,
Աստուծոյ հետ կամար դառնալ...

Բառը կրնայ շաղախ դառնալ
Աղօթատան, հայրենեաց տան,
Բառը կրնայ կործանարար
Ռումբեր տեղալ հայրենաքանդ...

Թէ կարենաս բառդ ծորել
Միտքէդ, սիրտէդ, նաեւ խիղճէդ,
Հոգիդ դնել բառիդ մէջ բորբ,
Բառդ դառնայ հրրաշագործ...

Ան կը դառնայ բոյժ ու դարման,
Սպեղանի բիւր-բիւր ցաւաց,
Յոյսեր վառել սիրավարար,
Արշալոյսներ լուածորան...
31/8/2019

.....

ԱՇՈՒՆԸ ԿԻՆ Է

Աշունը կին է պչրոտ, քմայքոտ
Որ իր հրրապոյրն է փրփրեր շրթայլ
Վերջին մի տենդով, խենդացնող հուրքով,
Կըրակ ու բոց է հագեր հրրավառ...

Դեռ այնքա՛ն դիւթանք ու թովչանք ունի,
Դեռ այնքա՛ն գորով ու կարօտ ունի,
Սերեր դեռ չըսուած, այրումներ ներքին
Որոնք դարձեր են ցուքեր հրակարմիր...

Ու պիտ' շողշողայ բիւր երանգներով,
Բաշխէ լիառատ տարփանքները խօլ,
Սիրակաթ սիրտը պիտ' տայ աշխարհին,
Սա չէ՞ իր կենաց խորհուրդը խորին...
7/10/2019

.....

ՀԱՅԱՍՏԱՆՍ



Մայրական գիրկ ես տաքուկ, մտերմիկ,
Սրտիս մէջ այրող սիրոյ կրակ ես,
Երազ ես անհաս ու անչափ մօտիկ,
Սրտաբուխ աղօթք ու սուրբ նշխար ես:

Իմ Հայաստանս,
Յոյսերու օրրան, հաւատքի ջահ ես,
Լեռան կատարին փայլփլող աստղ ես,
Ուղեցոյց փարոս ես մութ երկնքին,
Զերթ Արագածին՝ կանթեղը լոյսի:

Իմ Հայաստանս,
Լուսեղէն բարձունքն ես Արարատի,
Որուն պիտ' ձգտինք դեռ դար ու դարեր,
Գոյութեան խորհուրդն ես անմեկնելի,
Անսկիզբ, անվերջ առեղծուած մ'ես:

Իմ Հայաստանս,
Տառապանքի ծով, զարթոնքի հրաշք ես,
Հրեղէն ցասում, արարման բոց ես,
Արցունք ես սուրբի որ կաթի անվերջ
Եւ լոյս կը դառնայ մաքուր ու բիրեղ:

Իսկ դժուար պահին, հրացայտ ժայթքն ես
Ոգիին Հայկեան հրաշունչ, բոցէ,
Որ հըրաբխի յանուն իր պատուին,
Սուրբ ազատութեանն իր հայրենիքին:

Իմ Հայաստանս,
Դուն պիտի ապրիս յաւերժագնայ,
Ուղիդ անվերջ է, արեգակնավառ,
Նոր ժամանակի շունչը պիտ' դառնաս,
Նոր արշալոյսի լոյսով արբեցած:

21/9/2025

ԱՐԱՄ ՄԵՓԵԹՃԵԱՆԻ ԱՆՄՈՌԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ



Չորս տարեկան էիր, երբ ստիպուած հեռացար ծնողքիդ հետ քու շատ սիրած ծննդավայրէն՝ Տէօրթ-Եօլէն (Չորք Մարգպան)։ Դժուար տարիներ էին։ Հեշտ չեղաւ քու մանկութիւնդ։ Ծանր էր ծնողքիդ բեռը։ Հինգ զաւակ. երկու քոյր ու երկու եղբայր ունէիր։ Դուն անոնց կրտսերն էիր։ Անցան տարիներ, երբ արդէն դուն սկսար հոգալ ընտանիքիդ առօրեայ հոգերը։

Օր մըն ալ, պայմաններու բերումով, ստիպուած եղար լքել քու երկրորդ հայրենիքդ՝ Լիբանանը եւ բռնեցիր օտարութեան ճամբան։ Ասիկա սկիզբն էր արտասահման աշխատելու քու որոշումին, որ միակ կարելին էր այդ օրերուն, ու շարունակուեցաւ գրեթէ ամբողջ կեանքիդ ընթացքին։

Վերադարձար Պէրութ եւ կազմեցինք մեր հայկական սիրասուն ընտանիքը. բախտաւորուեցանք երեք աննման զաւակներով՝ երկու մանչ եւ մէկ դուստր։

Կեանքը սովորական էր սկիզբը։ Յետոյ բարդացաւ եւ դուն յաճախակի առիթներով սկսար գործով ճամբորդել արաբական, ափրիկեան եւ ամերիկեան երկիրներ՝ մեր ընտանիքին բարօրութիւնը ապահովելու համար։ Լիբանանի միջկուսակցական ներքին թշնամութիւնները, մանաւանդ 1975-էն ետք, մեզի բաժին ինկած դժուարութիւնները արդարացուցին քու արտագնայ աշխատանքը։ Այսպիսով զրկուեցար զաւակներուդ հետ ամէնօրեայ շփուելէն ու ականատես չեղար անոնց օրէ-օր մեծնալուն ու աճելուն։ Ծնողական գերագոյն ինքնագոհողութիւն։

Ի՞նչ բառերով կարելի է քեզ բնութագրել։ Հայրենասէ՞ր՝ այո. մարդասէր, ընտանեւէր, եկեղեցասէր, ընթերցասէր, գրասէր ու վերջապէս գրող ու հրապարակագիր Արամ Մեփեթճեան։

Ահա արդէն հինգ տարի անցած է քու մեկնումէդ։ Մենք կ'ապրինք ու կը գոյատեւենք, բայց ինչպէ՞ս...։ Պէրութի նաւահանգիստի սարսափելի պայթումէն ետք կեանքը կը շարունակուի, բայց ինչպէ՞ս...։



Ատկէ երկու ամիս ետք՝ 2020 Հոկտեմբեր 5-ին, դուն հեռացար այս դաժան աշխարհէն, բաժնուելով հարազատներէդ ու բոլոր քեզ սիրողներէն: Մենք շարունակեցինք ապրիլ, բայց ինչպէ՛ս....:

Այս անցած հինգ տարիներուն ընթացքին չտեսնուած նուաճումներ արձանագրեց գիտութիւնը: Երանի՛ չըլլար այդ: Արդի՞նքը. բազում-բազում մարդկային զոհեր ու քանդումներ-քանդումներ-քանդումներ:

Մարդկութիւնը իր սեփական ձեռքերով ու մտային թոհչքով սպաննեց մեր երագները, մեր հաւատքն ու հաւատամքը: Անխիղճ աշխարհի մը մէջ կ'ապրինք: Կա՛ն յոյսի աննշան նշոյլներ, որոնք յաճախ ամչնալով իրենց գլուխը կը ցցեն ու նոր արեւագալի մը յոյսը կը ներշնչեն մեզի: Ահա թէ ինչո՛ւ դեռ կ'ապրինք. բայց ինչպէ՛ս....: Ինչ լաւ, որ չտեսար այս բոլորը: Մաքուր ու մարդասէր հոգիդ պիտի ալեկոծուէր ու Աստուած գիտէ սահուն գրիչէդ ինչ պիտի ծորէր ի տես այս բոլորին: Կեանքը կը շարունակուի. բայց ինչպէ՛ս....:

Ո՞ր հայր չէր տենչար իր վերջին հանգրուանը գտնել հայրենի հողին փարուելով: Սակայն, քեզմէ աւելի բախտաւոր եղան սեփական հեղինակած հատորներդ եւ քու անձնական գրադարանէն ընտրեալ մատեանները, որոնք փոքր անկիւն մը պիտի գրաւեն հայրենիքի մէջ: Ասիկա տարիներ առաջ մշակած քու նախաձեռնութեան իրականացումն էր շնորհիւ փրոֆ. Սուրեն Դանիէլեանի, որ տնօրէնն է ՀՊՄՀ-ի (Հայաստանի պետական մանկավարժական համալսարանի) «Մփիւոք» գիտաուսումնական կեդրոնի: Այս գրադարանի հաստատման մէջ իրենց ներդրումը ունին նաեւ քու զաւակներդ, բայց մանաւանդ տոքթ. եւ տիկ. Շահէ եւ Հուրի Փարթամեանները, որոնք կամուրջ հանդիսացան Պէյրութ-Երեւան երթուղիին, յաճախ խորհրդակցելով փրոֆ. Ս. Դանիէլեանի եւ անոր ժրաջան աշխատակազմին հետ: Վարձքը կատար բոլոր անոնց, որոնք կը ստեղծագործեն, անոնց, որոնք գիտեն եղածը գնահատել եւ արժանին տալ արժանաւորին: Քի՛չ է ըսել շնորհակալութիւն:

Դուն չկաս հիմա: Կան քու սիրասուն ու փայփայած գիրքերդ: Կայ քու գրադարանդ, քու ոգին ու հոգին հիմա մեզի հետ են: Այսպէս է կարգն աշխարհի: Բոլորս գնայուն ենք: Երանի անոնց, որոնք հետք մը, յիշատակ մը կը թողուն իրենց ետին: Դուն անոնցմէ մէկն ես....: Այս կեանքը կը շարունակուի. բայց ինչպէ՛ս....:

Մահուան 5-րդ տարելիցին առիթով

ՄԵԼԻՆԷ ԱՐԱՄ ՍԵՓԵԹՃԵԱՆ

30/9/2025

ԲՈՅՐԸ

Սարգիս Քէլ Խաչերեան



Երկու խանութ՝ ճիշդ դեմ դիմաց: Գունաւոր ապակիներ, դռնեզներուն կախուած համեմունքի պարկեր: Ամէն քամիի փչոցին, հող ու երկինք կը բուրէր: Անցեալի փոշին՝ բոյրով:

Երկու մարդ՝ Սայիտ ու Պըշարա: Նոյն արհեստը, նոյն տարիքը, նոյն փողոցը, բայց տարբեր աշխարհներ: Լուռ բարեւ, նրբացած

ժպիտ: Մէկուն խանութէն՝ մշտական շարժում, միւսը՝ լռութեան մէջ նստած, դիմացի մայթին կը նայի հարցումով, որուն պատասխանը կը խուսափի իր աչքերէն:

Սայիտի խանութը՝ գեղագիտական ու նուրբ: Պիտակներ հին մատենադարանի տառերով: «Սուրիական դարչին», «Հնդկական զաֆրան», «Եգիպտական անիսոն»: Ամէն բան կար, բացի մարդէն:

Իսկ Պըշարային խանութը կը շնչէր: Մտնողը կ'ուզէր չելլել: Օծանելիքի պէս տաք ու փափուկ բոյր մը կը սահէր դուրս՝ կարծես ոչ միայն քիթը, այլ հոգին ալ կը շարժէր:

Մարդիկ կարծես կը մտնէին ոչ թէ ապրանքի, այլ՝ հանգիստի: Երկար կանգնած կը մնային շեմին՝ ներս մտնելէ առաջ թօթափելով իրենց վրայէն քաղաքի փոշին:

Ո՛չ գինեւորուն մէջ էր տարբերութիւնը, ո՛չ ապրանքի որակին:

Երբ Պըշարային մայրը մահացաւ, եւ խանութը երեք օր փակ մնաց, Սայիտ՝ ներսէն գաղտնի հրճուեցաւ. գուցէ բախտը կը բացուի: Բայց եւ՛ այդ օրերուն, եւ՛ ետքը՝ ոչ մէկ ոտք անցաւ իր դռնէն:

Անցաւ ամիս մը եւ Պըշարա մեկնեցաւ առեւտրական ճամբորդութեան: Սայիտ կրկին հաւատաց՝ ա՛յս անգամ բախտը իրեն պիտի ժպտի:

Բայց օրերը անցան, եւ ան տակաւին միայնակ էր իր բազմոցին վրայ: Խանութին շնչառութիւնը՝ կաթուածահար: Միայն օր մը մէկը ներս մտնելով հարցուց. «Պըշարային խանութը ա՛յս է», եւ երբ ժխտական պատասխան ստացաւ՝ ետ դառնալով դուրս ելաւ առանց նայելու անգամ:

Սայիտ յոգնեցաւ, բայց չյուսահատեցաւ: Սկսաւ դիտել: Ամէն օր տասն անգամ դուրս կու գար, միեւնոյն հարցումով՝ «Ի՞նչ ունի Պըշարան, զոր ես չունիմ»:

Եւ օր մը, երբ ամառնային արեւը կ'անցնէր փոշոտ մայթերէն, եւ Սայիտ կրկին նստած էր խանութին առջեւ, յանկարծ զգաց: Բոյր մըն էր: Ո՛չ պարզ համեմունք, ո՛չ պարզ հոտ: Շուշանի պէս մաքուր, յիշողութեան պէս քաղցր, անմոռաց:

Շնչեց լիաթոք: Ոտքերը շարժեցան իբրեւ իրենք զիրենք տարին «դէպի հոն»:

Անցաւ Պըշարային խանութին ետեւը, ուր փոքրիկ օդանցք մը կար: Հոնկէ էր որ բոյրը դուրս կու գար: Կանգ առաւ, նայեցաւ ներս: Պըշարա նստած էր, չոր բոյսերով շրջապատուած: Իր դիմաց փոքրիկ ապակեայ շիշ մը: Զաֆրանը կը խառնէր մանանեխի փոշիին, կը շաղէր ձիթէնի ծաղկափոշիով, կը թաւալէր վարդի եփուկին մէջ, ապա վերջին կաթիլը անանուն սեւ շիշէն: Ո՛չ գոյն, ո՛չ հոտ: Բայց եթէ շնչէիր՝ ուղիղ կը յայտնուէր հոգիիդ մէջ:

Բոյրը անմիջապէս բարձրացաւ սենեակին մէջ, սահեցաւ պատերուն վրայ, եւ դուրս ելաւ օդանցքէն՝ ամպի պէս: Սայիտ կրկին շնչեց: Զտեսաւ՝ զգաց: Կիսաբաց աչքերով փորձեց վերադառնալ խանութ, մանկական յիշողութիւն մը վերագտածի հանգիստով:

Պըշարա զգաց Սայիտին շունչը:



- Չեմ ծախեր համեմունք, Սայիտ: Ամէն մարդ կրնայ զաֆրան ծախել: Ես կը խառնեմ ոչ թէ համեմունքներ, այլ՝ յիշողութիւններ: Ու մարդիկ, Սայիտ, սիրտով կ'առնեն, ոչ թէ քսակով:

Սայիտ չպատասխանեց: Գնաց: Բայց ներսը՝ սառն չէր:

Յաջորդ օրը մտաւ Պրշարային խանութը, ոչ որպէս մրցակից, այլ՝ որպէս սովորական գնորդ: Ձեռքը երկարեց, քնքշօրէն շիշ մը վերցուց:

- Ասիկա... ի՞նչ կը պարունակէ, Պրշարա՛:

- Բան մը՝ որ մարդ կը կորսնցնէ, բայց յիշել կ'ուզէ:

Սայիտ գլխով ընդառաջեց: Առաւ երկրորդ շիշը: Ապա երրորդը:


Հետագայ շաբաթէն՝ իր խանութը պահեստ էր: Իր իսկ առեւտուրը Պրշարայէն կ'անցնէր:

Երբ մարդիկ հարցնէին, թէ հիմա ի՞նչ կ'ընէ, կը պատասխանէր.

- Կարօտ կը վաճառեմ... ուրիշի բոյրով:

<http://www.kantsasar.com/news/57827-2/>

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ



Սփիւռքահայ առօրեան, իր բազմաձայն ու բազմազան իրականութիւններով, ունի մէկ հիմնական առաքելութիւն՝

հայապահպանում:

Հայապահպանութեան կարեւորագոյն սիւները դպրոցն ու եկեղեցին են անկասկած: Հայապահպանում չի նշանակել միայն մեր ժողովուրդին պատմական յիշողութիւնը կենդանի պահել, այլեւ մայրենի լեզուն, գրականութիւնը, մշակոյթը եւ ազգային արժէքները: Ահա՛ այստեղ է, որ

հայագիտութիւնը կը ստանայ կենսական ու անփոխարինելի դեր: Առանց դպրոցի եւ եկեղեցիի անսնունդ կը մնան մնացեալ բոլոր կառոյցները:

Անցնող երեսուն տարիներուն, Մեծի Տանն Կիլիկիոյ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի անմիջական հովանաւորութեամբ եւ հսկողութեամբ գործող Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնը նոր շունչ ստացաւ քանի մը օր առաջ, երբ Ազգային Կեդրոնական Վարչութեան որոշումով յետ այսու պիտի կոչուի «ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»:

Վեհափառ Հայրապետը իր գահակալութեան առաջին տարիներէն, համեստ պայմաններու մէջ նախաձեռնած է Արեւմտահայերէնի ուսուցման եւ պահպանման ծրագիրը: Այդ դասընթացքները սկզբնական շրջանին համեստ, սակայն խորացած ծրագիրով ընթացան: Ժամանակի ընթացքին, անոր գործունէութիւնը աստիճանաբար զարգացաւ ու ամրապնդուեցաւ՝ դառնալով այն կեդրոնը, որ այսօր արժանաբար կոչուեցաւ «ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»:

Սովորական անուանափոխութիւն մը չէ այս ողջունելի որոշումը: Ան գնահատանք եւ յարգանք մըն է ուղղուած մեր մեծանուն Վեհափառ Հայրապետին, որ տարիներ շարունակ իր օրհնութեամբ, անմիջական հսկողութեամբ եւ քաջալերանքով հետեւած է Հայագիտական Կեդրոնին զարգացման փուլերուն:

Այս քայլը կը նշանաւորէ ոչ միայն Հայագիտական Կեդրոնի յառաջընթացը, այլեւ հայ լեզուի, մշակոյթի եւ ինքնութեան պահպանութեան անփոփոխ յանձնառութիւնը:

Անկասկած, Արամ Ա. Կաթողիկոսի անուամբ շնորհուած յիշեալ Հիմնարկը միայն տիտղոս չէ, այլ կը հանդիսանայ պարտաւորութիւն ու պատգամ: Պարտաւորութիւն՝ շարունակել



զարգացնել Արեւմտահայերէնի ուսուցումը, մշակել նոր ծրագիրներ, կազմակերպել գիտական ու մշակութային ձեռնարկներ, սերունդներուն փոխանցել հայերէն լեզուի, հայոց պատմութեան ու հայ մշակոյթի հարստութիւնները: Պատգամ՝ ամրացնել ազգային ինքնութիւնը, խթանել համայնքային միասնականութիւնը, կապ Սփիւռքի եւ Հայաստանի միջեւ:

«ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»ը պիտի դառնայ փոխանցման կարելոր հարթակ: Ան պիտի դառնայ սփիւռքահայութեան եւ լիբանանահայութեան հոգեւոր ու մշակութային ժառանգութեան կարելորագոյն կեդրոններէն: Լիբանանի եւ աշխարհասփիւր հայութեան հայագիտութեամբ զբաղող անհատներուն հասանելի պիտի դարձնէ հայերէն լեզուն, գրականութիւնը, հայոց պատմութիւնն ու մշակոյթը:

Նորին Սրբութեան անմիջական քաջալերանքով ու հսկողութեամբ, նախաձեռնութիւնը զարգացման նոր խարիսխ գտաւ: Հիմնարկը իր բազմաձաւ ծրագիրներուն մէջ պիտի խթանէ գիտական հետազոտութիւնները, ստեղծագործական նախաձեռնութիւնները: Հիմնարկը նաեւ կը նախատեսէ լայնածաւալ ու որակաւոր ծառայութիւններ՝ հայապահպանութեան, լեզուի զարգացման եւ սերունդներու դաստիարակութեան առումով: Արամ Ա. Վեհափառ Հայրապետը միշտ լաւատեսութիւն եւ հաւատք յայտնած է ապագայի հանդէպ: Ան համոզուած է եւ գիտէ՝ լեզուն, մշակոյթը եւ ինքնութիւնը միայն անխախտ պահելով կարելի պիտի ըլլայ երաշխաւորել սփիւռքահայութեան գոյութիւնը: Մայրենի լեզուն իր հարուստ բառապաշարով, նրբագեղ հատուածներով, գրական ժառանգութեամբ եւ բանահիւսակն զարմանահրաշ աղբիւրներով, պիտի պահուի, տարածուի եւ փոխանցուի յաջորդ սերունդներուն:

Հիմնարկը կը գործէ Կաթողիկոսարանի անմիջականօրէն առնչուած Խորէն Ա. Կեդրոնին մէջ, Ֆանար:

Ն.Ս.Օ.Տ.Տ Արամ Ա. Կաթողիկոսը այս նախաձեռնութեամբ մեզի հաւատք կը ներշնչէ՝ հաւաքական ճիգերով յաղթահարելու ժամանակի մարտահրաւերները:

«ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿ»ը պիտի մնայ Արեւմտահայերէնն ու ազգային ինքնութիւնը պահպանելու ամուր պատնէշ եւ յաւերժ ուղեցոյց:

Ահարոն Շիրտըմեան

ԱՆՏԱՆՕԹՈՒՀԻՆ

(Խոհագրութիւն)



Իր դեգերումներուն կամ թափառումներուն ընթացքին՝ քիչ մը ամէն տեղ, իր հայեացքը կը սեւեռէր ամէնուր, նոյնիսկ ամէնէն սովորական թուող իրերու կամ երեւոյթներու վրայ, նոր բան մը նկատելու, միտքի նոր գրգիռ մը գտնելու եւ ըստ էութեան ճանաչողութեան ծարաւով տոգորուն: Ծարաւ՝ որ կը մնար անյագ, չէր ծերանար ու չէր ալ թողուր որ ինք ծերանար: Գուցէ սա էր գաղտնիքը իր հոգեմտաւոր մշտական երիտասարդութեան: Աշխարհը նորովի յայտնաբերելու,

նորովի հասկնալու մարմաջը գոր իր մէջ կը կրէր մանուկ հասակէն մինչեւ հիմա: Ինչ երանութիւն, խորհրդածեց ան: Սա էր նաեւ պատճառը որ ձանձրոյթ բառը օտար էր իրեն: Անշուշտ, կ'ընդունէր որ երբեմն կեանքը տաղտկալի կը դառնար իր առօրեայ հեւքով ու վագրով... Վերջապէս, ինքն ալ մարդ էր, կը մտորէր, միս ու արիւնով եւ փոփոխութիւնը օդի, ջուրի, հացի նման անհրաժեշտ էր: Այնուամենայնիւ, ամէնէն ձանձրալի թուող պահերուն ալ, հնարը կը գտնէր զինք հետաքրքրող բան մը որսալու...

Նկատէր էր որ իր շրջապատի մարդիկ սովորաբար կը հետաքրքրուէին միայն ֆիզիքական կամ մարմնական բարիքներով... Ճաշարան երթալ, ուտել-խմել, զբօսավայրեր յաճախել եւ տարբեր մարմնական հաճոյքներու անձնատուր ըլլալ... մինչ քիչեր փափաքը կը զգային մտային բարիքներու... գիրք կարդալ, միտք ածել, հարցեր քննարկել, նոր բան սորվիլ, ճանաչողութեան կամ հասկացողութեան հորիզոնները ընդարձակել թէկուզ բնութեան մէջ զբօսնելով... ստեղծագործել...: Բայց կը խորհրդածէր թէ մարդ էակը միայն մարմին չէ, ան ունի նաեւ միտք ու հոգի, որոնք իրենցը կը պահանջեն բնականաբար: Միտքը, մտածումը մարդուն փառքն է, կը գրէր անգլիացի փիլիսոփան՝ Պերթրանտ Ռասելը, արձանագրելով՝ «Մտածումը մեծ է, արագընթաց եւ ազատ, լոյսը աշխարհին եւ գլխաւոր փառքը մարդուն»: Իրաւամբ ալ, մտածեց, միտք ածելով մարդ էակը կը փորձէ հասկնալ աշխարհն ու կեանքը առ հասարակ, ինքզինք եւ տակաւ իմաստութիւն կը ձեռքբերէ: Իսկ հոգին մարդ էակին խիղճ կու տայ, գուր ու կարեկցանք, բարութեան, գեղեցիկի ճաշակը եւ նման առաքինութիւններ, աւելցուց ան: Շարունակելով իր միտքերը, ան եզրակացուց որ աշխարհը շատ աւելի լաւ տեղ պիտի ըլլար, եթէ մարդկային մարմինը, միտքն ու հոգին աճէին կամ անոնց կարիքները բաւարարութիւն գտնէին ներդաշնակօրէն... Օ՛, ինչ իտէալական աշխարհ մը պիտի ըլլար յայնժամ, երեւակայեց: Գուցէ պատերազմները վերջ գտնէին եւ հաշտ ու խաղաղ աշխարհ մը գոյանար վերջիվերջոյ... եւ խոր շունչ մը քաշեց:

Բայց այդ իտէալական աշխարհին պիտի խանգարէին որոշապէս աւելի՛ն ու աւելի՛ն ունենալու մոլուցքը, շահամոլութիւնը, իշխելու կործանարար կիրքը եւ նման յոռի հակումներ, որոնք միշտ ալ կային մարդուն մէջ, մտմտաց: Իսկ դաստիարակութիւնը պիտի կարենա՞ր այդ բաները արմատախիլ ընել մարդ արարածին մէջ, հարցադրեց



կասկածանքով: Դար ու դարեր եւ հազարամեակներ նոյն այդ ոլորապտոյտին մէջ էին մարդն ու աշխարհը, ազգեր ու երկիրներ...Եւ ոյժը, շատ անգամ բիրտ ոյժը իրաւունք կը ծնէր այլոց հայրենիքներն ու օճախները յափշտակելու, այլոց ստեղծածը բռնագրաւելու, այլ ժողովուրդներ յօշոտելու, շարունակեց: Օ՛, աշխարհ, աշխարհ, հառաչեց ի խորոց սրտի:

Քաղաքակրթութիւնը երազ էր որ ամէն պահ կը բռնաբարուէր մարդուն մէջ ապրող զգանքին կամ բարբարոսին կողմէ: Վկայ՝ պատերազմները, ցեղասպանութիւնները, որոնք այս «լուսաւոր, գերքաղաքակիրթ» դարուն կարծես նոր թափով կը շարունակուէին, անդրադարձաւ ան զայրագին: Եւ յիշեց բռնի հայաթափուած Արցախեան հայրենիքը յատկապէս, ուր Մեսրոպ Մաշտոց բացեր էր հայկական առաջին դպրոցը եւ սիրտը մղկտեցաւ դառնակակիծ: Պատերազմը եւ յատկապէս ցեղասպանութիւնը մեծագոյն ամօթն է քաղաքակրթութեան, անոր ժխտումն իսկ, ըսաւ ինքն իրեն եւ չուզեց շարունակել...

Ա՛լ ի՞նչ խօսք կրնար ըլլալ այն մեծ Ներդաշնակութեան մասին՝ մարմնի, մտքի եւ հոգիի...Այդ ներդաշնակութիւնը կը շնչէր արուեստներու, գրականութեան մէջ եւ դեռ յոյս կը ներշնչէր աւելի լաւ ապագայի...կամ անոր պատրա՞նքը: Եւ յետոյ մրմնջեց. «Բայց մարդը կրնա յ ապրիլ առանց պատրանքի, կամ հեքիաթի ու անուրջի...»:

Այդ ներդաշնակութիւնը, սակայն, միշտ ալ կար ու պիտի ըլլար...բարի, անանձնական արարքներու մէջ, սիրոյ զգացումին մէջ, տիեզերական կարգ ու կանոնին մէջ, երկնքի անհունին մէջ, արեւալոյսին մէջ, աստղերու պսպղումին ու փսփսութիւն մէջ, արծաթ լուսնեակին մէջ... Ան կը ծաղկէր ծիլ ու բողբոջին, ծառ ու ծաղիկին մէջ, սիրտերու համանուագին մէջ, ստեղծագործական արարքներու մէջ: Կ'ապրէր օճախներէն ներս, տուններու մէջ, պարտէզներու եւ մրգաստաններու մէջ եւ ամէնուր ուր կեանքը կը շնչէր սիրառատ...Ամէն տեղ էր ան, մտորեց: Եւ գուցէ անոր երբեմնի հեռացումն էր պատճառը ամէն բարբարոսութեան, ամէն նախճիրի...այնպէս ինչպէս լոյսի խամրումն էր պատճառը խաւարածին մութին:

Ներդաշնակութեան բուն ակունքը Մերն է, խորհրդածեց, աստուածային այն կայծը մարդուն մէջ որ հրաշքներ կրնայ գործել, բերք ու բարիք արարել, ծիածանել սիրտերն ու հոգիները, ներշնչման աղբիւր դառնալ սխրանքներու եւ հերոսական խոյանքներու կեանքի բոլոր բնագաւառներէն ներս...: Սիրոյ բացակայութեան՝ կը ծաղկին նախանձը, չարութիւնը, անարդարութիւնը, անգթութիւնը եւ ամէն տեսակ յանցագործութիւն...: Եւ յիշեց Ուիլիըմ Սարոյեանի իմաստալից եւ ոգեշնչող խօսքերը. «Մերը անմահ է եւ ամէն ինչ յաւերժական կը դարձնէ, իսկ ատելութիւնը կը մեռնի ամէն պահ ...»:

Այդ սերը իրական է, եզրակացուց, եւ ան է մղիչ ոյժը, կենսատու աղբիւրը ամէն բարիքի, ամէն լաւութեան, նոյնինքն կեանքին:

Երան Գույումճեան

29/9/2025

ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Ապրիլը երջանկություն է, մինչեւ այն ատեն որ գիտես սքանչանալ, զմայլիլ անխառն գեղեցիկով, մտածել ու խորանալ կեանքի երեւոյթներուն մէջ, նոր իմաստներ յայտնաբերել, զգալ կեանքի հրաշք-խորհուրդը...եւ գէթ նշոյլով մը ճառագայթ սփռել, բարին արարել:

.....

Եթէ մենք չկարենանք իրարու հետ խօսիլ քաղաքակիրթ լեզուով, քննարկել ու բանավիճիլ, մանաւանդ հրապարակային հարթակներուն վրայ, Ազգային Ժողովի դահլիճին մէջ...առանց հայեոյախօսութեան, անարգական խօսքի, ցեխարձակման եւ լուտանքի, յայնժամ մենք չենք կրնար լուծել մեր անվտանգութեան եւ ազգային պետական կարեւորագոյն հարցերը եւ կը դառնանք ԾԻԾԱՂԵԼԻ յաչս օտարին եւ հայ հանրութեան: Աւելին, մենք չենք կրնար դառնալ լիարժէք ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳ:

.....

Երբ մեծութեան մը քով կ'ապրինք, չենք ալ նկատեր զայն, երբեմն զայն կը ժխտենք, նոյնիսկ կը հալածենք զայն՝ մեր բամբասանքներով, մեր չարախօսութեամբ: Յետոյ, երբ ան ա'լ չկայ, կ'աւաղենք, կ'ափսոսանք եւ կը մեծարենք անոր բացակայութիւնը...: Չեմ գիտեր թէ ինչո՞ւ է այդպէս...Բայց լեռան մը բարձրութիւնն անգամ կը նշմարենք, երբ հեռուէն կը դիտենք զայն:

.....

Մարդկային տարբեր փորձառութիւններն են, որոնք կը հարստացնեն մեր ներաշխարհը գերազանցօրէն...Պահ մը կարելի՞ է նոյնիսկ երեւակայել, թէ ի՞նչ պիտի ըլլար կեանքը առ հասարակ, եթէ ամէն մարդ ունենար յար եւ նման փորձառութիւն: Ի՞նչ պիտի ըլլար կեանքի մեր իմացութիւնը, մեր մտահորիզոնը, որքան պիտի աղքատանայինք ու սահմանափակուէինք, եթէ ամէն մարդ միանման մտածէր, միանման զգար, միանման ապրէր...: Բնութեան ծաղիկներուն, թռչուններուն եւ բոլոր տարրերուն այլազանութեան



նման, մարդկային կեանքերու այլազանութիւնն է որ հետաքրքրական եւ բազմաճառուստ կ'ընծայէ կեանքը...ԱՅԼԱԶԱՆՈՒԹԻՒՆԸ ԷԱԿԱՆ Է ԵՐԶԱՆԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

.....

Տառապանքն է էապէս որ կը դառնայ երգ, բանաստեղծութիւն, տաղ ու խօսք թելաւոր: Մեր ժողովուրդը իր դարաւոր վերքը միշտ ալ երգի վերածեց, ստեղծագործութեամբ յաղթահարելով ճակատագրի հարուածները.: Այսպէս է որ ի հեճուկս պատմութեան փոթորիկներուն, մեր տաղասացները երգեր երկնեցին, գովերգելով հացն ու գինին, մեր երգիչները երգեր յօրինեցին կարօտի, սիրոյ, հայրենասիրութեան, մեր նկարիչները լուսաւոր եւ գունազեղ նկարներ գծեցին, ուր կը ցոլան հայուն պայծառ ու թախծոտ հոգին, մեր ճարտարապետներն ու քանդակագործները քարը ոգեղինացուցին՝ վանքեր, խաչքարեր կառուցելով ու քանդակելով: Մեր ոգին մնաց միշտ կայտառ, ստեղծագործ, լուսահայեաց ու վսեմ, մեր սուրբ լեռան նման...:

.....

ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳ ԸԼԼալ չի նշանակեր երբեք մոռնալ անցեալը, մոռնալ պատմութիւնը, մոռնալ մեր անժամանցելի իրաւունքները: ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳԸ կրնայ ի պահանջել հարկին չխօսիլ անոնց մասին տուեալ ժամանակաշրջանին, ելլելով իր գոյութենական հրամայական խնդիրներէն, բայց զանոնք Ի ՊԱՀ կը դնէ իր յիշողութեան եւ ինքնագիտակցութեան մէջ եւ երբ օրն ու պահը ներկայանան՝ զանոնք կ'արծարծէ ըստ արժանւոյն...

.....

Իր հողին վրայ չապրող մարդը կէս մարդ է, հոգեբանօրէն, զգացականօրէն, բարոյականօրէն, քաղաքականօրէն...Մարդ էակի կապը հողին հետ կենսական է, օդի, ջուրի, հացի նման: Իր հարազատ հողէն արմատախիլ մարդը, արմատախիլ բոյսի նման, օտար հողի վրայ տարատնկուած, կը կորսնցնէ իր հարազատ բոյրն ու թոյրը, իր հմայքը, դառնալով իր բուն էութեան ստուերը...ՏԱՐԱԳԻՐ ՄԱՐԴՈՒՆ ՎԻԶԸ ՄԻՇՏ ԱԼ ԾՈՒՌ Է, որքան ալ ան փորձէ շիտակ կենալ:

.....

Մեր ժամանակներուն եւ ոչ միայն, շատեր կեանքին կը նային գերազանցօրէն շահի դիտանկիւնէն...այսինքն, շահաբերութիւնն է որ կ'արժեւորէ տուեալ երեւոյթը թէ մարդկային յարաբերութիւնը...Շահաբերութեան նպատակին կը գոհեն բարեկամական թէ այլ հաւատարմութիւն, բարոյական արժէք ու սրբութիւն, հայրենասիրութիւն եւ այլ սկզբունքներ...: Բայց նման վարքագիծը՝ շահամոլութիւն, չէ՞ արդեօք մարդկային շատ մը դժբախտութեանց, պատերազմներու թէ այլ հակամարտութեանց ու չարեաց բուն աղբիւրը:

.....

Համակ կեանք մը հոգւոյն հաւատարիմ մնալը կը նշանակէ թիավարել հոսանքն ի վեր ընկերութեան պարտադրած ընթացիկ ու քարացած ըմբռնումներուն, կարծրատիպերուն,



հասարակական կարծիքի բռնություններուն... Կը նշանակէ ամէն ինչ իւրովի մտածել, յարդը ցորենէն զատել, չկրկնել թուրակաբար դարե-դար փոխանցուած սովորութիւններ, նախապաշարումներ... Կը նշանակէ քիչ մը խորթ ու զարտուղի երեւիլ, քիչ մը քարկոծուիլ, քիչ մը զրպարտուիլ, բամբասանքի առատ նիւթ հայթայթել...: Իւրովի մտածելը, իւրովի ապրիլը, ազատ ըլլալու էական յատկանիշներ են, որոնց բարձր գինը կ'արժէ վճարել, քանզի ԱԶԱՏ ԸԼԼԱԼԸ ՄԱՐԴ ԷԱԿԻ ԳԵՐԱԳՈՅՆ ԱՐԺԷՔՆ Է..

.....

Զարմանալի ժողովուրդ ենք՝ հայերս... Ազգի նուիրեալին կը խաչենք մեր բանասարկութիւններով, սուտ հերոսին կը հերոսացնենք, եւ պատիւներու կ'արժանացնենք... Ճշմարտախօսին կ'ըսենք ծախուած է, իսկ ծախուածին՝ « ի՛նչ լաւ կը խօսի »... Անվարձահատոյց ծառայողին կը զրպարտենք, թէ « Շատ կը սիրէ երեւիլ, փառասէր է », իսկ բարձրավճար աշխատողին մասին՝ « Ի՛նչ անձնուէր է »... Աթոռակալը կը բամբասենք մեծ-մեծ բառերով, իսկ իր դիմաց՝ գովասանքներ կը շռայլենք... Տակաւին, արժանաւորը կ'անտեսենք, նոյնիսկ կ'արհամարհենք, երբ որջ է, հազիւ թէ մեռնի՝ լաց ու կոծ կ'ըլլանք: Մենք յստակ տեսնելու, ճիշդ վարուելու եւ ճիշդ գործելու լրջագոյն խնդիր ունինք որոշապէս:

Երան Գույումճեան

ՔԱՌԵԱԿՆԵՐ



Բա՞ռս խոհիս ծնունդ տուաւ,
Թէ՞ խոհերս հըրաշափառ
Թո՞իչք առին, բառեր գտան
Եւ իջան վար իմ գրչիս տակ:

.....



Մեծամիտնե՛ր ամբարտաւան, ձեր աթոռի՛ն ապաւինած,
Պա՛հն է գիտնաք որ աթոռը, դիրք ու պաշտօն ոչի՛նչ արժեն,
Եթէ ՄԱՐԴՆ է ձեր մէջ մեռած, անյուսօրէն կ'աղաղակէ,
Քանզի ՄԱՐԴՆ է որ աթոռին կամ ալ դիրքին կու տայ արժէք:

.....

Ազնիւ հոգին զիս միշտ յուզեց,
Ա՛ն որ մնաց բարի ու վեհ,
Նոյնիսկ ցեխին մէջ ու մուրին
Պահեց ինքզինք միշտ մաքրաջինջ:

.....

Շատ եմ տեսեր սին վայելքներ,
Ոսկի, արծաթ ու պերճանքներ,
Անկեղծ խօսքն է զիս միշտ դիւթեր,
Ժպիտի մը ցոլքն է յուզեր..

.....

Հրճուանքիս մէջ արցունքներ կան,
Տառապանքիս մէջ ծիծաղ կայ,
Կարծես երկուքը ընկեր են,
Անբաժան են միշտ իրարմէ:

.....

Երբ վար դրի գրիչս խոնարհ, լեզու ելաւ ու սաստեց.-
-Դուն իրաւունք չունիս երբեք զիս լքելու սառնօրէն,
Անով պիտի պեղես անկանգ ճշմարիտը քողածածկ,
Ազատութեան բանալի է դեպ' երկինքը վեհասլաց:

.....

Մարդիկ կը տեսնեն ինչ կ'ուզեն տեսնել,
Դիւրաւ խաբելով միշտ իրենք զիրենք,
Յետոյ կ'ափսոսան, բայց դաս չեն քաղեր,
Քանզի միշտ մեղքը ուրիշինըն է:

.....

Եւ սորվեցայ ազնիւ ըլլալ անազնիւէն,
Եւ սորվեցայ արդար ըլլալ անարդարէն,
Անխոհեմէն իմաստութեան դասեր առի,
Անսէր սիրտէն սիրոյ յոյսեր հաւաքեցի:

.....

Տգիտութեան բաւիղներէն լոյս փնտռեցի,
Ամբոխներէն յիմարացած՝ ջահը մտքի,
Եւ ընչաքաղց նիւթապաշտէն՝ անբաւ հոգին,



Մամոնապաշտ դարէն վայրագ՝ ձայնը խղճի:

.....

Ու թէ չըլլար մութ խաւարը, երկինք անաստղ,
Պիտ՝ զիտնայի՞ լոյսի արժէքը պաշտելի,
Թէ չարութեան ծովը չայրէր սիրտս արի,
Պիտ՝ փնտռէի՞ ցոլքը վճիտ լոյս-բարութեան:

.....

Եւ ամէն տեղ կեղծիքն էր խաբեպատիր,
Ես պատռեցի դիմակն անոր լպիրշ ու պիղծ,
Դուրս հանեցի իրաւ դէմքը աստուածատիպ,
Անոր վրայ գուրգուրացի զերթ գանձ անգին:

.....

Թէ մութ ամպերը պատեն իմ հոգին,
Քեզի՛ կը դիմեմ, հայոց պատմութիւն,
Ուր էջերուդ մէջ հայ ՈԳԻՆ արի
Կը պայքարի միշտ, կա՛ մք է անկոտրում:

.....

Աշխարհի պիղծ շուկաներուն, խարդաւանքին,
Կը բարձրանաս հայեացքիս դէմ, սուրբ Արարա՛տ,
Կանչ ես հօր վեհ խոյանքի, անհաս փառքի,
Հին դարերէն նոր դարերը տանող ճամբայ:

.....

Թէ վերջ դնես քու երազիդ, տեսլականիդ,
Կը փոքրանաս որպէս անհատ, որպէս երկիր,
Երազն է որ թելեր կու տայ, թռիչք անծիր
Դէպ՝ Արարատ, խորհուրդը խոր մեր ողջ ազգին:

Երան Գույումճեան